Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

KD
2068
HN 1Z9D C

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

KD 53068

HARVARD
COLLEGE
LIBRARY

Digitized by Google

ՀԵՆՐԻԿՈՍ ԵՒ ՄԱՐԻԱՄ

ԿԱՄ

ԵՐԿՈՒ ՈՐԲԵՐԸ

LES DEUX ORPHELINS

ԲԱՐՈՅԱՎԷՊ

ՅԻԿԻՆ ԲԷՆԻԵԱՐԻ

ՓՈԽԵԱՑ Ի ԳԱՂԳԻԵՐԵՆԷ ԱԶԱՏ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ԷՈՏԷՄԻՇՅԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1870

Digitized by Google

KD 53068
~~OL 44436.37~~
HARVARD UNIVERSITY LIBRARY
APR 16 1959

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի Տ· Տ· ԳԻՐՈՐԳԱՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ· ԵՍԱՅԵԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ· ՊՕԼՍՈՑ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ· ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Digitized by Google



ԱՐՁԱՆ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ

ՆՈՒԻՐԵԱԼ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՄԱՀ ՀՈԳԻՈՅ
ԳՈՐՈՎԱԳՈՒԹ ՄՕՐ ԻՄՈՅ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱՅԻ ԹԱԴԷՈՍԵԱՆ
ԴՍՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԱՅ ՀՈՒԼՓԱՅԵԱՆ

Համանման հեղինակի բարեպաշտիկ գրուածոյս՝
Քեզ արդ մնայ մայր իմ սիրուն, ափուեղ գվաստակ խուն
երկոյս
Թող ի դրանդեաց դամբարանիդ յոր կաիսեցի գայլս ի
ցուք
Ժողովեսցեն մանկունք՝ազգիս փոխան տուեալ մի արտ-
ասուք

ՋՄԻՐՆԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆ՝

1864

Digitized by Google

Digitized by Google

ՀԵՆՐԻԿՈՍ ԵՒ ՄԱՐԻԱՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հենրիկոս եւ Մարիամ կը գտնեն իրենց հայրը։

Ֆրանսուա Լաֆօրէզ՝ արիասիրտ և հաստատաքարոյկն Ալբէսի դաշտը ապառաժի մը վրայ նստած առանձին, գլուխը ձեռքին վրայ յեցեալ, իւր խորին մտածմանց անդնդախոր ծովուն մրրկալից ալիքներէն ելլելու հնար կը փնտռէր։ Վասնի որ աչքերը կիսամեռ երիտասարդ նահատակաց արտասուաց հառանգքներուն վրայ կ'ուղղէր, իր սրտին խորը գթութեան և բարկութեան ներհակակիր պատերազմ մը կը բացուէր։ Հարիւրաւորներ մէկ վայրկենի մէջ մահաբեր գործիքներուն ցասմանն ենթարկուելով, գետինն իրենց մնջնջենաւոր քնարան կ'ընտրէին. և ոմանք իրենց մահագուշակ վէրքերուն որ աշնան անթիւ և անհամար տերեւներուն իրենց ոտներն ու բունը ծածկածին պէս բոլոր մարմիններին պատած էր, օրհասական տաղնապին հետ կը մարտնչէին. զուր տեղը թափելով արտասուաց մարգարտանման կաթիլներն անողոք Ալորովպէին, որ խնայէ իրենց կենայ թելը մկրատելով անգութ գազանաց կուր ընելու։

Այն ինչ ցորեկուան շքեղ լուսաւորն իր վերջին հրաժարականը տալու համար՝ նուաղ ճառագայթները լերանց բարձրաբերձ գագաթներուն վրայ միայն քիչ մը թողուցած, և քիչ առենէն բոլորովին

Digitized by Google

ժողովելով մթնոլորան երեկոյեան սեւաթոյր վարագուրով ծածկելու կը փութար։ «Ո՜հ, կ'ըսէր, մթէ ինչպէս իմ կենացս պատկերը չէ՞, որ ծաղիկ կեանքս հանելով՝ անոր տեղը ուրիշ մը կը յաջորդէ. կենացս ծառը տերեւաթափ ըլլալու վրայ է. գուցէ, ոմն գիտէ, յուսացածէս յառաջարի ընկերներուս պէս իմ կեանցս աստղն ալ ասուպի մը նման յաւիտենականութեան մէջ ընկղմի. բայց ո՞ւր . . . հայրենիքէս եւ ոչիւելի ընտանիքէս հեռու. ա՜հ, դուք սիրելի որդեակք իմ, արդեօք ո՞ւր էք, և ինչ վիճակի մէջ . . .»

Ա՛չքը երկնից շափիւղեայ կամարին, ոսկեփայլ շքեղութեամբ կուսոյ դաշտը ծածկող ձեղունին դարձուցելով. «Ո՛վ ոսրբ և անմահ Լոյս, կ'ըսէր. հայրենեաց սիրոյն համար արիութեամբ կռուող ու ինկող մարտիկներուն վարդագոյն ճառագայթաց հետ, որոնք երկիրն անկողին և երկինքն անշուշտ հրաշալեկերտ աթոռ կ'ընտրեն, ես ալ իմ արիւնս խառնելու համար, վեհերոտութեան տիտղոսը չեմ ուզեր ճակատիս վրայ կրել. բայց . . . ա՜հ. Հենրիկոս և Սարիամ, որոնց սէրը սիրոս գրաւած է. ասոնք են ահա, որ իրենց անյաղթելի խանդակաթ սիրովը զիս երկչոտ և անզօր տղայ կը դարձուցեն։ Բանի որ կը յիշեմ զնրենք, անկարելի կ'ըլլայ որ այս ցաւագին և ողնոնց տեսութեան կարօտէն շանթահար սիրոս արտասուաց ջերմ կաթիլներ հոսելով քիչ մը հանգչի. ա՜հ, սիրոս . . . Տէր իմ. սիրուն զաւակներս գոգցես երկու քովերս առած, իրենց դեռ թոթովախօս լեզուով զիս կը կանչեն. Հայր, հայր, խնայէ՛ քու անձիդ. զի ձեր կեանքը մեզի ունուցանելու համար դեռ սիրոյ աշխատի։ Ստուած իմ, տարածէ՛ քու ամենաբաւական բաղուկդ մեր վրայ. թէպէտ դուն սպասուցան չ'ըլլաս, անշուշտ անդութ բաղդը զիս խոյեալով՝ ինչասպառ դեսինը կը թաւալէ. և դու,

երկիր, մի պատրաստուիր քո գիրկդ ամփոփելու մարդ-մին, մինչեւ ընտանեացս գիրկը չվերադառնամ։

Գիշերը՝ խոնջ և դժբաղդ մարդիկներուն մեծ բաղ-ղի մը պէս մէկու մը սիրտը մտնէ, ալ անոր ծոցը գէշա-գէշ կը պատառէ։ Այսպէս երբ վերջնալուսոյ առաջին ստուերն զգիշերը բերելու սկիզբ կ՚ընէր, Յովանսուա Աֆօրէզ իր վրանը քաշուած կը լսէր իր տաժանա-քիրտ անդամոց հանգիստ տուողքնոյ ստիպիչ ձայնը։

Այց, ով էին Հենրիկոս և Արիամ, և ով Յով-հանսուա Աֆօրէզ. որ նոյն դաշտին վրայ իւր բախ-դին խստութիւնը մեղմելու համար առ Աստուած աղօթելով իր աչքերէն արտասուաց կաթիլներ կը հասեցնէր։

Հարաւային Գերմանիոյ ներսի կողմերը պզտիկ գիւղաքաղաքի մը մէջ համեստ ընտանիք մը երջանիկ ու հանդարտ կեանք կը վարէր։ Այս դերդաստանը կապմող անդամներուն հարուստ չէին. և չէին կրնար վայելել կենաց այն քաղցրութիւնները՝ զորս շատ մարդիկ կը վայելեն առանց Աստուածային նախա-խնամութեան շնորհակալ ըլլալու։ Այց չէր կրնար աղքատ և դժբաղդ ըսուիլ վասն զի մէկը երբէք աղ-քատ չեպուիր՝ երբ պէտք եղած բաներն ունի և գոհ է իր ունեցածովը միայն ստահակ մարդիկնե-րըն են որ իրապէս դժբաղդ կ՚ըլլան։ Այս ընտանիք-քը որուն վրայ կը խօսինք ունէր այն ճշմարիտ գան-ձերը որք են բարեպաշտութիւն, առաքինութիւն, և գոհունակութիւն։

Յովանսուա Աֆօրէզ իր հայրենեաց իրրև զինո-ւոր ծառայած էր օրինաց համեմատ, և իր լաւ ընթ-ացքով և քաջութիւններով յինանապետի պատիւ

Digitized by Google

ընդունած էր պատերազմի դաշտին վրայ։ Ուստի այնշատակաց արժանի պատերազմին ատենները Ֆրանսուա Աֆորէզ դազրնական բանակով յառաջ քաշեց, վասն զի իր իշխանը Նաբոլէոնի դաշնակիցներէն մէկն էր։

Սոսկալի սոսկալի պատերազմին մէջ, Աֆորէզ զօրաց հրամանատարի ժապաւէնները միանգամայն և պատուոյ խաչի նշանը ընկալաւ, որ ան ատեն այնչափ քաջերու կուրծքին վրայ կը փայլէր։

Մինչ սոսկրութիւն ունէր ըսելու, «իմ իշխանս ինձ հրամայեց իր դաշնակիցներուն համար կռուելու, կը պարտաւորիմ հնազանդիլ իբր հաւատարիմ հպատակ և քաջ զինուոր. քաղաքականութիւնն իմ գիտնալու բանը չէ»։

Պատերազմին վերջը Աֆորէզ պատուաւոր վէրքերով պատած՝ սահմանաւոր արձակուրդ մը ընդունելով, իր հայրենիքը դարձաւ։

Ինչպէս իր սիրտը կը բաբախէր՝ երբ հեռուէն կը տեսնուէր իւր քաղաքը, որուն մէջ ծնած էր. իր սրտի յուզմունքը քանի կ'երթար կը զօրանար, անանկ որ ստիպուեցաւ հին կաղնիի մը շուքին տակ նստիլ և ակամայ դառն արցունքներ հոսել իր աչքերէն։ Երկիւղը և յոյսը կը յուզէին իր սիրտը. թէ արդեօք պիտի գտանի իր սիրելի կազակիցը՝ Արդուհին, նոյնպէս իր երկու դեռաբոյս ծաղիկներն Հենրիկոսն և Մարիամը. զորոնք սպիտակած էր հան թող տալ պատերազմի դաշտը աճապարելու ատեն. և թէ՝ պիտի գտանի զանոնք քաջառողջ վիճակի մէջ։ Ինքզինքին ատանկ հարցմունքներ կ'ընէր կաղնիին տակ, անյապաւար իր նայուածքը իւր ծնած ցանկալի քաղքին վրայ սեւեռած։

Ցանկարծ տեղէն ցատկելով իր ճամբորդութեան գաւազանը ձեռքը առած սկսաւ արագ արագ յա-

Digitized by Google

ռաջ տանիլ իր քոյրերը։ Դրեթէ հարիւր քայլ հեռաւ առուի մը քովերը պզտիկ տղայ մը և պզտիկ աղջիկ մը տեսաւ երկուքն ալ դեղեցիկ, որոնք մանուշակ և ասոր նման ծաղիկներու փունջեր ժողվելու և պսակներ հիւսելու կզբաղէին։ Այսր վրայ՝ Յիսուսի օրաւորի սիրտը սկսաւ սաստիկ բաբախել, որովհետեւ իր տղան և աղջիկը այս տղայոց հասակին չափ էին. ոհ, որդեաց իմ՝ սիրուն զաւակներս են, կ'ըսէր։

Այս ըսելով սկսաւ վազել՝ և հասաւ առուին եզերքը. այս օտտրականին յանկարծական ներկայութիւնը, արագ արագ վազքը, իր դէմքն ու զինուորական ձեւը կը սարսափեցնէին զտղայոցը, որոնք թող տալով իրենց ձեռքէն ծաղկի փունջերը, անոր շփոթած դէմքին կը նայէին։

«Ո՞նչ են ձեր անուններդ իմ պզտիկ բարեկամներս, հարցուց անոնց Յիսուսաս սիրալեր դէմքով մը. և անպզուշաբար կոտրելով պզտիկ աղջկան մանչին մեռուսքեաց ժապաւէնը։

—Սիկայ Սուրիամ, և ես Հերինկոս կը կոչուինք պատասխանեց պզտիկ տղան, քիչ մը քաջալերուելով հարցնողին հաճելի ձեւերէն։

—Հենրիկոս և Սուրիամ, պտա ապ օտտրականը, արտասուաց կաթիլ մը իր աչքերուն մէջ փայլելով՝ Ձեր մայրը Սարդուհի կը կոչուի, ձեր հայրը Յիսանոուա Լաֆթրէզ. այնպես չէ՞, յաւելցուց պտտաշարժ ձայնով մը։

—Այո՛, ատոյգ է, կրկնեց Հենրիկոս իր քոյրին բազկացը վրայ թենալով, վասն զի դեռ երկիւղը անոր սրտէն բոլորովին չէր մեղմուած։ Մի վախնար Սուրիամ, բասաւ անոր, այս մարդը վնաս մը ընել չուզեր. կը տեսնէս որ ասիկայ քաջ զինուոր մ'է մեր հօրը պէս, զոր միշտ կը սիրենք. և որուն համար մայրենիս սրդէն յիշեցուց մեզ իր մօտաւոր դարձը. գուցէ այս զօրականը զանի կը ճանչնայ, և իսկ դայ

մեզ աւետելու իրեն բերկրալիր լուրը։

Ֆրանսուա չկրցաւ աղ աւելի համբերել, սեղ մեց էր երկու զաւակները սրտին վրայ, և իր բազկացը մէջ առնելով ծածկեց զանոնք իր հայրական համբոյրներովը. և գոչեց «Ես եմ, ես ձեր հայրը»։

Այս երկու մատաղահասակ տղայք որ երկարատեւ բացակայութենէ մը ետքն յանկարծ իրենց սիրելի հայրը գտնելու բարեբաղդութիւնն ունեցան. աղ կրնան սիրելի ընթերցողք մակաբերել որ նոյն միջոցին Հենրիկոս և Մարիամ ինչ աստիճան ուրախացան։

Լուսոի տղայք՝ իրենց խանդակաթ հօրը փարուած, ուրախական ձայներով օդը կը հնչեցնէին։ Ամէն մէկը հայրերնուն՝ ձեռուընէրն բռնած այնպէս մնան գիւղը. և ճամբան պատահածնուն աւետելով կը գոչէին. «Հաւատիկ, նորէն գտանք մեր սիրելի հայրը, և կը տանենք մեր սիրելի մօրը»։

Այս միջոցիս Վարդուհին, տան հոգեւոր զբաղած՝ լսեց ասոնց ձայնը և դուրս ցատկեց իր հիւղէն, առանց գիտնալու ինչ որ եղած էր։ Մէվ երջանկութիւն . . . ինչ ատեն տեսաւ՝ իր սիրելի ամուսինը երկու որդւոց մէջ տեղն, իր չափազանց ուրախութիւնը քիչ մնաց որ զինքը անզգայ դետինը պիտի թաւալէր. և գունատ ամպ մը իսկոյն ծածկեց երեսը, հաղիւ կարողացաւ արտասանելու այս բառերը. «Ֆրանսուա, իմ սիրելի Ֆրանսուաս»։

Մէկէն ամուսնոյն բազկացը մէջ նետուեցաւ, որն որ խանդակաթ սիրով ընդունեց զանի. և տղայք իրենց մօրը ծնկացը պլլուած՝ ամէնքն անշարժ և լռութեան մէջ. իրենց սրտերն մեծ ցնծութեամբ կը լեցուէին, լեզուները քալլը խօսքեր առաջ բերելու տեղ՝ աչուընէրէն ուրախութեան արցունքներ կը բղխէին։ Նոքը բարեպաշտ Վարդուհին լուութին

ընդմիջելով ձեռքերը դէպ 'ի Աշրկինք, գոչեց, «ով սիրոյ և բարերարու Թեան Աստուած . . . , ինչպէս կարողանամ յայտնելու քեզ՝ իմ ամէն երախտագիտա-կան զգացմունքներս այս երջանիկ վայրկենիս համար. փառք քեզ Աշրկինք, փառք . . . »։

Տղայք նոյնպէս միացուցին ջերմեռանդութեամբ իրենց փափուկ ձեռքերը. ինչպէս սովորութիւն ու-նէին ամէն անգամ այնպէս ընելու երբոր իրենց մօր աղօթելը տեսնէին։ Նոյնպէս Յովհաննուսային սիրտը սաստիկ շարժած, ըսաւ անոնց. «Աշյոն. ամէնքս ալ շնորհակալ ըլլանք Աստուծմէ, վասն զի բոլոր երջան-կութիւն և օրհնութիւն միմիայն անկէ կը շնորհո-ւին մարդոց. և ես մահս ակներեւ կը տեսնէի ամէն վայրկեան ուչքիս առջեւ։ Ահ, ինչ սարսափելի բան էր երկու կողմի թշնամեաց իրարու զարնուելով ինչ-կած ատենին ըրած հեծկլտանքներն, զէնքերուս՝ կը-տրուանքներուն ատաղներու նման օդին մէջ փայլե-լը, և վերջը հարիւրաւոր երիտասարդներ գետինը փռելը. ականներուն պայթիլը, անոնց երբեմն ետ մը-ղուիլը, երբեմն ալ մղելը . . . ահ ան ինչ սոսկալի տեսարան էր, երբ արիասիրտ զինուորականները մերկ թուրը ձեռուընին, յառաջ քալեցէք, մի վհա-տիք, հայրենեաց պատուոյն համար է, կը պոռային։

Ալ բաւական է, կ'աղաչեմք հայր, ըսին տղայք. վերջացուցէք ձեր աղեկէզ պատմութիւնը. «իսկ ես, կրկնեց Յովհաննուա, կրկին էր իմ վիշտս. պատա-քին վէրքերս այնչափ չէին ազդեր, որչափ ձեր կա-րօտութենէ բացուած ներքի վէրքերս. փառք Աստ-խախնամութեան որ ըսեց ուստաստուալից աղաչանաց-եթէ ինքն պաշտպան ջըլլար, անշուշտ անգութ բռնա-դը զիս կերակուր ըրած էր գիշակեր գազաններուն։

Վերջապէս այս չորս բաղդաւոր արարածները՝ մը-ռան իրենց հիւղին մէջ. ուր որ չքաւորութիւնը

Digitized by Google

կը տիրէր. բայց կարգաւորութեամբն ու մաքրութեամբը բարեկարգ տեղք մի կ'ընծայէր։

Ժամադրդ Պարդուհիս, ըսաւ ան առեն Յովանուս. իմ բացակայութեանս առեն՝ անշուշտ շատ վիշտեր կրեցիք, մանաւանդ այս գաւառներուն մէջ։ Բ Շնորհքի դործ դրին իրենց անողորմ աւերմունքները. բայց աշխատութեամբ ամեն բան կը պակի. երջանիկ եմ ձեզի վերստին տղջ և առողջ դտնելս համար, նոյնպէս եսալ առողջ եմ և ձեզի համար աշխատելու մեշտ պատրաստ. շուտ մը Աստուծոյ օգնութիւնով մեր պրսիկ դործերը ձեռք առնունք. լաւ հնարագիտութեամբ արօրադրելու և մանդաղ դործածելու եղանակը դիտեմ։ Յօժարութիւնը և փոյթեռանդն աշխատութիւնը՝ աւելի աղէկ է քանթէ ծուլութեամբ ձեռք բերուած դանձը։

Յիրաւի մէկ տարուան միջոցին մէջ Յովանուսայի հիւղը զարդարուեցաւ կահ կարասիքներով և ընտիր անօթներով. իւր չափաւորութենէ և խնայողութենէ յառաջ եկած արդիւնքներէն ուրիշ զանազան բաներ կը դնէր. և իրեն աշխատութիւնը կը բաւէր տան բոլոր ծախքերուն։ Ծերունի պինուորը յառաջուան պէս մշակ եղած էր, հարուստ վարձակալները զինքը մեծ հաճութեամբ կը դործածէին. վասն զի վստահ էին որ իրեն յանձնուած դործը եռանդեամբ և խղճի մտօք պիտի կատարէր, և իր օրինակը կը քաջալերէր ուրիշ օրական վարձուորները։

Կիրակի օրերը՝ իր զինուորական նշանագդեստը կը հագնէր, դեռ խիստ մաքուր. և վրան կը կրէր ապացութեան պատուոյ խաչը. անտառեն ամեն մարդ անոր ակնածական յարգանք կը մատուցանէր. իրենց քաղաքապետը զանիկայ Տէր Պաշտօնական կը կոչէր. և շատ անգամ Պ. քաղաքապետը վարձուոր Յովանուսային հետ մէկտեղ գինւոյ ըմպանակներ կը պարբ-

ոչէր, և անոր կ'ըսէր. «Ձեր կենդանութեանը, Տէր Գաշտոնակալ». ասիկայ կը զուարճացնէր ազնիւ Ֆրանսուան. և շատ կը նպաստեր գիւղին բնակչաց առջեւ զանի պատուաւոր ընծայելու։

Բայց հասարակ օրերը աշխատութեան մէջ գործաւորի զգեստ հագնելը՝ Ֆրանսուա երբէք նոխտոտինք չէր սեպեր իրեն և խոնարհութեամբ յանձնառու կ'ըլլար տաժանելի աշխատութիւններու։ «Երբէք աշխատութիւնը անպատիւ չընէր մէկը կը սէր՝ ընդ հակառակն անոր պատիւ կը բերէ. մանաւանդ իմ աղնուութիւնս կողակցիս և իմ սիրելի տղայոցս պիտոյիցը համար չէ՞ որ կ'աշխատիմ»։ Ֆենրիկոս և Պարիսամ ալ թէպէտ դեռաբոյս տղոց մէջ անգործ չէին իրենց կողմէն։ Բրդէն քաջ գիտէին որ այս երկու մոլութիւնները՝ ծուլութիւնն ու աղտութիւնը, յառաջ կը բերեն բոլոր զզուելի պակասութիւնները. և խիստ երջանիկ էին իրենց ծնողաց օգնել կրնալնուն համար։ Քրիստոնէական վարդապետութենէ և դպրոցէ դարցած ատենին՝ ուր անպակաս կը յաճախէին, կը վազէին գործ մը խնդրելու իրենց մօրմէն. և անոնց յարմար գործ միշտ անպակաս էր։ Երբեմն զանոնք մերձակայ անտառին մէջէն՝ այրելու համար թուփեր ժողվելու կը ղրկէր (որ տեղւոյն բնակչաց սովորութիւնն էր). երբեմն ալ կ'ղրկէին գէշ խոտերը խլելու զգուշիկ պարտէզին մէջ պարունակուած տունկերուն ու բանջարեղէններուն մէջէն. ուստի այսպէս իրենց պարապ ժամերը՝ իրենց ծնողաց օգուտկար ըլլալու կուտային։ Շուն իրենց ուրիշ զբաղմունքներ կ'ընծայէր ցոլբեններուն ժողվելու։ Խարեպաշտ ու ազնիւ մշակներն՝ Աստուծոյ ու աղքատներուն վրայ մտածելով, խնամք կը տանէին հայթայթելու կարօտելոց բաժինը։ Ան ատեն տղայք մէյմէկ քսակ հարեցին, միատեղ կերթա-

յին հասկաքաղ ընելու, կարծես Աստուած ալ կամենաղով ձեռնտու ըլլայ փոքրիկ հասկաքաղնեբուն, հունձքէն ետքը գետինը մնացած հասկերը մեծ և լիալիր էին։ Գիւղացիք ասոնց ուրախ և բարեպաշտ աչքով կը նայէին. «Կերեւի, կ'ըսէին. որ Աստուած կ'օգնէ աղքատներուն. լաւ, նոյնպէս օգնենք մենք ալ.» և Թող կուտային որ գետինը մասմը հասկեր իյնան։

Ամէն տարի այս երկու տղայք այսպէս կը բերէին առունը բաւական հունտի լաւ պաշարներ. վասն զի յաժարակամ կը խոնարհէին գետինը Թէ փոքրիկ և Թէ ընցուն հասկերը ժողվելու համար, և ետ կը դառնային իրենց քսակը ընցուն։ Արշալոյսի ակորժահամ կը Թուէր այն հացը զոր իրենց մայրը այս մեծ աշխատութեամբ ժողվուած հասկին ալիւրով կը գործէր։ Այն, արդարեւ անիկայ բոլոր աշխարհիս ազնիւ խմորեղէններէն աւելի գերազանց էր։

Յաւելունք ըսելու նաեւ իրենց կերակրոյ մէջ ունեցած պարկեշտութիւնը. այս աղքատ ընտանեաց անդամներն՝ երջանիկ և գոհ սրտիւ սեղան նստելէն և ելլելէն յառաջ կ'օրհնէին և շնորհակալ կ'ըլլային Աստուծմէ, զիրենք կերակրելուն համար։ Այս պզտիկ պարտաւորութիւնը՝ խիստ յանցաւոր ապերախտութիւն մի է նախախնամութեան առջեւ։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Բ.

Դժբաղդութիւն տղայոց.

Երբ երկու տարին իւր շրջանը հազիւ լրացուցած էր իրենց տուն դառնալուն, յորս աշխատութեամբ խիստ երջանիկ տարեցան, Երկինք ղանոնք փորձելու համար ցաւալի դիպուած մը խառրեց։ Ուստու մը երբ արեգակը իր տուընջեան ոսկեձոյլ դռները բանալու կուգար, հայրերնին իւր սովորութեանն համեմատ մշակի մը տուն աշխատելու գնաց. իսկ քանի մը ժամ ետքը՝ պատգարակով մը տուն բերուեցաւ, թալկացած և դոյնը խոյս տուած և վրան արեամբ ներկուած։

"Մի վախնաք, Վարդուհի, ըսին պատգարակը բերող երկու մարդերը, դիպուած մը պատահեցաւ ձեր ամուսնոյն, բայց, փառք Աստուծոյ, դեռ կենդանի է"։

Աղնիւ Վարդուհին կարծես թէ շանթահարեալ չկրցաւ պատասխանել երբ տեսաւ իր սիրելի Յովանսուան որ հազիւ կրնար շունչ առնուլ, հեկեկախառն արտասուօք պոռաց. "ով Տէր երկնի, ինչ դէպք որ . . . աւաղ . . ."։

"Կատաղի ձի մը, զոր Յովանսուան՝ Արաջախտին տունը կը տանէր այնպէս տակալի աքսայ մը տուաւ կուրծքին, որ նոյն վայրկենին գետինն ինկաւ արիւն փսխելով, առանց մէկ բառ մը արտասանելու։ Արաջախտը վերաբերեալ մը մնտուռելու ելաւ մօտ տեղերը, բայց մենք զայն ձեզի բերինք, ինչու որ այն ձեզմէ աղէկ մէկը պիտի չգտնայ զինքը խնամելու"։

Այսպէս խօսեցաւ վերաւորեալը բերողներեն մէկը. Արդէն աղնիւ Վարդուհին քաջալերով կը շփեր

Digitized by Google

իր երկան քաւնքը, բայց ձեռքերը կը դողար և իր սիրտը ուժգին կը զարնէր։ Շուտ մը Ֆրանսուա բացաւ աչուքները և առաջին տեսածը իւր սիրելի կողակիցն եղաւ. բայց անկարող դեռ խօսելու. «Ֆրանսուա, իմ սիրելի ամուսին, ի՞նչպէս էք» հարցուց, անոր պաղ ու ուռած ձեռուքներն իր կուրծքին վրայ սեղմելով. անիկայ դառն վշտաց մէջ ընկղմած՝ աչքերը դէպ ի երկինք վերցուցելով, հառաչանք մը ըրաւ միմիայն իւր պատասխանը։

Լոկոյն իր բարեկամները, դրացիները լեցուեցան հիւանդին մէջ. վասն զի բոլորն ալ կը ջանային այս ուրախնի գերդաստանին օգնելու. բայց այս միջոցիս մէկը չէր կրնար անոր բան մը ընել։ Հենրիկոս և Մարիամ արձակուեցան դպրոցէն, արդէն իրենց ականջը հասած էր հայրերնուն դժբաղդ լուրը։ Ի՞նչպէս կարելի է նկարագրել այս տղայոց վիշտերը և յուսահատական աղաղակները. երբ տեսան իրենց սիրելի հայրը՝ այս ցաւալի վիճակին մէջ, զանիկայ արդէն մեռած կարծելով, դառնապէս կ'ողբային ողբաստաճիկ ձայներով. երկուքն ալ կ'ուզէին իրենց սիրելի հօրը հետ մեռնիլ։ Այս սրտաշարժ տեսարանը՝ այն աստիճան ազդեցութիւն ըրաւ բոլոր հոն եղողներուն, որ ամէնքն ալ աչքերնէն արտասուաց հեղեղներ դուրս կը թափէին։

Դրեթէ մէկ ժամ անցած էր՝ մարգիսխատը վիրաբուժին հետ եկաւ, որ պատկառելի ծերունի մը էր և իւր արհեստին մէջ խիստ ճարտար. խնդրեց որ թող տրուի իրեն հիւանդին քով առանձնանալու։ Լոկոյն ամէնն ալ հնազանդելով դուրս ելան։ Վերքը բացաւ և զգուշութեամբ քննեց, և բոլոր կարելի եղած դարմաններն ի գործ դրաւ. այս վիրահատական փորձը կ'երեւար թէ դժբաղդ Ֆրանսուային՝ աստիճան վիշտեր զգալու պատճառ կ'ըլլար. վասն զի

Digitized by Google

ջղաձգական շարժումներ ունեցաւ, և ուղեց շատ անգամ մէկդի տանել վիրաբուժին ձեռքը։ Նիկայ ցնցեց գլուխն. որ դողացուց գործավարը Վարդուհին, որով սիրտը շարժելով՝ ներքին ցաւոց սուրը սիրտը թափանցեց։

Վրան սպեղանի դրաւ վիրաբոյժը և խիստ հանդարտութիւն պատուիրեց. խոստացաւ քանի մը ժամէն վերստին գալու, միանդամայն իրեն իմաց տալ՝ թէ որ դէշ նշաններ երեւնան։ Այն ատեն Վարդուհին ընկերանալով անոր՝ մինչեւ փողոցին դուռը, հարցուց դողդոջուն ձայնով մը թէ՝ վտանգը մեծ էր։ Իսկ անիկայ ձեռքը սեղմելով հեռացաւ առանց բերանը բանալու։ Այն ատեն հասկցաւ ալիւր դրժբաղդութիւնը. ուստի արտասուօք ծունկի վրայ խնալով տանը մէկ խորշին մէջ, և դողդոջուն ձեռքերն երկինք վերցուցած՝ կ'աղօթէր, և Հզօրին կամացը կը յանձնէր ամէն բան ըսելով. "Հայր Երկնաւոր, քու կամքդ ըլլայ և ոչ իմ. քու որոշմանդ դէմ չեմ կրնար դանգատիլ միայն թէ՝ շնորհք ըրէք ինձ համբերելու զօրութիւնը դառն փորձի մը համար»։ Աղեւս շատ արտասուչ խօսքեր. մինչ կը մրմնջէր՝ ամուսնոյն առանձնութիւնը սթափեցուց զինքը։

Երբ ապա դարձաւ դէպ 'ի Գրանսուային պառկած տեղը, որուն քով տեսաւ իր երկու զաւակները ոտքի վրայ շփոթած ու գոյներնին նետած։ Այն վայրկենին որ հիւղին սեմը ոտք կը դնէր, իր ամուսնոյն վրայ շարժմունք մ' երեւեցաւ, որ նոր ձեռքերը կուրծքին վրայ ոլորելով՝ ակամայ կը մրցէր մահուան անձկութեանց հետ. յանկարծ արեան հեղեղ մը բերնէն վազեց, և մահն իր անողորմ ճիրաններով անզգայ բրած իր ոլորը, յաւիտենականութեան գիրկը ձգելու կ'աշխատէր։

"Հենրիկոս, վազէ՛ վիրաբուժին, ըսաւ Վարդու-

Digitized by Google

հին ողորմելի ձայնովմը, վայրէ, որ եռեւէն հանելու, հեռու պիտի չըլլայ ասկէ ։ Հենրիկոս հնազանդեցաւ. և քանի մը վայրկենէն եռքը բժշկին հետ մէկտեղ երեւեցաւ ։

Հաւատիկ ասոր համար երկիւղով պաշտօրուած էին, ըսաւ բժիշկը և ինչպէս որ կը կարծէի՝ երակնէրն մին կոտրած է։ Լաստի ինքզինքնուդ եկէք, տիրելի տիկին, և մտածեցէք որ ձեր զաւակներն հարկաւորութիւն պիտի ունենան իրենց մօրը ։

Յաւելի վնաս. Պարդուհին՝ ոչ միայն չը կարողացաւ պատասխանել, այլ և իր երեսը նսեմաստուներ ամպ մը ծածկելով վարդագոյն այտերը տժգունիլ սկսան. և սատիկ ցաւ մը օձի նման սիրտին մէջ սողալով, անոր ծոցը պատռելով դուրս ելլել կը ջանար ։ Խսկոյն լանջացը վրայ հանգչեցուց Հենրիկոսը և Պարիամը, և իր հեկեկախառն արտասուաց բիւր կաթիլները խառնելով այս ողորմելի տղայոց ջերմ արտասուաց հետ, կ'ընծայէր առ Աստուած և առ Յիսուսանոսրը կոյն Պարիամ, որպէս զի եթէ կարելի է՝ անցնի այս դժնդակ մահուան ժամը, որ մերձ էր տիրելու իւր աղնիւ Յիրանուսային վրայ ։ Իւ անոր մահն անշուշտ զիրենք վերստին պիտի գահավիժէր աղքատութեան յատակը . . . ։

Բժիշկը, ձեռքը հիւանդին երակաց վրայ դնելով անոր շարժումները մտադրութեամբ կը դիտէր. որոնոր ծանրաշարժ ժամացուցի մը նման խիստ համր կը զարնէր և կամաց կամաց զինքը կենաց սահմանէն կը հեռացնէր ։ Յանկարծ հիւանդը՝ ինքզինքին եկաւ. և իւր տառապեալ աչքերը իրեն զաւակունքն ու իր կողակիցը կը փնտռէին, և անոնց անանկ շփոթած կենալը տեսնելով՝ ինքը դոհ երեւեցաւ, եւ երկնային ուրախութեան ճառագայթ մը անցաւ փայլակի նման իր ոգեվար երեսին վրայէն ։

Digitized by Google

«Շատ աղէկ, ըսաւ մարած ձայնով մը կողակցին ասոնք քեզի սիրտ մնան. չխոտորիք երբէք ձեր երկնաւոր Հօրը շաւղէն. մոքերնիդ բերէք ինչ, ամպիտի չլլամ ձեզի հետ . . . մնա՛ք բարեաւ . . .»։

Ուղեց դեռ եւս խօսիլ, բայց իւր սրտկոնքները ձայն մ՚ անգամ հանելու սիժ չունէին, դրաւ դարձեալ գլուխը բարձին վրայ, անգամ մ՚ալ դարձուց աչքերն իր ընտանեացը վրայ անպատմելի սիրով մը, որ իր ուրախութեանը մասնակից և տրտմութեան ժամանակ երկինքէն յուղարկուած իբրեւ միխթարիչ հրեշտակ մը եղած էին. ուստի խորին հառաչանք մ՚ ալ արձակեց և գոցեց աչքերը յաւիտենականութեան մէջ բանալու. և դադրեցաւ տագնապէ։

Ան ատեն սաստիկ և տխուր լռութիւն մը թագաւորեց պղտիկ հիւղին մէջ, տղայոց հեկեկանքներէն զատ ուրիշ բան չէր լսուեր. որոնք իրենց մեծ կորուստին վրայ երկբայելով անանկ կը կարծէին որ իրենց հայրը նուաղած է։ Ժիշկն, առաքինի Յովհաննէսեանին գլխուն վրայ ծռելով ականջ դրաւ անոր շնչառութիւնը լսելու. յետոյ ըսաւ Վարդուհուոյն «Տղայքները այս սենեակէն դուրս տարէք, սիրելի տիկին»։ Հնազանդեցաւ, բայց շատ մը նորէն մեռելոյն անկողնոյն քով եկաւ, ուզելով որ իրմէն զատ ուրիշ ձեռք մը իրեն սիրելի ամուսնոյն վերջին պարտաւորութիւնները չկատարէ. ու գոցեց անոր աչքերը։ Ան կարեւոր ոյժը ղոր Աստուծմէ խնդրած էր երբէք իրմէն չմերժեց։

Պատկառելի բժիշկը, ցաւով կարեկից ըլլալով այրեայն՝ ու գովելով իր բարեպաշտութիւնը, միխթարութեան ձեռք կարկառելով հեռացաւ անկէ. այնուհետեւ իրեն օգնութիւններն անօգուտ էին։ Երկու տղայքներն ալ տան մէկ անկիւնը քաշուած դանելով, խոհեմութեամբ անոնց խնայուց իրենց

կորուստին մեծութիւնը և աղաչեց չվշտացուցանել իրենց մօրը սիրտը աղիողորմ ձայներով. և տունէն դուրս գաղտուկ տեղ մը երթան լան, անոնք ալ ըստ որում հեղ և խոհեմ էին՝ սիրով ունկնդիր ըլլալ խոստացան։

Իսկոյն երկուքն ալ եկան նստան՝ պղտիկ այծատերեւի կամարաձեւ ճիւղերուն տակը, զոր հայրերնին տնկած էր իրենց համար պարտիզին ներսի դին, և հոն ժամերով արցունք թափեցին։ Ինքը Մարիամ, որ երկու տարի իր եղբօրմէն մեծ էր, ըսաւ անոր։

«Այժմ, մեր մայրը մեղմէ զատ ուրիշ մխիթարութիւն չունի երկրիս վրայ, հետեւաբար մենք ալ կը պարտաւորինք խոհեմ ըլլալ և միշտ հնազանդ։

—Ա՛հ, այո՛, սիրելի քոյրս, պատասխանեց Հենրիկոս պատասուպին, ասկէ ետքը կը պարտաւորինք այդպէս վարուիլ, և անմիջապէս իր հրամանները կատարել, իրեն թեթեւ վիշտ մը անգամ չպատճառելու համար։

Այս բարեպաշտական որոշմունքներով քիչ մը հանդարտեցան. վասն զի բարեպաշտ որոշումմ՝ այս կենաց տաժանելի նեղութիւններուն ու վիշտերուն մէջ մեղմացուցիչ սպեղանի մ'է։

Ընկիւ Ֆրանսուային՝ յուղարկաւորութեան հանդէսը՝ շատ փառաւորութեամբ կատարուեցաւ և արժանաւոր պատուով թաղուեցաւ։ Քաղաքին բոլոր բնակիչները կ'ըսէին. «Ընկիւ քաջ մարդ մ'էր, բարի քրիստոնեայ, ազնիւ ամուսին ու գորովագութ հայր. երանի՜ թէ մեր մահուանէն ետքն ալ այսչափ խօսքեր ըսուցեն մեզի համար»։

Իր դագաղին վրայ պատուոյ խաչն, ու իրեն սուրը կը շողար։ Ներձակայ գիւղերէն շատ հին զօրականներ եկան ներկայ գտնուելու անոր յուղարկաւորութեան։

Digitized by Google

կաւորութեան հանդէսին. հրացաններ պարպեցին իր գերեզմանին վրայ պատերազմականներու սովորութեանց համաձայն։ Ի՛նչ քաղքին բնակիչներն իրենց կողմէն սեաւ խաչ մը կանգնեցին՝ վրան ճերմակ գրերով գրուած, այս աւաքինի մարդուն անունը ու պատուոյ աստիճանը։

Ահ. հիմայ ոչչափ առանձին ու տխուր կ'երեւէր խեղճ Վարդուհուն տիւղը։ Ընչուները կարմրցած էին թափած արտասուքէն. և երկու տղայքներն ալ նոյն ատենէն որբ մնացին։

Յովհաննուային տխուր դամբանին վրայ ագոյ խաչը կանգնած օրուան իրիկունը, Վարդուհին գնաց իր փոքրիկ պարտէզը՝ քանի մը վարդի ոստեր կտրելով պսակ մը շինեց. ու իր տղայքներովը մէկտեղ գերեզմանատուն գնային։

Սիկոյ Յուլիս ամսոյ դեղեցիկ գիշեր մ' էր, որ լուսինը՝ իր արծաթաձաձանչ լուսովն երկնից կամարին վրայ շողալու սկսած ըլլալով, այս գործողութեանն ատեն իրենց շատ օգնեց, որոնք առանց աշխատութեան գտան անոր դամբանը, որուն մէջ իրենց ուիրելոյն մարմինը ամփոփուած էր։ Վարդուհին ու իր տղայքը ծունկի վրայ եկան նոյն բլրոյն վրայ, երկայն ատեն լռութեամբ աղօթեցին։ Ի՛նչ ապա ոսք ելլելով Վարդուհին իր աչուքներէն թափուած արտասուքով թրջուած վարդեայ պսակը՝ կախեց խաչին թեւերէն. և սեղմեց իր երկու զաւակներն իր մայրական սրտին վրայ, ու ըսաւ։

"Խոստացէ՛ք ինձ, հոս ձեր հօրը դամբանին վրայ, խոստացէ՛ք ինձ խոհեմ և բարեպաշտ ըլլալու, ինչպէս ինքն էր, և միշտ Աստուծոյ շաւղին մէջ ըլլալու »։

Ձկրցաւ աւելի խօսելու. վասն զի արտասուաց հեղեղ մը ընդմիջեց իր ձայնը։ Հենրիկոս և Ադրի-

ամ իրենց ամենասիրելի մարը գիրկը խնալով, խոստման անոր հաստատապէս միշտ պարկեշտ և բարեբարոյ ըլլալ։

Աստուած լսեց անոնց՝ իւր երկնային ամուռէն, ու պարգեւեց անոնց շնորհք ու զօրութիւն, անկեղծութեամբ պահելու համար իրենց խոստմունքը։

Շատ ատենէն ետքն ալ, իրենց տարիքը բաւական առած ըլլալով՝ դեռ չէին մոռցած այս սրբազան այցելութիւնն իրենց հօրը դամբանին. և այս քաղցր յիշատակը կը զօրացնէր զիրենք իրենց առաքինի որոշմանց մէջ. վասն զի այս տեսակ յիշատակներն ու տպաւորութիւնները դիւրաւ չեն եղծանիր յիշողութենէն։

ԳԼՈՒԽ Գ.

Զու. իրենց հայրենի գիւղէն

Ֆրանսուային յուզարկաւորութեան հանդէսը՝ շատ սուղի նստաւ, բան մ'ալ չէր մնացած հիւղին մէջ։ Պէտք եղաւ քիչ ատենէն ետքը՝ նորէն գնուած կահ կարասիքը ծախու հանել, վասն զի ձեռքերնին բան մը չունէին, որով հոգալ կարենան իրենց կարեւոր ծախքերը։ Պարդուհին ընկճուած այս սոսկալի հարուածէն՝ վանդաւոր հիւանդութեան մէջ ինկաւ, անանկ որ վիրաբոյժը չհամարձակելով զիրենք համոզեց որ քաղքէն ճարտար բժիշկ մը բերել տան։ Շատի կը նստէին բժիշկն ու դեղերը, այնպէս որ չէր կրնար առանց սոսկալու մը տածել իր ապառնին, և որքան նախատեսութիւնն աւելի հեռուն կը թափանցէր՝ այնքան վարագոյրը կը հաստնար և կը մթնար։

Digitized by Google

Յիրաւի, իր բարեսիրտ դրացիներն իրենց պարտք մը սեպած էին աղջոյց կերակուրներն իրենց տուներնէն բերել. հաւնս Պարդուհին քիչ մը ուժը վրան եկած՝ և սկսած էր իր սովորական աշխատութիւնները ձեռք առնուլ, ստէպ ու տսկալի փոթորիկներ տեղի ունեցան, և որուն յաջորդեց անընդհատ յորդ անձրեւներ, որ իր աշխատելուն մեծ արգելք կ'ըլլային, այնպէս որ մերձակայ գետերը կոխեց, գիշեր մը մանաւանդ ջուրերը սրտաքոյ կարգի բարձրացան այնպիսի արագութեամբ, որ այս գիւղաքաղաքը բոլորովին ողողեց։ Այս քանի մը ժամուան միջոցին ջուրը բոլոր գետնին երեսը ծածկեց նոյնպէս բոլոր տուներուն գետնայարկին հետ մէկտեղ. և տարաւ բոլոր հունձքերը, որջառ ու խաշինք, և պատուհանները։ Այսիկայ դէպ 'ի կէս գիշերի ատենները տեղի ունեցաւ որ ատեն ամեն մարդ անոյշ քնոյ մէջ էր. և տխուր գիշեր մ' էր, որ ահարկու լուութիւն մը բոլոր այս տեղուանքը պատեր էր. Թանձրախիտ ամպեր մթնոլորտն առաւել զարհուրելի ընելու համար, իրարու վրայ դիզուած, բոլորովին անհետացուցած էին արծաթափայլ լուսինը. որն որ գիշերն՝ իր մօրը ծոցէն ելլելու ատեն շքեղադէմ Պալիպսէինման՝ անմկարագելի վսեմութիւն մը կ'աւելցնէր Երկնից կամարին վրայ, և իբրեւ հրամանատար մը իր բանակին գլուխն անցած յաղաղ կ'երթար Արեւելքէն դէպ 'ի Արեւմուտք։

Բոլոր թռչուններն, ողուններն, ու զանազան կենդանիքբնութեան բարկութեանը զոհ ըլլալու հաւմար՝ սահմռկելով իրենց բնակարանը քաշուած էին. ոչ գորտերուն կուկուալը, ոչ բուերուն վայնասունը և ոչ ալ գիշերային ճպռան երգը կը լսուէր . . . . Իսկ արարածոց գերագոյնը . . . ամեն հասակի անձինք խոյս տուած էին 'ի սկզբան, որ բնութիւնը

իր սպառնալեաց կայծակները սահեցնէ ամէն կողմը և դուրս տայ իր բարկութեան որոտմունքները։ Բաղցրիկ հողմն ու հեզաշունչ զեփիւռը բոլորովին հեռացեր էին այս սահմաններէն, ու անոնց տեղն յաջորդած էին ահռելի հովերը։ Օդփանքներուն մրմունջը որ իրեն անցնելու արգելք ըլլոներուն դէմ կը մռընչէին, առիթ եղաւ դժբաղդ բնակիչները սոսկումով քունէն արթնցուցնելու. և ամէն մէկն սկսան վազել իրենց տղայոց ապաստանարան մը գտնելու տան վերնայարկներն ու մինչեւ տանիքներուն վրայ. և ատեն ատեն փայլակին աղօտ լուսով՝ օրորոցներուն մէջ հեղեղով յափշտակուած անմեղ մանկիկներուն անցնիլը կը նշմարուէր։ Արդիկ իրենց ընտանիքը թող տուած նաւ փնտռելու գացած էին. այս արտաքոյ կարգի վտանգին մէջ՝ ամեն անհատ իրենը կը հոգար. Ֆրանսուան՝ ալ չկար հոն, որ իր ընտանիքն ազատելու հոգ տանի։ Սակայն Աստուած ներկայ է ամէն տեղ, և կը հսկէ իւր արարածներուն մանաւանդ անոնց որոնք հաստատ յուսով իրեն ապաւինած են։

Այն ինչ յորձանքն ահագին գոռումով հէք այրոյն սենեկին դրան բախելով, և բացուած ճեղքերէն ներս թափանցող ջուրերուն սարսափեցուցիչ ձայներէն՝ արթնցաւ Արդուհին, և տեսնելով վտանգին ահագնութիւնը, մէկէն անկողնէն վար ցատկեց և շտապաւ պէտք եղած հանդերձները ժողվելով տղայքները բազկայը վրայ առած զանոնք վերնայարկը փոխադրեց և հոն հաղիւ կարող եղաւ հագուեցնելու քանի մը րոպէէն. այնպէս որ ալ չէնքն ակամայ կը մրցէր ջուրերու զօրութեան դէմ որ անձնատուր չըլլայ. բայց՝ ի զուր, վասն զի ջուրը շարունակ կ՚աճէր քանակութեամբ. և կը բարձրանար։ Փոթորիկն ալ իւր կողմէն անգործ չէր, զայն իւր զօ-

Digitized by Google

րութեան խաղալիկ ըրած ստէպ քշելով վանդը կշտապէր. մէկ կողմէն ալ զանգակին տխուր ձայնը որ բնակիչները արթնցուցնելու կը ծառայէր, շանթընկեց որոտմանց և փոթորկին ձայներուն միացած աւելի ահռելիք կ'ընծայէր ականջներուն՝ մահուան հրեշտակի մը հրաւէրին նման։ Այս միջոցիս ողբ մեկեաց բնակարանը կ'սկսէր տատանիլ եղեգի մը պէս։ Մինչ այս մինչ այն վտանգը կը ծանրանար, և խեղդամահ պիտի ըլլային միւս բնակչաց մեծ մասին պէս։ Ուստի շուարեալ, գոչեց, դժբաղդ մայր և ողորմելի տղայք... այսպէս, զոհ պիտի ըլլաք ջրոց բերանը...։ Այս ըսելով աչուընները երկինք վերուցած սկսաւ արտասուս հեղլով միտիթարուիլ։

Մէկէն սթափեցաւ Վարդուհին՝ մերձենալով վերնայարկի լուսամուտին, և նախկին փորձէն անյաջողակ, բայց դժ տուաւ մայրական գուրթը իր տկար ձայնին դարձեալ օգնութիւն կանչելու. բայց 'ի զուր, վասն զի փոթորկին ահռելի շաչիւններն 'ի դերեւ կը հանէին իր աղիողորմ աղաղակները. և ոչ ալ մէկը կարող էր անոնց բարերարութեան ձեռք կարկառելու։ Այսու ամենայնիւ, նախախնամութեան անհուն գթութիւնն յիշելով՝ անմիսիթար սիրտը յուսով ամրացուց։ Աղօթենք, զաւակներս ըսաւ բարեպաշտ մայրը, ահաւասիկ մեր վերջին վայրկեանը, յանձնենք զմեզ Արարչին կամացը, դուցէ ազատութեան մէկ հնարք մը մտքերնիս բերէ։

Գոգցես հրեշտակ մ'էր որ կ'աղօթէր. ամէն մէկ շարժմունքները՝ բարեպաշտութեան պատկեր մը կը ներկայացնէր, և իր ուժաթափ բազուկներն Երկինք բարձրացուցած ատեն, տղայք ալ իրենց դողդոջուն ձեռուընեն անոր կը յարմարցնէին. և անոր աղօթքներուն ձայնակից եղած՝ սրտաբուղխ հառաչանքով և բիւր արտասուաց կաթիլներով սկսաւ ըսել։

Digitized by Google

«Ով անսահման Հայր բարութեան. և Հեղինակ ողորմութեան. որ երկինքն ես և միանգամայն ամէն տեղ. քու ամենաբաւական բազկացդ զօրութիւնը՝ ամէն տեղ կաղդէ, թէ որ կամենաս...։ Ինչպէս ծովուն անդունդին մէջ, կետին փորը՝ իր անհնազանդութեան զոհ եղած Արգտրէին ձայնը լսեցիր, և զինքն ազատիր մթութենէն հանելով վերջապէս խաղաղութեան լուսոյ մէջ դրիր։ Ահա, Տէր, քու հզօր ձեռքդ մեր վրայ ալ տարածէ. և մի թողուր տարաժամ մահուամբ՝ անողորմ հեղեղին ալեացը մատնուիլ. մանաւանդ գթա այս անմեղ մանկանց վրայ, որ իրենց կենաց արեւը մահուան և վշտաց մէջ տեսան»։ Ուեռ եւս շարունակել կ'ուզեր, բայց ո՛... հին յիշատակ մը իր սրտին մէջ դառնութիւն հեղլով՝ արգիլեց իր ձայնը. և մեկէն իր ողորմելի աղաչքները արտասուք թրջելէն ետեւ սեղմեց իր կուրծքին վրայ, և նուաղած գետինը ինկաւ, և մահաստուերը ամպ մը գրաւեց անոր շնորհագեղ դէմքը. մինչ ղի մեռած կը կարծուէր։

Յանկարծ լսեց իր խոր թմրութեան մէջ հիւղին վերէն 'ի վայր Ճայթիլը, և անոր երերիլը զգաց. մէկ վայրկենի մէջ գրեթէ խախուտ շէնքը հիմն 'ի վեր պիտի տապալէր, և դժբաղդ ընտանիքը պիտի կորսուէր. բայց բարեպաշտ Արգտուհին՝ ուզեց քրիստոնէավայել կերպով մեռնիլ, ուստի իրեն և իր զաւակացը մահուան դող մը շրջապատած սկսան եռանդեամբ հոգեվարայ աղօթքներ ընել, և ինքզինքին կը պատրաստէին Աստուծոյ առջեւ ելլելու. բայց ահաւասիկ ձայն մը իրենց կը կանչէ. «Արգուհի, Հենրիկոս, Արիամ՝ ուր էք»։

Խարերարն Աստուած, լսած էր այս ամն և որբոց աղօթքները, և խրկած էր իրենց օգնութեան՝ մանչախուռը, որուն գործոյն մէջ Յիրանուան ընդու-

նած էր մահացու այն հարուածը։

Այս ճարպիկ, զօրաւոր, և անելկիւղ մարդը, ելաւ մարդասիրութեամբ իր անձը հայրենակցաց աղատութեանը նուիրեց, ինչպէս որ արդէն շատերը աղատելով ապահով տեղ մը փոխադրած էր։ Այս եւ այս սուղ վայրկենին հարցուց իւր սպատաւորաց թէ՝ հոգ տարուեցա՞ Յրանսուային ընտանեաց վրայ. բայց երբ անոնք լռութեամբ պատասխանեցին թէ ոչ, մէկէն ցատկեց իր նաւակը՝ և փայլակներու լուսով առաջնորդուած և փոթորկին դէմ մարտնչելով հասաւ հիւղը. այն ատեն ջուրը այնչափ բարձրացած էր որ իր գլուխը լուսամտին մէջ դնելով, կանչեց զանոնք, Արդուհին նոյն ձայնէն սիրտ առած գոչեց, Ո՞վ Աստուած ողորմութեան, . . ո՞վ է ան, կ՚աղաչեմ, դնէ զաւակներս աղատեցէք։

Այս լսելով իր որդիքը մի առ մի լուսամուտէն անցունելով մարաջխատին ձեռքը յանձնեց. և ինքն ալ ջուր տեղը կը փորձէր այս նեղ լուսանցքէն ելլելու։

"Աղատեցէ՛ք, աղատեցէ՛ք զաւակներս, ըսաւ քաջի մայրը, և թողուցէք զիս կորսուիմ». իսկ տըղայքն կ՚աղաչէին մարաջխատին որ իրենց մայրը վտանգին մէջ չթողու։ Անիկայ մէկէն թիակի երկու հարուածով խորտակեց լուսամուտը, և Արդուհին ալ իր նաւակին մէջ առաւ, ու թիավարելով անհաւատալի ուժգնութեամբ մը, իսկոյն հեռացաւ հիւղէն։ Հաղիւ նաւակը քառասուն քայլաչափ տեղ հեռացած էր, անդէն խրճիթը հիմն 'ի վեր կործանեցաւ, և հեղեղը տարաւ անոր մնացորդները։

Մարաջխատն այս դժբաղդ ընտանիքը՝ բլրակի մը վրայ տանելու բարեբաղդութիւնն ունեցաւ, ուր կը գտնուէին միաւորուած բոլոր այս քիւղաքաղաքին բնակիչները։

Digitized by Google

Այս վտանգալի նաւարկութեան ատեն, Արդուհին ու իր զաւակները՝ որոնց պատու իրած էր մարջախտը նաւակին մէջ պառկած մնալու, անդադար կ՚աղօթէին, և ցամաք եկած ատեննին ծունկի վրայ ինկած՝ շնորհակալ եղան Աստուծմէ. որ այնպիսի ճգնաժամու մը մէջ ազատարար հրեշտակ մը յուղարկած էր իրենց։

Մարջախտը շատ վտանգի մէջ ձգած էր ինքզինքը խաւարչուտ գիշեր ատեն զանոնք փնտռելու երթալովը. կ՚ուզէին զանի արգիլել, ըստ որում ոչ կորսուած կը համարէին զինքը, և արդէն իր յանդգնութիւնը կը բամբասէին, իբր թէ զԱստուած փորձել ուզած էր։ «Այ՛, բարեկամք իմ՝ ըսաւ մարջախտը, այն ատեն զԱստուած փորձելէ, երբ ինքզինքը վայրապար վտանգի մէջ դնէ մէկը, և ոչ թէ իւր ընկերն ազատելու համար եղած ատեն»։

Ցնծութեան և աշխոյժ խնդակցութեան ձայներ բարեւեցին քաջ մարջախտին վերադարձը։ «Քաջ դիտէի պատասխանեց անիկայ դարձեալ թէ՝ լաւ բանի ձեռնարկութեան մէջ ինքզինքս Աստուծոյ և սուրբ կուսին պաշտպանութեանն յանձնելով գրեթէ յաջողելուն անտարակոյս կը յուսամ»։

Արդուհին և իր զաւակներն ազատ էին, բայց մուրալու չափ աղքատացած. իրենց վրայ ունեցած ծէն ուրիշ բանի մը տէր չէին։ Գետին ջուրերը օրէ օր շատնալով, պէտք եղաւ խոյս տալ անկէ։ Շատ ընտանիքներ սկսան իրենց վերաբերեալ տեղեր երթալ. Արդուհին ալ իր երկու տղայոց ձեռքէն բռնելով հեռացաւ առանց գիտնալու ուր երթալը, բայց քաջայոյս էր որ Աստուած ամէն տեղ ներկայ է։

Արդուհին, այս գաւառը թողելէն յառաջ, ուրուն մէջ իսկ ծնած էր ինքը, վերստին ձգեց իր ցաւագին նայուածքը գիւղաքաղաքին տանը վրայ, որ

քիչ մը յառաջ ինչպէս ծաղկած, և ոքքան երջանիկ . . . : Այս վայրկենիս մէջ արեգակին առջի նշոյները կը լուսաւորէին այս սարսափելի և սրտաբեկ տեսարանը. և Պարգուհին արտասուելով հեռացաւ անկէ տղայոց ընկերութեամբը միայն :

Երբ որ քանի մը ժամի չափ քալած էին. «Այրիկ ըսաւ Հենրիկոս, անօթութիւնը խիստ կը տանջէ զիս» Թշուառ մայրը չպատասխանեց անոր. բայց միայն հառաչանք մը, վասն զի չունէր պատասխան մը հայ անգամ անոր տալու :

«Այր, չպիտի կարենամ լաւելի յառաջ երթալու, և յոգնութենէս գետինը կիյնամ». ըսաւ Անրիամ վայրկենէ մը ետքը : Յիրաւի, արեւն իր կիզիչ ճառագայթներն ուղղակի իրենց մերկ գլխուն վրայ կը զարնէր :

«Տղայքներս, ջանանք հովանաւոր տեղ մը հասնելու. հոն պիտի հանգչինք». պատասխանեց տրտմութեամբ մայրը, և իր սրտին մէջէն կ՚ըսէր, աչքերը երկինք բարձրացուցած. «Ով Հայր Երկնային, գթալիր սչուընեներդ մեր վրայ ալ դարձուցանելու հաճութիւնն ունեցէք. և շնորհք ըրէք կտոր մը հաց տղայոցս համար» :

Ի վերայ այսր ամենայնի ս...ի...ս...ու եղան եւս հարիւրաւոր քայլերով յառաջ երթալ, և ծառի մը շուքը վայելելու բարեբաղդութիւնն ունենալ : Ինչդեռ իրենց նպատակին հասան, գտան հոն ճամբորդ գործաւոր մը, որ իրեն լեցուն պարկին վրայ գլուխը դրած՝ բնութեան գորգին վրայ քաղցր ՝ի քուն մը ըտած էր :

Տղայոց դէպ ՝ի ծառը վազելով հանա խլշելոց ցներէն աթոռնցաւ գործաւորը, և նստաւ աչքերը շփելով միանգամայն զգալի հաճութեամբ մի նկատել. որոնք իրեն քնոյն արգելք եղած էին : Հար-

ցանց բաղցրութեամբ սոյն ճամբորդը. Աբրիտասարդ բարեկամներս, ուսկից կուգաք։

—Ա՛հ, Տէր իմ, ներեցէք, ձեզ անհանգիստ ըրինք գուցէ, ըսաւ երկչոտ Մարիամը, որ մէկէն ի մէկ չկրցանք տեսնելու։

—Ի՞ան մը չէ, կրկնեց երիտասարդը. բաւական քնացայ և աղէկ ատենն է ճամբաս շարունակելու, որպէս զի հասնիմ գիշեր չեղած այն տեղ, ուր կը փոփոքիմ պառկիլ։

Այս խօսակցութեան ատեն վրայ եկաւ մայրը՝ որ կամաց կամաց կը քայլէր. և երբոր տեսաւ ընկերը՝ որ ընտանեբար կը խօսէր իր աղջայոց հետ, առանց վախնալու ինքն ալ նստաւ դպլարեաց վրայ քիչ մը հանգչելու համար։

Ի՞նչ ատեն ճամբորդը բացաւ իր պարկը, հանեց քիչ մը հաց, պանիր և խոզենի երշիկ, և սկսաւ ախորժակով նախաճաշիկ ընել։ Ողորմելի տղայք չաւ փազանց քաղցած՝ կը տեսնէին այս ամէնը. և ոչ մի երջանիկ եղած պիտի ըլլային թէ որ միմիայն կտոր մը հաց ունենային, բայց որովհետեւ երբէք մուրացած չէին աչք ի խոնարհ նստան մօրերնուն քովէ։ Ընդեօք ան կարող էր նշանակել ի՞նչ որ կ՚անցնէր մայրական սրտին մէջ ողորմելի Վարդուհոյն. վասն զի տղայոց ցաւալի տեսարանը ոսատիկ ցաւոց շանթեր սիրտը կը մխէին, և ողորմութիւն խնդրելու ամօթն ալ միւս կողմէն կը տանջէր զինքը։ Երջանիկ երբ տեսաւ որ երիտասարդը կը ժողվէր իր մնացած պաշարը երթալու համար, խեղճուկ ձայնով մը ըսաւ. Ազնիւ պարոն, ձեր ծոցը վեհանձն սիրտ մը ունենալնիդ կը յայտնէք, զաւակներս անօթութենէ կը մեռնին, կ՚ապաչեմ . . . հաճեցէք կտոր մը հաց տալու, և Աստուած վարձատրէ զձեզ, վասն զի դրժբաղդ ենք և բոլոր մարդիկներէ երեսի վրայթողուած։

—Այո՛, սիրելի տիկնիս, ինչու յառաջ չբսիք, պատասխանեց երիտասարդը։ Խիստ կը ցաւիմ պաշարիս մէկ մասը ապառած ըլլալուն համար, կը փափաքէի բոլորն ալ տալու որովհետեւ կրնայի դիւրութեամբ մերձակայ գիւղէն գնոյ առնուլ. Ի սկզբան չկրցայ գուշակելվանալի ձեր կերպարանքը զիս խաբեց։ Այս ըսելով բացաւ ծրարը՝ ինչ որ կը գտնուէր դրսաւ բոլորն ալ անոնց առջեւը, որոնք մեծ շնորհակալութեամբ ընդունեցան։

Տեսնելու արժանի էր, տղայոց ջերմ ախորժակով ուտելնին, և կաղաչէին մօրերնուն որ ինքն ալ նախաճաշիկ ընէ, բայց անիկայ խիստ տխրութեամբ համակուած երբէք սիրտը չէր ուզէր բերանը բան մը դնելու։

—Այս բարի անձը վայրկեան մ՚ալ հանգչելէն յետոյ հանեց դրպանէն հինգ ֆրանկնոց արծաթ մը դրաւ Արդուհուոյն ձեռքը և անոր շնորհակալ ըլլալու ժամանակ չթողլով արագ քայլերով հեռացաւ, քիչ մը բացակայած՝ անոր դարձաւ իր գլխարկը շարժելով ողջոյնի և մնաք բարեւի նշան ըլլաւ։

"Մեծանակարող Տէրն է որ յուղարկեց մեզի այս մեծանձն գործաւորը, ըսաւ բարեպաշտ մայրը, այո՛, սիրելի տղայք վստահ եղէք միշտ օրհնելով Աստուածային հայրական բարերարութիւնը, և մեզի անխնամ պիտի չթողու երբէք. և արդէն շատ անդամ փորձերը տեսած եմ"։

Տղայք ուտելէն ետեւ գոյին մերձակայ աղբիւրէ մը իրենց ծարաւնին անցունելու. մայրը՝ սին որ աւելի կիզիչ ըլլալու թեռնէն արդէն ծարաւութեամբ կը տանջուէր, հետեւեցաւ անոնց, և երեքնին իրենց ափովնին ուստիկ ծարաւնին շիջուցանելէն յետոյ, շարունակեցին իրենց ճամբան։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Գ

Պատահարք ուղեւորութեան

Երբոր վերջնալուսոյ առաջին ստուերն ղգիշերը բերելու սկիզբ կ'ընէր, մեր ուղեւորները կը գտնուէին նոյն գիշերը բաւական մեծակակ գիւղի մը քով։

Ինք Ֆրանքնոցը զոր մարդասէր ընկերակիցը ողորմութեամբ շնորհած էր՝ Վարդուհւոյն, կազատէր զանկ այս անգամ մուրալու դժբաղդութենէն. բայց քնոյն և ճամբորդութեան տժանաքիրտ յոգնութեան ձայներէն ստիպեալ զարկին առաջին դուռը բնակութիւն մը խնդրելու համար։ Այս տանը ներսէն ուժեղ ձայներ կը լսուէին, վասն որոյ ստիպուեցան չորս հինգ անգամ կրկնելու։ Յետոյ մարդ մը քստմնելի հայհոյութիւններ ընելով բացաւ դուռը. իր հասակին ձեւը ու ժանտատեսիլ կերպարանքը տոկացուցին տղայքը, որոնք իրենց մօրը քով ապաստանեցան։

«Ղէ՞, ինչ կ'ուզէք, հարցուց խիստ ձայնով մը, երերուելով, կակազելով, վասն զի գինով էր։ Ինչ կ'ուզէք, կրկնեց ճրագը մօտեցնելով Վարդուհւոյն երեսին։

—Տէր իմ, այս գիշերուան համար բնակութիւն մը։

—Բնակութիւն մը, ահ, այս մուրացկան մ'է, որ եկած է հանգստութիւնս շփոթելու. դուք չար մարդիկ կ'երեւիք, գիշեր բարի. կրկնեց նոյնը նաքաստական ծնծաղով մը, և գոցեց դուռը։

—Շնորհակալ եմ Աստուծմէ, որ այս չար մարդը մեզ ձգեց գնաց, ըսաւ Մարիամ, ահ, մայր իմ. չարաբաստ անձ մը երեւցաւ ինծի։

—Սիկայ դժբաղդ մ'է, որ ինքը զինքը գինուոյ

քմպանակները սարսռելու գերի ըրած է, որուն վրայ հարկ է գթալ, պատասխանեց մայրը. եկէք, զաւակներս, գուցէ խիստ բարեսիրտ մէկն այս գիւղաքաղաքին մէջ գտնելու բարեբաղդութիւնն ունենանք»։

Այնատարած սեւաթոյր ամպերու մէջ երթեւեկող արծաթափայլ լուսնին լուսովը առաջնորդուած հասան աղքատ խրճիթի մը առջեւ. ուր ճրագի լոյս չէր երեւար, բայց միայն չոր ոստերէ բորբոքուած ատկայծ մը, որով հազիւ հնար էր նշմարել հոն եղողները. դուռն ալ զգուշութեամբ գոցուած չէր, առանկով մեր ուղեւորները կրցան առանց դժուարութեան ներս մտնել։

Աղարանին առջեւ, ծերունի կին մը յարդէ աթոռի մը վրայ նստած կը ջեռուցանէր իրեն խորշմած ձեռքերը։ Երբոր տեսաւ այս օտարականները, ընդ յառաջ երթալով հարցուց իրենց թէ՝ ինչ բանի կարօտութիւնը ձեր քայլերը դէպ՝ ի հոս առաջնորդեցին։ Իր հեզ և բարեխորժ ձայնն զգալի վստահութիւն մը կ՝աղդէր, և Արդուհին ամենեւին չը տարակուսեցաւ անոր իր նպատակն յայտնելու։

«Մէնք ինչ որ ունիմ խրճիթիս մէջ ձեզի ծառայելու պատրաստ են, սիրելի տիկին, պատասխանեց բարի պառաւը։ Այս գաւառէն չէք դուք, վասն զի կը ճանչնամ բոլոր այս շրջակայ գիւղին բնակիչները և զձեզ երբէք չեմ տեսած. ուսկից ալ ըլլաք հոգ չէ բարի եկած էք»։

Արդուհին առանց վարանելու պատմեց անոր թէ ինչպէս պանդխտութեան պատճառները որուն վէպլեթէպէտ պարզ, բայց այնպիսի սրտառուչ ձայնով մը ասաստեց, որ իր առանձնականին սիրտն եռանդեամբ կարեկցութեան շարժեց զիրենք ընդունելու։

«Շատ ուրախ եմ, որ բարեբաղդաբար իմ խրճիթս հանդիպեցաք, կրկնեց աղնուասիրտ պառաւը.

Digitized by Google

թէեւ խիստ աղքատ եմ, բայց յօժար սիրտ մ՚ունիմ, եւ կը սիրեմ իսկ ունեցածիս մէկ մասը աղքատներուն բաժնել։

Այս գիւղաքաղաքին մէջ շատ չարաբարոյ եւ բարոյականին խանգարուած մարդիկներ կան, որոնք ազահութենէն գրգռեալ մաքսանենգութեան գործով կ՚զբաղին. եւ շատ ատեն գիշերային մթութիւնն իրենց օգնական առած՝ ապրանք կը փախցուցնեն առանց սահմանեալ տուրքը վճարելու. այսպէս երկրիս իշխանին ու տէրութեան հարստահարներն են։ Այս պատժապարտ արուեստը կը խանգարէ սիրտը եւ յառաջ կը բերէ ամեն տեսակ մեղութիւններ։ Իսկ ես բարեբաղդաբար բարեպաշտ ծնողացմէ դաստիարակուած երբէք չը-զեցի կցորդ ըլլալ այս ապօրինաւոր շահուն, որ անատեն ինձի շատ դիւրին էր, ուստի աւելի աղէկ է հանդարտ խիղճով աղքատ մը-քան թէ խղճմտանքի խայթոցէն տանջուող հարուստ մը։ Այս բարի պառաւը իր հիւրերը զբօսցնելու համար՝ այս եւ այն պատմութիւններով քիչ մը ժամանակ անցուց որպէս զի տղայք լաւ մը ջեռնուն, ուստի ելաւ վառարանին մօտ աղքատիկ սեղան մը պատրաստեց թան մը՝ խոտերէ եւ խոզի ճարպով պատրաստուած, հաճարէ համեղ հաց մը, եւ պանիր, այծի կաթէ շինուած, որոնք ախորժակով մը սկսան ուտել։

Իարեսիրտ ասպնջական Աննան՝ պառկելու միջոցին իր հիւրերուն նոր շինուած խոտեղէն անկողին մը պատրաստեց։ ըսելով, "տիկայ աւելի օգտակար է, քան թէ ասուէ փափուկ անկողինը. վասն զի այս տեսակ ծովային խոտերէ շինուած անկողինը ամառ ատեն զով կը պահէ եւ ձմեռ ատեն բարեխառնն"։ ուստի այս մեր պանդուխտները չդանդաղեցան ընդունելու քնոյ ստիպիչ հրաւէրը, որ իրենց բիբերուն վրայ ոչ դէն ծանրացած էր։

Digitized by Google

Երկրորդ օրն՝ առաւօտեան աղօթքը կատարելէն յետոյ, մայր ու աղայք կաթով և հացով նախաճաշիկ ըրած միջոցին՝ զարմացմամբ դիտեցին սենեկին չորս պատերը, որոնք զարդարուած էին ծաղկեայ պըրակներով։ Ասոնք խոտերու փունջեր էին, որոնց համար Աննան այսպէս խօսեցաւ։ «Կը ճանչնամ ըսաւ այս գաւառին դեղական բոյսերն։ Պայծառ և գեղեցիկ եղանակի առեն, կերթամ ամեն օր փնտրել այս բժշկական խոտերէն դաշտերուն ու մերձակայ լեռներուն վրայ, որն որ ժողվելով խուրձեր կը կապեմ ամեն մէկն իրենց տեսակով, և կը կախեմ զանոնք չորցուցնելու համար, մէկ քանին սենեկիս մէջ, ինչպէս որ կը տեսնէք, և ուրիշներն ասկէ դուրս, վասն զի անոնք սուր հոտ մ՚ունին և հեռուաբար օդն ապականելովը կը խանգարեն առողջութիւնս։ Երբոր բաւական մեծ պատրաստութիւն ունենամ, ան առեն կը զետեղեմ սայլակի մը վրայ և կը տանեմ դեղավաճառաց։ Սիկայ ինծի կը բերէ շաբաթը երեք չորս ֆրանքի եկամուտ մը, այս գումարին մէկ փոքրիկ մասն ալ խնայողութեամբ ձմերուան պէտքս հոգալու համար կը պահեմ. վասն զի ձմեռը տան ներքին գործերով ժամանակ կանցուցնեմ, փառք Աստուծոյ, դեռ պատահած չէ ինձ առանց ընթրելու քնանալ»։

Ու ասպա պառաւն առաջնորդեց իր հիւրերը դէպ՝ ի փոքրիկ ախոռ մը, յորում աղայք սքանչացան նայելով՝ սենեկով լաւ հոգացուած երկու գեղեցիկ այծերը և անոնց գառնուկի պէս հեզութեան վրայ։

«Հաւասիկ, կրկնեց Աննան ցուցնելով իրեն այծերը, ծերութիւնս սնունդներն են, իրենց կաթն աքանչելի է, և նաեւ օգտակար առողջութեան. ամէն անգամ դաշտէն վերադառնալուս գիրկ մի լուծոտերէն կը բերեմ. վասն զի պէտք է երախտագէտ

Digitized by Google

ելլաղ մլուչեւ անգամ անքան կենդանեաց »։

Պարդուհին չուղելով այս բարի պառաւէն ընդունած երախտեաց չափը անցունել, պատրաստուեցաւ երթալու, ներկայացնելով անոր հինգ ֆրանքնոցը, և շարժած սրտով մը բաւ անոր, « ընդունեցէք, ազնիւ առանձնական, ասոր մէջէն որչափ որ արժան կը համարիք, և հաճեցէք մնացեալը դարձունել ինձ։ Կը ցաւիմ որ ամէնը չեմ կրնար թողուլ, վասն զի այս է բոլոր հարստութիւնս »։

Ընայի դէմքին վրայ բարկութեան նշաններ ըսկսան երեւալ. « ինչ տարօրինակ դատողութիւն ըսաւ, ձեզ հիւրընկալեցի մինթէ շահու համար կարծեցիք. ոչ այնպէս, այլ քրիստոնէական զգայմամբ միայն։ իսկ ձեր ինձ հաստատման խօսք առաջարկելը յանգիմանութիւն մի է։ Պահեցէք ձեր ստակը և մոռնկ ըլլէք ինձ, հաւանական է որ հեղեղը ձեր կարծածին չափ աւեր և տակնու

իր քայլերը դանդաղ և երեսին վրայէն իր բնական ուրախութեան նշոյլները բոլորովին խայտ տուած, և անոր տեղն կ'երևէր տրտմութեան խոր նշաններ։

«Ձեր տեղը դառնալու ակնկալութիւն բնաւ չերեւակայէք առ այժմ, ըսաւ, այս բարի պառաւը կործանում մը սոսկալի է, խեղճ բնակիչները հազիւ կարողացեր են իրենց կեանքը ազատելու։ Ալիքներն ամէն բան իրենց հետ տարած են, և ձեր գիւղաքաղաքն հազիւ կրնայ տասը տարուան մէջ իր վերակենդանութիւնն ստանալ... և դեռ վեց ոտք բարձրութեամբ ջրոյ մէջ կը լողայ. մեծ մասամբ տունները կործանուած են. ուստի սիրելի հիւրերս, խելացութիւն չէ դառնալ այն անապատացեալ և թշուառութեան տեղը, որուն մէջ բան մը պիտի չկարենաք դտնել որ ձեր առջև վիճակին աւաջնորդէ։ Լրդ, թէ որ կարելի է, ներեցէք ինձ որ պիտի աղաչեմ հոս ընկերութեամբ միաւորեալ ապրելու։

—Պիտոն, խեղճ սմուտնոյս ոգոյ խայտ, անշուշտ ջուրերու ալիքներէն յափշտակուած պիտի ըլլայ...» Օրն այս խօսքին՝ հառաչեց Մարիամ, իր աչերուն շրջապատը արտասուաց բիւր գոհարներ շարուած՝ և իր սրտին խռովութիւնը չյայտնելու համար, եբեան երկու փափկասուն ձեռացք մէջ առած մինչ դեռ կ'արտասուէր՝ կրկնեց Անանա, աւելի աղեկ է ուրտերնուդ մէջ կանգնէք այն խաչը և անոր պատանդանին տակ հանգուցեալին յիշատակը միշտ բարեգործութեամբ կենդանի պահէք. քան թէ այնպիսի շինծու տեսքին կորստեանը այսպէս չարաչար ցաւիք, ասոր նման մխիթարական շատ խօսքեր արտասանելէն յետոյ մէկմէկու բարի գիշեր մաղթելով ամենքին մնան։

Պատգամաբեր ուշալոյսն իր ընթացքն սկսելուն՝ շքեղ դէմքը մեղմով ամենուն ցոյցնելով

Digitized by Google

հրաշէկ գլխէն իր զուարթ ճաճանչները երկրիս վրայ սփռելով, ընչաւորն ու անշունչը կը կենդանացնէր, Արդուհին այս առաջին փայլկենին ցատկեց իր անկողնէն, նոյնպէս ողջոյքն անոր հետեւեցան. իրենց առաւօտեան գոհաբանական աղօթքը երկինք ղրկելէն յետոյ պատրաստուեցան ճամբայ ելլելու. բաժանման կէտը խիստ դժուար եղաւ, վերջապէս իրարու ձեռք տեղմելով մնաք բարեւներն վերջացան շնորհակալութեան ձեւերով։ Ընենան չկրցաւ արցունք չթափել անոնց այսպէս երթալը տեսնելով, հուսկէտոյ ըսաւ, "Աստուած ձեր ճամբորդութեան մէջ ընկերակից ըլլայ»։

Պահ մը ետքը, զանոնք թող տալուն զղջաց և իր տարիքին առաւելութիւնը մոռցած՝ կայտառ և աշխոյժ երիտասարդուհի մը պէս անհաւատալի արագութեամբ իսկոյն ճամբայ ելաւ, անոնց շփոթ հետքերը առաջնորդ առած, բայց երկբերան ուղի մը՝ իր արագ շարժումը կեցուց, և չէր գիտեր որ կողմն արդեօք իր նպատակին կարօղ է հասցուցնել։ Դրժբաղդաբար հակառակ կողմն հակելով չկրցաւ գլուխնալ։ Արդէն վերջալոյսն իր բոլոր զօրութիւնը կը կորնցնէր ստիպուեցաւ Ընենա առանձին ու տխուր իր խրճիթը դառնալու, և մտածման մէջ ընկղմած կրսէր ինքնիրեն։

"Արդեօք նախախնամութիւնը ասոնք պանդխտութեան մատնելով նեղութեամբ իր սիրոյն ջերմացնելէ, և ո՛ գիտէ ուրիշի տալ օրինակ և օգուտ քաղելու պատրաստած ըլլայ, վասն զի տերեւք անգամ առանց հրամանի չեն շարժիր»։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Ե.

Անտառին մէջ անցուցած գիշեր մը.

Երկինք, երբեմն այլ և այլ վիճակներ կը խորկէ մարդուս վրայ անոր արիութիւնը ու առաքինութիւնը աւելցնելու համար։

Յոպիսի աղնտալի դէպքեր այս առաքինի ընտանեաց յաճախ կը պատահէին, անոնց խաղաղ կեանքը խռովելու առիթներ տալով։

Պարդուհին առջի ճամբորդութեան մէջ ողորմասիրտ երիտասարդէն ընդունած հինգ ֆրանքնոց արծաթը դեռ կը պահէր. որով քանի մը օր հարկ չկար մուրալու, լոկ հացով միայն ապրելով։ Որչափ սիրով պիտի ընդունէր ալնիւ Ինչա տիկնոջ առաջարկութիւնը՝ եթէ կարող ըլլար բարեկեցիկ մշակներու քով աշխատութիւն մը գտնել, որ կարողանան իրենց քրտամբը հացերնին ուտելու. ուստի որու որ այս առաջարկութիւնը աշխատելու համար ըրած էր նէ փոխարէն մերժողական պատասխան տրուելով բնակութիւնը փոխել հարկ եղած էր։

Շաբաթ մը ամբողջ՝ ուրիշ գիւղերու մէջ ալ իր նպատակին չհասնելով, ստիպուեցաւ մուրալ և որուն որ դիմեցնէ՝ ծոյլ ու թափառական համարելով զինքը կ'սպառնային բանտարկելու։ Այն գիւղին քաղաքապետը, խիստ ու դաժան մէկը ըլլալով ուղեց անոնց անցագիրը տեսնել. երբոր չըլլալը ատուգեց, մեկէն պատասխանեց. "Շատ աղէկ ուրեմն կը պարտաւորիք բանտ երթալ։

—Ամէն, մեր բարի մայրերնիս. "գոչեցին տարշայք սրտաբէկ ձայնով մը, և կը պլլոս էին իրենց քաղիօք մարը ծնկուընելուն։

Digitized by Google

«Ա՛հ. սիրելի պարոն, ըսաւ ան ատեն Մարիամ արտասուալիր աչք և աղաչանաց ձեւով մը, գը-թացէք մեր տառապեալ մօր, դեռ երբէք մէկուն գէշութիւն չըրաւ, այնպէս մենք ալ. մեր մուրաց-կանութիւնը անօթութենէ ստիպեալ է, այնպէս որ չենք կրնար անոր համբերելու. բայց՝ ի հացէն ու-րիշ բան չենք խնդրեր»։

Ազնիւ այս ցաւալի խօսքերէն սիրտը շարժած՝ խոյս տուաւ առանց բան մ՚արտասանելու. Պար-դուհին ալ իր տղայքներով մեկնեցաւ անկէ, ա-ռանց գիտնալու՝ ինչ ուղի բռնած ըլլալը։

Ընտանման և անեղը ծովու նման անտագի մը մէջ մնան, որուն մուտրը՝ մարդ դիւրաւ, բայց ելքը հազիւ թէ կրնար գտնել, այսու ամենայնիւ երկնա-բերձ եղեւիններով սփռուր դէպք մը կ՚ընծայէր։

Պարդուհին ուղեց հոն պարսնարուելու տեղ մը գտնել. վասն զի ոչ ելաւ չէր համարձակիր դիւ-ղի մը մէջ մնալու։ Յանկարծ շփոթեցաւ՝ տեսնելով այնպէս ամայի տեղ մը. ածուխի կառք մը այս անտառին մէջէն կ՚անցնէր և գրեթէ լաւ բաւական-նին լեցուած՝ փայտահարի և ածխագործի ընտանեաց։ Որոշեց ինքնիրեն որ առաջարկէ իրենց տանը մէջ աշխատութեամբ ապրելու։ Ուրդէն համոզուած էր որ ընդհանրապէս աղքատներն աւելի գթած են քան թէ հարուստները. վասն զի այս վերջիններս փոքրով չեն գիտեր թէ՝ աղքատութիւնը ո՞րչափ ցաւալի և դառն է. բայց չհամարձակելով, դարձեալ լռութիւն պահեց։

Ուստի անտառին խորերն սկսան երթալ քանի մը ուտելու պտուղներ գտնելու՝ տղայոց և իր քաղ-ցը յագեցուցնելու համար, միանգամայն անոնց տեղ մը ապաստանարան պատրաստել։

Ոտան հոն և բաւական լայն ճամբայ մ՚ի գտնելով՝ յառաջ գային, և տեղ տեղ օձապտոյտ ճամբաս-

ներ, մէկ կողմէ բարձրաբերձ ժայռերը, և միւս կողմէն ստուերաստաձ անտառն՝ առաջակաց բնակարան ըսուելու և կամ մարդակոչոյ խմբի մը ժողովատեղի ըլլալու յարմար էր. ուր հաղիւ երբեմն երբեմն ասդիէն անդիէն արեգական նշոյլ մը կը թափանցէր։ Այց ոտայք չափէն աւելի յոգնած ըլլալով, իրենց փափուկ անդամներն հանգստութիւն կը խնդրէին, և դեռ կը շարունակէին իրենց քայլերն յառաջ վարելու. անօթութիւնն ալ արդէն վրանին բռնացած ըլլալով՝ ալ ու ժաթափ իրենց աչքէն շղուն արցունքներ և առատ հոսանքներ կը վազէին. մինչ զի մայրերնին որոշեց տեղ մը՝ ուր բնութիւնը կանանչազարդ գորգերով զարդարած, և զով ակնանկիտ աղբիւր մը նոյն տեղերուն դեղ և փայելչութիւն ըսփռած, և ջրին ստորոգութեամբ բղխած ատեն՝ երկինք թռչղտող փալփլուն կաթիլները, մէկէն տղայոց միտքը գրաւեցին՝ և իրենց յոգնութիւնն ու քաղցը մոռնալով, սկսան անոր խաղալ և իրենց մօրը հետ բընութեան Ստեղծակին փառք տալ երգելով։

«Ով անսահման Ճարտարապետ,
Ընձեռագործ վայրքս անձկաւէտ.
Օրհնութեանն կայծ սրտերուն,
Դեզ նուիրել բիւր գոհութիւն։
Հատ հարուստներ պալատներուն,
Կերպաններով տան զարդ և գոյն.
Այց չեն շաժեր ըզսիրտ մարդոյ,
Ոմեր զոր Ինն նոր Ի նարոյ։
Իւ անունց մէջ բնակելու,
Անանուններ են այցելու.
Իսկ բնութեան վեհ շինքին մէջ,
Ամէնքն ունին միշտ երկէջ։
Այս աղբիւրին կարկաչն ու ձայն,
Օդականց մէջէն պտոյտն երկայն.

Digitized by Google

Ինչափ կ'օգնեն տխուր սրտից,
Երբ կոյր բաղդին են թեւակից.
Ինչպէս թռչնոց այս դայլայլիկ,
Կ'օրհնեն իրենց Տէրն աւասիկ.
Միաբերան մեկտեղ ժողվուած,
Հանդոյն կուգան Երկեղեցեաց.՝
Այն գոյնզգոյն գորգքն շքեղ,
Ընմահ Երին սուրբ և անմեղ.
Իրենց առոյգ երեւոյթով,
Ընտրեալի փաստ տան փութով։
Ուստագութ մեր Երարշին,
Արայ գնենք յոյս մեր սրտին.
Զի Երա պաշտպան է մեր կենաց.
Երես աղքիւր բոլոր բարեաց։
Թէեւ 'ի նոր ձախորդութեան,
Ներ անձերն քնան համայն.
Զբտանք տեղի դժգոհութեան,
Զի սա մեղք է միանգամայն։

Երբ բնութեան Հաստչին նուիրեալ ինքնաբուղխ երգը քաղցր եղանակաւ վերջացուցին, արդէն սկըսած էին զգալ ճաշելու հարկը. ուստի Արդուհին պատուիրեց տղայոց հանդարտ կենալ տեղերնին. նոյն ատեն որ պիտի երթար որոնելու այն անտառին ներսի դին թթենւոյ պտուղներ կամ ելակներ։ Խաստատացան անոնք պատուէրը պահելու. Արդուհին անոնց դիւրանալոյ հեղութեանը վրայ ապահով քանի մը հարիւր քայլ հեռացաւ։

Շատ մը լաւ և խոշոր թութեր՝ սեաւ ու կատարեալ հասուն, և քիչ մը անդին մեծ տանձենի մը, գտան որուն պտուղները թէպէտ տեւ ոչ այնչափ հոտով՝ բայց լաւ կը ծառայէր գոհ ընելու ողորմելեաց անօթութիւնը։

Digitized by Google

Այս ծառին վրայ ելելէ յառաջ, ուզեց բերել իր տղայոց կողվմը թթենւոյ պտուղ։ Այս կողվմը աղնուուհի Անանա էր շնորհած։ Երեւակայեցէք մէկ մը թէ՝ տղայք ոչչափ հաճոյքով բաժնեցին այս պըտուղներն իրենց մէջ, զոր իրենց մայրերնին սիրեց դալարեաց վրայ։

"Որդեակք, ըսաւ անոնց, պիտի երթամ դարձեալ որոնել ձեզի համար աւելի զօրացուցիչ պըտուղներ, բայց կը պատուիրեմ ձեզ նորէն չհեռանալ այս տեղէն։ Հանդարտութեամբ կեցէք՝ հոս ուտելով ձեր թուրթերը. պիտի չյապաղիմ ետ դառնալու։

—Ի՜հ, մայր, հարցուց Մարիամ, մեզի վերատին կ'ուզէք թողուլ, թէորդիանայիք ոչչափ երկիւղ մեզ պաշարեց, բոլորովին առանձին այս անտառին մէջ։

—Կը կարծէք որ բոլորովին միանակ էք. չէք գիտեր որ Աստուած ամէն աեղէ ձեզի հետ. պատասխանեց մայրերնին՝ սիրտը նախազգացութեամբ և սխրութեամբ լեցուելով։

—Ո՜չ, Մայր, ըսաւ Հենրիկոս, սակայն և այնպէս սար մեզալ քեզի հետ, երկիւղմը պատեց մեզ, բայց երկիւղմը։

—Երկիւղը խիստ գէշէ ձեզի, տղայք. գիտնալով որ շատ հեռու պիտի չըլլամ ձեզմէ։ Ձեմ կրնար զիջանիլ որ դուք ինձի ընկերանաք, ինչու որ այն տանձենին որ գտայ, ներքեւը փշոլից ու գետինը ճամբ ճամբուտ է, և գիտէք որ չունիմ պահեստի, ոչ ներքին և ոչ արտաքին փոխելու զգեստք. որուն համար կ'ըսեմ, հանդարտ կեցէք հոս, մէկ քառորդի մէջ ետ պիտի դառնամ։

Հնազանդեցան տղայք, և մերժեցին իրենց մըտաց հորիզոնէն երկիւղն սեաւ ամպերն՝ ուտելով այս քաղցրահամ թթենւոյ պտուղները, բայց քանի

մը վայրկենէն եւեւ Ամրիամին ականջին զարկաւ աղջուկ մը մօտ տեղէ. ապա ձիչ մը, և իր մեր ձայնը Հենրիկոսին քոլոր մարմինը սարսափ մը պատած՝ ա-կանջ դրաւ, և ըսաւ ցած ձայնով մը իր քոյրին. "Այ մեր մօրը ձայնն է, ահ, ինչպէս կը գոչէ. "Որդեակ իմ, ոգորմելի որդեակ իմ"։

—Ինծի կ'երեւայ թէ ձիոյ դոփիւն մ'է, և ով կ'ուզէ մեռաղ մեր մօր՝ որ խիստ բարի է։

—Այ, այն անգութ մարդը՝ որ զանկիկայ պիտի բանտարկէր այս տուտու անցագիր չունենալուս համար, միթէ այն է գաբաեալ, բայց կը թուի ինձ թէ անտառի մը մէջ հարկաւորութիւն չունի, տն-շուշտ չկրնար արգիլել մարդերներ ժողվելու, ո-րոնք կ'ուզեն մասնաւորուն վրայ, որ թուչունները կերակուր պիտի ըլլան։

—Կարծեմ որ մայրերնիս հիմայ կը դառնայ, ը-սաւ Հենրիկոս վայրկեան մը լռութենէն եւոքը, թէ և այս անգամ քիչ մը աւելի ուշացաւ։

—Աղէկ չէ՞նք ըներ արդեօք, երթայինք գտնելու զինքը, ըսաւ Ամրիամ, որ կ'սիրէր խռովիլ։

—Այ, Ամրիամ, անհնազանդութիւն մը պիտի ըլլայ, և միւս կողմէ ճանբան խոտորելով ինքզինք-նիս վտանգի մէջ ոլիտի դնենք. այն ատեն չենք կրնար ոչ ան մեզի և ոչ մենք զինքը գտնելու։

—Իրաւունք ունիս, որ յայտնապէս խրատեց մեզ ատիկ չշարժելու, ջանանք ուրեմն հնազանդութեամբ խոհեմութեամբ յաղթելու այն երկիւղին որ մեզ կը նեղէ։

Հանդարտեցան, ապայն մէկ վայրկենի համար, ինչու որ անտառին մէջէն դղրդում մը լսուեցաւ եւ կարծեցին որ իրենց սիրելի մայրը կը վերադառնայ. ուստի նախ մեծ ուրախութիւն մը զգա-ցին, բայց տրամութեան սեաւ ամպերն այս ուրա-

խուԹեան նշոյլը շուտով ծածկեցին։

«Միայն ԹԷ իր շաւիղը կորուսած չըլլայ, ըսաւ Հենրիկոս։ Այս և ասոնց նման իրենց մասցը մէջ յուղուած խորհուրդներն Թռչնոց արշաւանքի մը նման ասդին անդին կը Թռչտէին անհանգիստ ու անհանդարտ. այսու ամենայնիւ իրենց վերջին որոշումն արիւնին սառեցուց իրենց երակներուն մէջ։

—Առաջին անգամ առանց խոտորելու գտաւ իր շաւիղը, գուցէ այս անգամ չկրցաւ գտնել, պէտք է զանի կանչել մեր բոլոր զօրութեամբ, այս բանին համար մեզի չարգիլեց»։

Արկուքը միաբերան սկսան յուսաբեկ ձայնով պոռալ. հարիւր անգամէ աւելի կրկնեցին. այն բաղցը անունը. «Այոյր, մայր, ետ դարձէք»։ Արձագանգներն միայն կը պատասխանէր. բայց ոչ իրենց սիրեցեալ մայրը։

Այն ատեն յուսահատութիւնն սկսաւ գրաւել իրենց հոգին։ Հենրիկոս ծնկի վրայ գալով փոքրիկ բլրի մը վրայ՝ դէպ ի աղբիւրին մօտ մամուռով հովանաւորուած տեղ մը, եւ երեսն երկու ձեռացը մէջ ծածկելով՝ հեծեծանօք դառնապէս կ'ողբար, քանի որ Արիամ, ոսքի վրայ անոր քով ձեռքերը միատարած կ'աղօթէր ու Աստուած, որ սիրելի մայրերուն իրենց դարձուներ։

Արդէն ցորեկուան շքեղ լուսաւորն իւր պաշտօնը կատարած, սկ իր վերջին ճառագայթներով բարձրաբերձ ծառոց գագաթներուն հրաժարական ողջոյն մը տալու համար, կարծես ԹԷ զանոնք վերէն ի վայր ոսկեթել հանդերձով զարդարած էր, և գիշերային վեհապետը իւր քիւր զօրքերով կը պատրաստուէր այս կողմերուն տիրապետել. և զուարթաբար սարեակը (սրղոյնՃկ). տերեւազարդ ոստոց սակը ճուռուղելով տարտանարան մը կ'որոնէր, և ա-

լուսաշարժ մոլէզը (քէնթէնքէլէ) ծերպերուն ու քարայրներուն մէջ կը մնային և որդէն բուն սը-ւրնչեան թշնամիները խաւարչուտ մենակեաց բնակ-կուԹենէն դուրս կ'ելլէին։ Իսկ տղայք բոլորովին հանդարտուԹիւններն կորսնցուցած, և իրենց ջերմ արիւններն սառած, երակներուն մէջի երԹեւեկու-Թիւնն ու շրջանները դադրած էին. վերջապէս մէկ երկու ալէտից խօսքով լուուԹեան քօղն մէկդի ա-ռին, և սրտաձնիկ ձայներով սկսան օդը երերել։ «Ո՞ւԹ գիշերը մեր երկրագունդը կը պատէ. մար-գարտաշար շաղ մը կանանչ դաշտերը կը ծածկէ. ղով, սիրուն հով մը գլխերնէն կը սահի կ'երԹայ։ Ո՞ւր ես սիրելի մայր, անձկալի մայր, հանգչելու տեղը կ'անցնի, բայց մեր աչքերն ղբեղ, սիրելի մայր, չեն տեսներ, ուր ես. մի Թէ ղբեղ վշտացուցելու ա-ռիթ տուինք, բիւր զղջումներ յեղյեղելու. չենք դանդաղիր. անձկալիդ մեր՝ երեւցուր քու սիրուն և գորովալից դէմդ, որ հանդչին խեղճուԹեան նշանակ սիրտերն մեր, այսպէս պիտի Թողուս յու-սահատուԹեան անմատչելի վիհերուն մէջ գահավի-ժել, և պիտի Թողուս որը և անպաշտպան եղկելիս վայրենի գազանաց կերակուր ըլլալ. ահ, բոլոր Թը-չունք իրենց ձագերը խնամելու դարձան գիշերային երկաթեայ գաւազանին տեւողուԹեան առեն. բայց դուն, ինչու մինչ ցարդ չես վերադառնար զաւա-կացդ քով, որ ջերմ սիրով կը սեղմէիր կուրծքիդ, չէ, չէ, չենք կարծեր որ դուն այսչափ անգութ սիրտ կ'ըլլաս, գուցէ անօրէն Ֆորովքէն սարսաժամ մահ-ուամբ քու կենացդ Թելը մկրատեց . . . » Այս մահուանը վրայ ունեցած երկիւղին, այնչափ գէշ ազդեցուԹիւն ըրաւ իրենց սրտերուն, որ ալ չկրնա-լով օգ շնչել, նուազիալ ինկան գետին, և լուս-Թիւնը մահուան գունով ծանրացաւ իրենց շրԹանց

վրայ և բոլոր անտառին մէջ։

Այթին և ահուելի գիշերը պատեց ընդարձակ անտառն, որ ամպերու լայնատարած քօղ մը ոչ լուսնի և ոչ ալ աստղերուն լուսոյ կայծ մը տալու կը ներէր. և սեաւ գիշերը կուգար սառեցնելու փափուկ անգամներն այս ողորմելի տղայոց։ Գիշերը պահ մ'ուցած էր հազիւ՝ արթնցան իրենց երկիւղի և զարհուրանաց թմրութենէն, և մէկ կողմ քաշուելով մէկզմէկու պրլլուած մէկէն իրենց մօր ոլխուր յիշատակն առջեւնէն անցնելով՝ քիչ մ'առաջ թափած արտասուքներէն կարմրցած սիրուն աչերուն շրջանակները նորէն ողողեց. և ընդ միջած ձայնով կրկնեցին. «Ո՜հ մայր, սիրելի մայր ուր ես, ՕՆ վերադարձէք»։ Լաւ որ իրենց մայրերնին չեր լսեր այս ողորմ ձայները։

Հուսկ յետոյ, տաժանումէ և մտաց յուզմունքներէ ընկճուած, և միանգամայն բնութեան ցրնանալով դէմ դնել ծանրացան աչուքներն և թմրեցան դարձեալ և քնոյ վարագուրին տակ խառնիխուռն երազներ մերթ հաճելի և մերթ զարհուրելի, զանոնք անհանգիստ կընէին. մինչ զի հեծկլտանք արթնալով վայրկեան մը ետքը, տեսանողներ օրը մթութեան հետ կը մրցի, ծնկի վրայ եկան իրենց աչքն ու սիրտը երկինք վերուցած, աղօթքներն ու պաղատանքներն այսպէս Հզօրին առջեւ դնելով՝ յոժ ու զօրութիւն մաղթեցին. որ այս նոր ալեկոծ շաւղին մէջ անփորձ պահէ վտանգներէն, և այս սպառեալ ոյժը՝ կրկնկին քունով զանոնք գեղին փոխեց։

ԳԼՈՒԽ Զ.

Ո՞ՆՉ ԲԱՆ ԱԼԱՍԱՀԵՑԱՒ ՎԱՐԴՈՒՀԻՆ ԻՐ ՍՂԱՅՔՆԵՐԸ ԹՈՂ ՏԱՅԷՆ ՅԱՌԱՋ:

Ամեր սիրելի ընթերցողք պիտի յիշեն որ Վարդուհին մի-սանգամ եւս դարձած էր գէպ 'ի ստուար տանձենւոյ մօտը, որմէ կ'ուզէր պտուղներէ ժողովել իր սղայոց համար։

Ոն կողովը տանձով լեցուն ելլէն յետոյ՝ մինչդեռ պատրաստուեցաւ նորէն միանալու իր տղայոց հետ այս միջոցիս տեսաւ որ կողմնակի ճամբով երկու ձիաւորներ սանձարձակ կը վազէին։ Այս մարդիկները ճանանչեցաւ մը զինքեր ունէին, այնպէս որ Վարդուհին թէեւ շատ անգամ խիստ քաջասիրտ էր՝ բայց այս միջոցիս վախցաւ։ "Հմ, Աստուած իմ, ըսաւ ինքնին, միայն թէ ասոնք տեսած չըլլային զաւակներս, և իրենց չարիք մը չհասնէր։ Իր մտայ խռովութեան մէջ անկարելի եղաւ ծառին քով կենալը. այն որ դիտեց անոնց գալանի նայուածքնին. մայրական գութը կը դրդէր դէպ 'ի այն կողմն ուր թողուցած էր իր տղայքները։

Այն ատեն ձիաւորք տեսան՝ ու քննեցին նոյն տեղուանքն, և ապա իրենց արագաշարժ նայուածքնին չորս կողմն նետեցին՝ ստուգելու համար որ տեսնող մը չըլլայ. և վար իջնելով ձիերնէն գոյեցին ճամբան դողդոջուն Վարդուհոյն, անոնց այս շարժումէն՝ իրեն տեսակ մը երկիւղ պատճառեց, այնպէս որ երեսին գոյնը չըջեցաւ մեռեալի պէս, և չկրցաւ քայլ մ' առնուլ վախչելու համար։ "Տիկին, ինչ կ'ընէք հոս, պուռաց այս երկու օտարականին մէկը բեւեռելով անոր վրայ իր թափանցիկ աչուընները։

—Աստուած իմ, սիրելի պարոն, եկայ ժողվելու

վայրենի պատուհանէ, պատուհասեցոյ դէպ ի վայր դարձուցեալ։

—Ասլանին առանձին էք հոս, Հայդուց մեւ ձիաւորը։ Ալարդուհին մի՞պէտ միջի կը սեղմէր՝ ուռուցիւնն, ի վերայ այսր ամենայնի ինքնիրեն ոտ շեց տանելու, վախնալով որ իր ուղղքներն չպատնուի, ու քաջ շիմիած դէմքովմը. «Այ՛, բաղալովին ասանձին։»

—Դեռի ազէկ, կրկնեց առաջինը. մեր եռեւէն պիտի գաս։

—Ձեր եռեւէն գալ, ասղաղակեց Ալարդուհին զարհուրած, ձեր եռեւէն. ահ, գիտուիթիւն, ոչ ղրմեցէք ինձ, թէ ինչ ըրի որ ասղատուիթեան զրկուիմ։ Սիրէ ալարելքմը կամ ժողովրդու այս անտանելի մեղքանի մը պատուհներ՝ անհիմուիթեան ձանիչ հուրը շիջուցանելու համար։

—Խենդ ես դուն, ըսաւ երկրորդը, մոլեգին ձի ծաղով մը, պահէ զանոնք թէ որ կ'ուզես, և կեր եղիթ կը հասնիս, բայց պիտի տանիք քեզի կամաք կամ բռնութեամբ։

—Այ թ'նչս, Պարոնայ.ք, թ'նչ կ'ուզէք ինձմէ։ Հոս կ'ապաչիմ, թիոդուցէք զիս; բաւ Ալարդուհին ձրնկի վրայ իյնալով անոնց առջեւն, ողորմեցէք ինձ սաւ մը խօսեցայ ձեզի, առանձին չեմ. ինչն այս մանչատնեղուն եւոին երկու աղքատ տղայք ունիմ, որոնք դժբաղդ որբերը, ֆայր չունենալնին զատ երեսի վրայ ձգուած են բոլոր մարդիկներին. չունին ուրիշ նեցուկ մը կամ պատշտպան բայց զ'ատուած միայն եւ զիս, անհանգիստ սրտով իմ վերադարձիս կ'ապասեն հրամանս տուէք ինձ դառնալու անոնց քով։ Այսպէս սի անգութ կատակ մը շատ մի երթնցնէք։

—Կատակ չէ ըսածնիս. ոչ, արդարեւ այս բոլորը ձեր բարեւոյն համար է, ոչէոք էք գալ մեզի հետ,

Digitized by Google

որ հարկաւորութիւն ունիմք ձեզի նման անձի մը։ Անկուեացդ հանար ալ սուտ չէ ըսածնիդ, կրնան առանց քեզի ելլել այս անտառէն։ Իրթանք, շուտ հեծիր ձիուս վրայ, ապա թէ ոչ, համն առնել պիտի սամ.քեզի կապարեաց գնտակներուս։ "Այն ժամուն հանեց ծոցէն ատրճանակ մը և ուղղեց ծայրը Արդուհոյն կուրծքին վրայ, բայց հազիւ մէկդի առաւ. աւելի մեռած էր նա քան թէ կենդանի մը։

Ղարագործները ժամանակ չկորսնցնելու համար, մէկէն բռնելով հէք այրին դրին ձիուն վրայ. երկուքէն մէկն ալ ոտոր ետին հեծնալով մէկ ձեռքը զանիկայ ուժով բռնելու կը ծառայէր և միւսն ալ ձիուն սանձը. այս օրինակ թշուառ որսերնին առած ճամբայ ելան։ Այս միջոցիս դժբաղդ Արդուհոյն վրայ թմրութիւն մը պատելով, գոչեց բարձրաձայն. "Ո՜հ զաւակներս. թշուառ զաւակներս։" Այս միայն կարող եղած էին լսելու Հենրիկոս և Արիամ։

Մէկ ժամու մէջ կրցան անտառին մէջէն ելլել բայց միշտ ձիերը վազցնելով. և ապա ամայի տեղ մը վար իջան, որոնք բնականապէս կը ճանչնային նոյն տեղուանքը, և հանելով կենդանեաց սանձերը և խարազանի հարուած մը տալով ըսին. "Գացէք ուր որ կ'ուզէք, ալ հարկաւորութիւն չունինք ձեզի։" Այն ղոպէին աներեւոյթ եղան կենդանիները. վասնզի մարդապետնէ մը յափշտակուած էին. իսկ Արդուհոյն գալով ըսին. "Դեր երկուքին մէջ տեղէն պիտի քալեսս։ Հուսկ յետոյ ստիպուեցաւ հնազանդիլ անոնց սպառնալեացը։ Իւր աչքերն երկինք վերցուցնելով, քսաւ ան ատեն. "Հայր երկնաւոր քու կամքդ ըլլայ։ և քրիստոնէական ամեն բան Տիրոջը յանձնելով զօրացաւ իր հոգին։

Հարկ եղաւ մէկ ժամու չափ ալ ոտքով մացուցուցուց

ուրջերուն մէջէն։ Լեղերուներն, այծեամները սար-
տափած կը փախչէին ահագին վարաղ մը ելլելով
կ'ոգառնար, բայց երբ տեսաւ որ իր վրայ յարձակելու
նշան մը չերեւիր, անիմաստ թողուց անցնելու. վեր-
ջապէս հասան հարիւրամեայ կաղնիներով զարդա-
րուած բլրի մը վրայ, և ոմանք անդին անտեսանելի էր
ճամբան ստուար մացառքներէն. հոն ասոնցմէ մէկը
սուլիչ գործիքով մը ձայն հանեց. ուրուն արձագան-
գը բաւական հեռու գնաց, և միւսն իր ականջը
գետնի վրայ դնելով լռութեամբ մտիկ ըրաւ։

«Լա՛ւ, ըսաւ, շարժմունքնին կը լսեմ»։ Ա՛յրբ-
կենք մը յետոյ, մացառքները ճեղքեցան ու մար-
դու գլուխ մը երեւեցաւ։

«Լանուխ ետ դարձած է՛ք», բաւ այս մարդը.
և տեսնելով զողզոջուն Ալարդուհին, յաւելցուց
ժպտելով. «Ինչ ժողվեցիք այն տեղէն»։ Ա՛յս ըսե-
լով դէպ ի ետ քաշուեցաւ որպէս զի իր ընկերները
կարենան իրենց որսին հետ մտնել այն նեղ և նուրբ
անցքին մէջ։

«Տիկին, առջեւնէս քալէ. ըստ չարաբարոյներէն
մէկը, և մի վախնար. ինքզինքդ լաւ ընկերութեան
մը մէջ պիտի գտնես»։ Հնազանդեցաւ Ալարդու-
հին բոլոր ընդխմութիւններն ի զուր երթալէն
յետոյ։ Քանի մը վայրկեան գացին այս ստորերկրեայ
ճանապարհով խիստ սեաւ ճամբէն, յետոյ տակաւ ան-
ուսիկաւ ընդարձակուելով հասան լայնանիստ խորշ
մը, ուր տեղ ասոնցմէ ուրիշ հինգ անհատներ կա-
տաղի կերպարանքը ընկղմնած էին գետնի վրայ։ Ա՛ն-
կէն աչքերնին բանալով իրենց ընկերակիցը Պերտրոմ
և Պէրտենանտի շուտ՝ու երջանիկ գալուստնին շը-
նորհաւորեցին։

«Հա՛տ աղէկ, լաւ դործքեր ըսին». Հրէայն տա-

Digitized by Google

կաւին չկախուեցան ։ Այնպէս եղան իրենց առաջին խօսքերը ։

— Այ, միշտ կայտառ և շատ ազնիկ է մեր սիրելի Ֆրայիմը, պատասխանեց Պերտոլտ, և ուրիշ օրէն պիտի հանդիպինք անոր վաճառատունը մեր ոսկեթ դրամները փոխանակելու. մեր գործակալին բաժանորդաց ինչպէս յայտնի է, հարիւրին՝ յիսուն կը զեղջենք. զարմացաւ անիկայ մեր թալեռաց ուսակի դահեկանաց կատարելութեան վրայ, որ գիւրութեամբ կարելի չէ զանազանել սողդ ոսկիներէ ։

— Խիստ լաւ, բայց ինչ պիտի ընենք այս տիկինը, հարցուց մէկ ուրիշ դրամանենգ մը. (վասն զի հոն այս անարժան արհեստն ի գործ կը դրուէր)։

Ինչ խօսք է այդ, մէկէն պատասխանեց Պերտոլտ, մեր հինաւուրց ընտրեալ սուտաւ Չլեզան՝ իր կենաց ընթացքը կատարելէն ի վեր աղուեղութեան մէջ կ'ապրէինք, ստամբանուս յարմար կերակուրներու պատրաստութեան համար խոհանոցն այսպիսի սիկնոջ մը կը կարօտէր ։

— Հա, հասկցայ, պէտք ենք խոստովանիլ որ դուն ճարտարամիտ ես, և ամէն բան կը խորհիս. ուրեմն մեր ստորերկրեայ կայսերութեան թագուհուն պատուաւոր պաշտօնը պիտի վարէ ։

Այս միջոցիս բոլոր խմբին գլխաւոր բաժակները լեցուեցան այս բարեբաղդ դէպքին համար խմելու. ուրիշ բան չէին մտածեր բայց միայն երկու ընկերաց վերադարձը տօնել, որոնք զուարթադին կը պատմէին անոնց իրենց ճամբորդութեան դէպքերն երբէք երբէք ալ բարձրաձայն ծիծաղելով։ Այս չը մոռցան Վարդուհուն նուիրելու բաժակ մը գինի ճերմակ հայի մը կեղեւով. իսկ նա անտաւին մէկ կողմը առանձնացած՝ իր տղայոց ողորմելի վիճակին խորհելով աչու ընելէն ակամակիտ աղուերց պէս

պատասուած հեղեղներ կ'իջեցնէր, և կը մերժէր բան ուտելը։

«Տիկին Թագուհի, ըսաւ անոր երիտասարդ մարդ մը յանկուցիչ դէմքով, որ Կիլլեօմ կ'անուանէր, ամենեւին իրաւունք չունիք այսչափ վշտանալու, կրնար հոն աւելի գէշութիւններ պատահել ձեզ. բայց մենք ոչ աւազակ և ոչ հաքստահարիչք ենք, այլ միայն քաղաքներին ամրքելու կ'աշխատինք, որոնք միշտ իր քանցն համեմատ հակառակ կը վարուի մեզի հետ։ ոմանք մեր մէջէն աղքատութեան մէջ ծնած են եկեղեցւոյ մուկերուն պէս, ուրիշներն ալ դժբաղդութեամբ կորսնցուցած են իրենց ունեցածնին։ Է՛րդսրեւ ծոյլ չենք, կ'զբաղինք թալեռներ հընարելու որ մեզմէ կը պակսին. և այժմ քաղցր և ուրախարար կեանք մը կը վարենք։

—Օշուառակներ, պատասխանեց տրիուութեամբ Պարդուհին, զուր տեղը կը ձգնիք պատճառանօք հանդարտեցուցնել խղճերնիդ, ինքզինքնիդ այնպիսի ծաղր յանցանքի ներքեւ կը ձգէք, որ օրէնքը կը լուծէ նաւարանի աշխատութեան մասնելով. այնպէս որ անգնդի մի ծայրը կը գտնուիք, ուր ուշ կամ կանուխ ամբողջց մահ մը կ'ոստսէ ձեզ. ինչպէս կը համարձակիք ըսելու որ քաղցր և ուրախարար կեանք մը կը վարէք։

—Այդպէս կը խօսիք տիկին, կրկնեց Կիլլեօմ, յառաջագոյն մարդն այս խրատներն իմ առջեւս դրաւ, բայց երբէք անոր ունկնդրութիւն չտուցի։

—Երբոր արդարութիւնն յափշտակէ ձեզ, եւ երբոր գահին տոպրը բարձրանայ ձեր երիտասարդ գլխոյն վրայ, այն ատեն մարդ տուած պատուէրին յարգը կը ճանչնայ։

Ինչդեռ այս խօսքերը Պարդուհին կ'արտասանէր հաստատուն և անաչառ ձայնով մը, մէկէն դեռ

ղին ամպ մը ներկեց այս երիտասարդ մարդուն աչ-
տերը, և արտասուաց կաթիլ մը որոշեց բիբերուն
շրջանակը, հեռացաւ իր յուզմունքը ծածկելու հա-
մար, յետոյ գոչեց մեծաձայն. «Ճակատագիրս զիս
հոս նետեց, ուզեմ չուզեմ պէտք է ետեւէն երթալ։

—Լաւ սխալիք, կրկնեց Պարգուհին, ամենեւին
չտիպեր ձեզի հաստատուն մնալու չարութեան մէջ
առաքինութեան պողատայն փակուած չէ մէկուն,
կրնաք գտնել ձեր փրկութիւնն երբոր ինդրէք զայն։

—Հմ, տիկին կ'սկսի դատաւոր ըլլալ մեր վրայ,
ընդմիջեց խօսքը Արթէն. լռէ տիկին, աւելի ա-
զէկ կ'ընէք չքսելու առանց խօսքեր, հոս քարոզատե-
ղի չէ։ Հմ, ինչ գէշութիւն կայ խառնուելու
համար քիչ մը փողերանոցի տեսչին պաշտամանը, հե-
րիք է որ մենք ալ իրեն պէս յաջողակ ըլլանք, յաւել-
ցուց ուրիշ մը։

—Տիկին պատժապարտ յանցանք մ'է, ըսա օրի-
նի բոլոր ազգաց, պատասխանեց Պարգուհին։

—Նմիսա բարբաջմունք. մռմռաց Արթէն չը
գիտնալով ինչ պատասխանելը. լեցուց իր բաժակը
և խմեց երկու երեք անգամ, որպէս զի իր արթն-
ցած խղճի խայթոցը չներդործէ սրտին։

Իսկ Պերտոլտ որ խմբին գլխաւորը կերեւէր,
ըսաւ անոր, «ցորեկները միայն պիտի հանգչիք, վա-
սրն զի թէ որ ցորեկը խարոյկ վառենք՝ անոր մուխը
կը մատնէ զմեզ։ Ինքիայն ձեր պաշտօնը պիտի
ըլլայ կարգադրել ու մաքրել մեր բնակարանը, և կե-
րակուրներ պատրաստել ինչ որ բերենք քեզի, որ-
պէս զի երեկոյեան ժամանակ սկսիս եփել. յետայ-
նոյիկ կրնաք հաճութեամբ ընդունել ձեր քնոյ հրա-
ւէրը։ Երջապէս քու և մեր աշխատութիւնը գի-
շեր միջոցին է, ուստի մենք ստակ պիտի չունենք
իսկ դուն մեղի լաւ կերակուրներ պիտի պատրաս-

Digitized by Google

ուեռ, որուն շահը քեզի հետ եղբօր պէս պիտի բաժ-
նենք։ Լրթէ դիպուածով մը մեկը քրթմնջէ և կամ
ապառնայ քեզ առանց ականջ դնելու երբեք չպատա-
խանես, դու քու գործիդ պարապէ, և պիտի տես-
նես փոքրիկին անցնելը գլխէդ՝ առանց իմանալու քու
վրադ։ Բայց քու պաշտօնդ անթերի կատարելու
համար միշտ փոյթ ունեցիր, և՝ թէ վերայ այսր ամե-
նայնի զգոյշ եղիր ապաշխարութիւն քարոզելու մեզ
Սակայն և այնպէս խիստ երջանիկ պիտի ըլլաս մեզի
հետ։

—Ի՜հ, ղ ժբաղդ ղաւակներս, գոչեց Պարդուհին,
մէկ կողս քաշուելով։

—Սոյն է, սիկին, որ թող տուիր երկու ղա-
ւակներդ անտառին մէջ. հարցուց Պերտոլա, ա-
չուքները անոր վրայ դարձուցեալ, կարծեցի թէ
ասիկայ կեղծիք մ՚է համոզելու համար մեզի որ
արձակենք զքեզ։

—Ամա՛ն, երկու խեղճ տղայ քներ, կրկնեց Պար-
դուհին հեծեծանօք. ոչ հայր և ոչ մայր ունին, և
առանձին մնացին անտառին մէջ երեսի վրայ ձգուած.
դուցէ ո՞վ գիտէ այս միջոցիս գէշագէշ կերուած ըլ-
լան վայրենի գազաններէն։

—Ընդարձակ ասիկայ դժբաղդութիւն է, ըսաւ
Պերտոլա խօսքը կտրելով, բայց ինչ կ՚ուզես որ ընեմ.
Հանդարտէ սիկին, ո՞ գիտէ քու կարծածէդ աւելի
երջանիկ պիտի ըլլան գուցէ։

—Շրկինք պաշտպանն ըլլայ որբերուս. բաստ այս
դժբաղդ տիկինն ու լուեց։

Յապէս օրեր անցան, ամիսն ու տարին ալ ա-
նոնց հետեւեցան. բայց հէք այրուոյն դուն հեծե-
ծանաց և ոգեխիլ հառաչանաց՝ վերջ մը չկրցան շը-
նորհել Շատ անգամ, մանաւանդ՝ գարունը բոլոր
բնութեան կենդանութիւն տուած ատեն իր հանգըս-
տութեան ժամերն անտառին մէկ կողմն առանձնա-

Digitized by Google

ցած ազատիքով կ'անցուներ, ուր ֆռանգերն իրենց կա-
նանց ազատ հորդանու զգեստներով պճնեալ գիշերա-
յին զով հովին հեղեկ կը ընէին, միայն տեսքերուց ա-
սաւելունը կ'աւելցնուն Թեան վրայ տիրոց այս խորունկ
լռութիւնը, որոց մէջ ճնկան վրայ գալով աչքերն
ու ձեռքերն հանդարտ խաղնով վերը բարձրացուցած
կ'սպասէր արքասամեծ ալոյք և մեղմ ձայնով երգե-
լով, զորութեան Աստուածն ու գթութեան Հոգի
նոքին ազնութեան կանչելու . . . »

«Ո՛ր ինքնք . . . ուր են վասերք խաղաղ,
Ո՞ր բերկրութեան իմ օրեր . . .
Ո՞ր զայն վանեց հոգմին ճիւաղ.
Ես ուր ազատք իմ անտէր . . . »
—Անդր կը փայլէր արեւ ամիրամ,
Սիրուս լուսաւոր էր արդէն.
Ինոյշ գեղեցիկ ինչէր ինձ մեղմ,
Ընդանդէս բերանս փառք յինէն »
—Ան ինչ սիրոյս հեզ առարկան
Բաղդն ոխերիմ չէր առած,
Էր և հրճուանք մեզ բնական
Ու ի բարձանց էր եղած »
—Ո՛հ, ճիւաղ դու ամիկ տրտմութեան,
Ինչ ես եղ յեթեր իմ.
Պիտի իշխէ քու գաւազան,
Ուա, ամ նեղէ, ոխերիմ . . . »
—Ինչ անգամ մ' ալ տեսութեան
Ընժանանալ դիպէր ինձ,
Ինոյց զերեան թիւրել հանայն.
Ո՛հ, կատարէր այս իմ իրձ »
—Տէր զորութեանց քեզ կ'ազաչեմ.
Լսել հաճէ հիրոյս ձայն.
Բաղկացիր տակ ամդ կ'աղերսեմ,

Գերծիլ չարէն լեր պաշտպան։
—Լու մի թողուր երկար տեւէ
Գերութեան մեր խիստ շղթայն.
Լրար տեսնել ահ, մեզ օգնէ,
Ամէն բանի բաւական։
—Լթէ բաղդ մեր թոյլ տայ այսպէս
Խաժանում մեր երկարիլ.
Առաւչանքներ յոյժ դառնապէս
Ընձեն օր մի կենաց թել։
—Ահ, անգամ մ՚ալ կարենայի,
Տեսնել զերես զաւակաց.
Վ Լիշտերուս վերջալ կուտայի,
Լթէ գաղանք չեն յօշած։
—Հայր դժբաղդից Տէր գթութեան,
Հերիկոն իմ ուր արդեօք.
Լու Մարիամ, մահուան ճիրան,
Հայց ես . . . ապրիմ . . . ի մորմոք։

Վարդուհին մինչեւ հոս, այն աղետից՝ և իրեն ճմլող սրտին վրայ գահավիժած լեռնաձեւ դէպքերը, բաւական հաստատուն ձայնով պատմեցաւ երգելէն յետոյ սկսիլ կրցաւ տանել, այս վերջին ցաւալի յիշատակէն և բիւրատոր սնձկութիւններէն խորշուած դէմքը գոյներով՝ Թողուց երկու արտեւանունքն որ առաւ արտասուաց ծովուն մէջ լոյան։ Լորէն հոգի առնելով . . . «ահ, խիստ քիչ ատեն, դալաձեալ ոգեկործան տրտմութեան և հեռաչանաց սեաւ ամպերն՝ ուրախութեան արեգակը շուտով ծածկեցին . . . ով յոսեկալի յիշատակ . . . որ միսիթարութեան կայծ մը անգամ չթողուցիր հէք սրտոտս կեդրոնը. բայց ձեր սիրոյ յիշատակն իմ սրտիս մէջ յարատեւ և անխուսելի է, մինչեւ դարեր անցգամ սահին. գերեզմանիս մէջ գահավիժուելէ ետքն

ալ . . . ահ , մնացած աչերուս՝ լուսոյ երկու շաղ-
ժառիթներն ալ անգութ և բռնաւոր ձեռքեր հա-
մարձակեցան անջատել »։

Գիշերը յանկարծ կը տագնապէր խեղճ եւ կ'երազէր
այս խօսքերը։

Թողուցէք տեսլիք իմ . . . անգամ մ'ալ տեսնեմ
. . . խիղճ ունեցէք . . . ինչ . . . զատել . . . որ-
մէ . . . հոգիէս , լաւ , բայց անոնցմէ անկարելի . . .
ուր կ'ուզէք . . . ալ բաւական է . . , մի՞ չարչարէք
դժբաղդ մը . . . ձեզի հետ գալ . . . զաւակներս
. . . ահ . . . , զաւակներս . . . աւելի կ'ընտրեմ
մեռնիլ քան թէ երեսի վրայ թողուլ . . . մի , կ'ա-
ղաչեմ . . . ո՜ . . . աւա՜ղ։

ԳԼՈՒԽ Է.

Տղայք գուր տեղը կը փնտռեն իրենց մայրը։

Հետեւեալ օրն մինչդեռ աշնան արեգակը հու-
րիզոնին վրայ կը շողշողար , մէկէն Հենրիկոս և Մա-
րիամ արթնցան։ «Մա՛յրը , սիրելի մայրս » . եղան իր-
ենց առաջին խօսքերն , վասն զի բարեբար քունը
բոլորովին ջնջած էր իրենց հոգւոյն մէջէն գիշերային
ձախող դէպքերուն յիշատակը։

Մինա՜ , որ իրենց մօր քաղցր ձայնը չէր ղատտա-
խանէր։

«Ցատուած իմ , ըսաւ Մարիամ , կը յիշեմ , դեռ
քունը աչքերնիս չգոցած անիկայ բացակայ էր մեզ-
նէ։ Հենրիկոս , դու չե՞ս յիշեր։ Այո՛ , բայց պէտք

Digitized by Google

ենք որոնել զինքը և միանգամայն ախորժակներս գոհ ընելու համար՝ նախախնամութեան անտառին մէջ ծառերուն վրայ սփռած մրգերէն ներէն հաւաքելով. գուցէ մայրերնիս՝ այն տեղուանքը քնոյ մէջ թաղուած գտնենք, վասն զի մայրական գութը զինքը խիստ յոգնեցուց»։ Խեղճ որբերն այս խաբող յուսով պարարած ճամբայ ելան։

Բիչ մը յառաջանալով շատ ուրախութիւն զգացին իրենց մօրերնուն պզտիկ կողովը տեսնելով, որ դեռնի վրայ ձգուած էր. կարծեցին թէ ինքն ալ մտեր է. այսպէս երկայն և զուր խուզարկութիւններէն յետոյ ստիպուեցան նստիլ տանձենւոյն մօտ, և յուսահատութիւնը խիստ դառն ըրած էր այն պտուղներն որ անօթութիւնը բռնադատեց ուտելու։

«Ուստի հիմա ուր երթանք, հարցուց Ենրիկոս, դեռ եւս յառաջանանք անտառին մէջ....։ Ո՜հ, Աստուած իմ, օգնէ հէք որբոցս և լսէ պաղատանաց, մեզ դարձուցելով մայրերնիս...»։

Այո, պատասխանեց Պարիսմ, «պէտք ենք յոյսերնիս հաստատ խարսխել առ Աստուած, վասն զի անոր Տեսութիւնը խորհուրդ են, ինչպէս որ սորվեցանք քրիստոնէական վարդապետութեան մէջ. նոյնպէս մայրերնիս ալ ասոր նման շատ դասեր տրուած է։ Բարեածք չեն կրնար խեղճահաս ըլլալ թէ՝ ինչու այսպէս կամ այնպէս բան կը պատահի, ասոր հակառակ պարտաւոր ենք վստահ ըլլալ նախախնամող բարերարին վրայ, որ կ'առաջնորդէ ամէն բան մեր երջանկութեանն համար»։

Ենրիկոս վայրկեան մը մտածեց այս խօսքերուն վրայ, որ բարեպաշտ քոյրն արդէն իր տարիքին պահանջած կրթութիւնը լաւ սորված ըլլալով և ըսածներն ալ արդիւնք գտան իրեն սրտին մէջ, որով հանդարտութիւնը տիրեց վրան։

Digitized by Google

Յետոյ ոտքի վրայ եկեալով կրկնապատկեցին իրենց ընթացքն գտնելու նպատակաւ դէպ 'ի անտառին խորերը այն անհաւթ տեղը։ Ամենքն և ոստոց ոստ ելեալ ներս կրկին կը խոնջեցուցէր զիրենք։

Լրբեան յոտակ աղբիւրի ծարաւնին կ'անցուցանէին և հացի տեղ աղ թուխթերը ուրուտն կը մարէին, որն որ բնութիւնը հոս առատութեամբ ստեղծած էր։ բայց այս աղ այնչափ ոնդարար զօրութիւն չունենալուն չէր ամրէր իրենց քաղցը։

Գիշերը, իւր բնական անդնդային վերադարձով ծածկուած՝ երբ տիեզերքին լռութեան կ'ընդառնար, մէկէն արեւը սահմանկելով լեռներուն ետեւը թոյլ տուաւ։ դեռ այս խեղճերը՝ փարանալ արձան դարձած էին՝ առանց գիտնալու անտառէն ելնելու մէկ կերպը։ Քանի զի շատ խառնուած էին, և թիստ հեռու կը գտնուէին այն ճանապարհն ուրկէ կ'անցնին կառքեր։

Գիշերային ցուրտ հովն ալ անդորձ չէր, կը սառուեցնէր առանց մարմինը։

Անաբիտամ տեսնելով եղբօրը ցաւին, մէկէն բարձրաձայն հնարք մը իր մտքին մէջ ծագեցաւ, բուսական մանուռներ ժողվելու որն որ խիստ առատ էր նոյն անտառին մէջ, և ասով անկողին մը Հեւացուցին հին կաղնիի մը տակ, որն որ կ'ապահովէր զիրենք հովէն։ Հենրիկոս օգնեց քրոջը այս գործողութեան առթն, այնպէս որ երկուքը միատեղ շուտ մը կրցան ահագին շեղջակոյտ մը բնել, որուն մէջ նեստուելով ծածկեցին վրանին այս մամուռով։

"Կարծեմ, Հենրիկոս, որ ոչիսի չմոռնաս աղօթեալ Աստուծոյ, դեռ քուն չեղած, ըսաւ Անրիանոս։

— Ամէն ոգեորեւ, չեմ մոռնար երբէք։ Քանի զի միշտ անիկայ ինամող Հայր է, միանգամայն մայրերը նիս ետ դարձուցանելու մեղ նոյն այս գիշեր։

—Վ՞ՀԻ, այո, ասիկայ անկարելի չէ, նայնպէս կը փուքթամ՝ ալ խնդրելու այն շնորհքը, և ասիկայ ի գործ դնենք մեր որոշի խոր անկիւններուն մէջ, մինչեւ որ բնութիւնը ծանրանալով գոցէ բիլբերնիս։

—Ու ինչո՞ւ վստահութիւնիս յուսահատութեան ասակ կ՚ընկնինք, ասով նախախնամութեան գէմ կը մեղանչենք. մեր Ս. Բարբին գուքը մեծ, և բաղուկը զօրաւոր է . . . ասկայն թէ որ այս փոխադրական բաղդն երկրիս վրայ մէյ մ՚ալ զմեզ քովէ քովէ չբերելու ըլլայ, անշնչաշունչ մեռն, ասասեղաց վրայ սպասարատեալ դարպասին մէջ կը սեանուինք. նա եւ արդէն իր կենաց արեւէն զրկուած սիրելի հայրերնիս ալ հոն է, ուր աղէտք և ցաւ ամենաւին սներեւոյթ կ՚ըլլան։

Խօսակցութիւնին ընդմիջեց քաղցր քունը՝ փափուկ մարմինները հանգիստ տալով, և մանուկը կը պահպանէր ցուրտէն։ Երջանիկ անուրջքին մէջ սեւան իրենց սիրելի մայրերնին, և իրմէ խրախուսական խօսքեր լսեցին լի խանդաղատութեամբ և բարեպաշտութեամբ։ Յանկէս գիշերն իրենց եղջանկութիւն պարտեւեց որ ցորեկը զլացած էր։

Յն ինչ արշալոյսն քրքմափայլ, կը հրաւիրէր սարարածոց գերագունին ի փառաբանութիւն . . . Ուաջին անգամ ասա հրաւէրն ընդունող թռչունները, սրդէն բոյներուն թողուցած՝ բարձրագոչ ծառոց ոստերուն վրայ իրենց գլուխ ներդաշնակութեան դայլայլիկներով սրթնցուցին տողայքը. և նայն ատեն երկինքը թանձրամած ամպերով բեռնաւորուած էր, չդանդաղեցան ուժգին անձրեւի փոխուելու։ Արեւաղդաբար կայնիին թանձրախիտ տերեւները և մամուռին շատութիւնը, ուր ընկողմանած էին՝ արգիլեցին թրջուելու վտանգէն։

Որը իւր կէս շրջանն ըրած՝ պարկեցաւ երկինքը

անձնք ալ ելլելով թողուցին իրենց ապաստանարանը, շնորհակալ ըլլալով Աստուծոյ զիրենք պահպանելուն։

Օրուան մնացորդն ալ քայլեցին, միշտ փնտռելով իրենց մայրը։ Այց երեկոյն լքուց անոնց սրտի արիութիւնը, վասն զի խիստ տկարացած էին յոգնութենէ և՛ տխրութենէ պիտոյից։ Այս գիշեր, նա խընթաց օրուան պէս մամուռէ պատրաստուած անկողին չկար, և ոչ հռելի անուշաբոյր աղուսող բազուկ մը կը տեսնուէր. ուստի յանձնեցին զիրենք թշուառացելոց միմիայն ծանօթ՝ արտասուաց և հեծեծանաց ձեռքը, և միանգամայն հառաչանօք ըսել. «Այրիկ, մայրիկ, ո՞ւր ես»։

Իրենց այս օրուան դժբաղդութիւնը զեղուն կ'երևէր, անօթութիւնը մէկ կողմէ, ցուրտը և անհանգստութիւնը միւս կողմէ իրենց կորուստը կը փութացնէր։ Այց քարեսէրն Աստուած, երբէք չէր մոռցած զանոնք. ինչպէս բանաստեղծ մը կ'ըսէ։

«Այն սուրբ էակը երկնից կամարին աստեղաց ընթացքն ընող կուտայ, և ծովու եզերքին վայելեալ անթիւ անհամար աւազը կը համրէ ու անոնց թիւը գիտէ, նոյնպէս մարդկան այնչափ բազմութիւնը ձեռքէ չթողուր. անոնց ամենուն կարօտութիւնն ու վիշտը ճանչնալով կը հոգայ»։ ուստի ալ նակնկալ օգնութիւն մը յու զարկեց անոնց։

Արբոր գիշերն ագռաւի գունով ամէն բան ծածկած էր, քանի մը մղոն անդին տեսան լոյս մը։ Այն ատեն յիշեց Արիամ որ իր մայրը յիշատակած էր այն ածխագործներու խրճիթները, որոնք անտառին եզերքը կը գտնուէին, խորհեցաւ որ այս լոյսը կրնայ ըլլալ որ նոյն խրճիթներուն մէջէն է։

Մէկէն Արիամ ուրք ելլելով լսաւ, Հենրիկոս, այժ սա, դադրեցնենք մեր արտասուաց կաթիլները. վասն զի Աստուած չուզէր ամենայնեսին անհա... մը

ունգամ իր ողորմութենէն զրկելու, քանի որ անոր Նախախնամութիւնն ուրանալու չափ կոյր մարդ մը չկրէ։

Կարծեմ, ասոնք մարդոց բնակութիւններն են, կը տեսնեմ այս վարի կողմը փայլող լոյսը։

Այո, կը տեսնեմ, «պատասխանեց Հենրիկոս»։ Այս ըսելով երկուքն ալ գիշերային մութը պատուոյ լուսափիւռ այս նուռոյ հետքը իրենց առաջնորդ առած ճամբայ ելան։ Հուսկ յետոյ մէկուկէս ժամ մէն ետեւ լսեցին շան մը հաչիւնները, այն որ, ոյն վայրկենիս մէջ, աւելի գերազանց երեւցաւ իրենց ամէն ներդաշնակութենէ, վասն զի տարիկայ կը յայտնէր այն տեղերուն մարդկան բնակութիւն ըլլալը։ Յանկարծ սափարակ տեղ մը տեսան առանց ծառոյ և հոն քիչ մը հեռուն խրճիթի մէջ վառարան մը կը բակով։ Այսոր բոցն էր որ հեռուէն լոյսի տեղ ըմբռնած էին։ Սկրտերնին սկսաւ ծոցերնուն դէմ սաժգին զարնել, ուստի կրկնեցին քայլերնին աւելի շուտ հասնելու համար այս խրճիթը որուն մէջ կը յուսային ապահով ապաստանարան մը գտնելու։

ԳԼՈՒԽ Ը.

Աճխագործին դնտանիքը։

Դեռ կիսագունաը՝ գիշերին սեաւ ստուերը չէր մերկացած, Հենրիկոս և Արիամ խրճիթին դուռը երեսի վրայ բոց գտնելով, կրցան տեսնել մէջի եղողները, որոնք այր և կին ծեր և տղայ, ամէնքն ալ վառարանին բոլորտիքը շարուած կը ջեռնուին։

Ներս մտան, և երկչոտ ձայնով մը ներում խնդ-

դրեցին անանցանելի անհաղթահարելիութիւն պատճառելու։ Այս սողայոց յանկարծական երեւոյթն անհնարին զարմանք պատճառեց բոլորին. նոյն գերդաստանին հարիւր որ խիստ մարդ մ՚էր, ըսաւ. «Ահ, ի՞նչ... երկու սողայք ամբարձին վար գահավիժած պիտի ըլլան այս ատրպի տեղւոյս մէջ։ Ասկից կուգաք և ուր կ՚երթաք։

Տէր իմ, մայրենիս կ՚որոնենք, որ կորսնցուցինք այս անտառին մէջ, պատասխանեց երկչոտութեամբ Մարիամ։

Արդ կ՚ապաչեմ, հնարք ըրէք բնակութիւն մը մեզ այս գիշերուան համար, վասն զի մութ է և սաստիկ ցուրտ անտառին մէջ, ժիանգամայն անօթութենէ կը մեռնինք...։

Լա՛ւ, կրկնեց այս մարդը, գուցէ անիկայ ձեզ մէջ զերծանելու համար սատանկ հնարք մը՝ ի գործ դրած ըլլայ։

Մեռնելո՞ւն, գոչեց Հենրիկոս, մեր մայրն սատանայ բարի անձ մ՚էր որ երբէք աշխարհիս բոլոր մեծութեան համար մեզի երեսի վրայ թաղուցած չէ։

Ուրեմն, որ գաւառէն էք ո՞ յաւելցուց ածխագործը՝ բռնելով Մարիամին բազկէն կրակարանին մերձեցուց լաւ մը բոցին նշոյլով զննելու, մինչ դեռ իր զաւակներն՝ երկուքը չափահաս տղայք էին և երրորդը աղջիկ մը գրեթէ Մարիամին հասակակից, Հենրիկոսին բոլորտիքը շրջապատուած վերէն՝ ի վայր կը նայէին. ապշած դէմքով մը, որպէս թէ նոր թանգշան բան մ՚եղած ըլլայ։

Այդ տան տիկինը, աւելի դիմած, գոչեց զանազանատարանին վրայ հրաւիրելով իրենց առած ճանապարհին ցնորոցանելու։

Ածխագործն՝ այն տեսնելով, սկսաւ քիթին ուղղէն մրմնջել, «հարբեալ թէ մեզի բաւական հոգ ու-

Digitized by Google

նինք, ահաւասիկ երկու մոլորած մուրացկաններ ալ։ Եկան մեր բազկացը վրայ ծանրանալու։

—Այդը առուտու պիտի երթանք, երկնից Արիամ, անոր տմարդութիւնը վրայ վշտացած։ Չե՞ երբեք չենք ուզեր բեռ ըլլալ ձեզի, միայն թէ այս դիշեր . . . ուրիշ որ քաղցած ենք նէ, բարերարն Աստուած վաղը կ'ապրի մեզ ճամբու մէջ գտնելու քանի մը մրդիկներ։

—Զէկ ասրեմն, պատասխանեց այս խստասիրտ մարդը. յարդէ անկողին մը կրնամ այս դիշերուան համար շնորհել։

Ան ասոնց Արիամ և իր եղբայրը խորհեցան դարձեալ այն չքաւոր բայց ողորմած պառաւին խրճիթն երթալու, որ զիրենք շատ սիրով ընդունած էր։

Երբոր քիչ մը տաքցան, ածխագործն ըսաւ իր երէց որդւոյն. կանթեղով մը առաջնորդէ անոնց սխտորը, ուր յարդէ անկողին մը պատրաստելու նայէ։

Տիկինը, որ մինչեւ ան պահն քիչ խռովկոտութեան խառնուած էր, հաւանեցաւ անոնց նայիլ սեղը երթալուն. գարձաւ իր երկանը երկիւղով մը ըսաւ. «Պէտք կարելի է եռ տանիմ, վասն զի անխոհեմ Յակոբը գուցէ կանթեղով հրկիզութիւն մը պատճառէ։

—Ի՞նչ ինչպէս որ կ'ուզես, պատասխանեց այրը խրճիթին ետեւէն կողմն անցնելով։ Տիկինն երեւոյթ մը ընելով թէ՝ պահարանը կը կարդադրէ, և անկէ բան մը առաւ զգուշութեամբ իր գոգնոցին տակը պահեց. յետոյ լապտեր մը վառելով բաւ Արիամին և իր եղբօրը, որ իր ետեւէն գան. հնազանդեցան անոնք ալ. վասն զի տիկինը վատահութիւն կը նե՛ր-շնչէր։

Խրճիթին քովը պզտիկ սենեակ մը կար մամուռով ծածկուած, որ իրենց միակ կոմին գիշերային սպասաւանատարանն էր, նոյնպէս իրենց շան։ Այս երկու հեն-

Digitized by Google

գանեաց ընկերաութեամբը Հենրիկոս և Մարիամ կը պարտաւորէին գիշերին մնացորդը հոս անցուցանել։

Ծխագործին կինն ախորը մտնելով դուռը գոցելէն յետոյ, հանեց գոգնոցին տակէն բաւական մեծ կտոր մը հաց, և երկուքի բաժնելով տուաւ այս խեղճ աղջկոց. ըսելով, «Կերէք այս, զաւակներս, բայց մի խօսիք բան մը ձեզ տալս, վասն զի ամուսինս չարաչար կը բարկանայ ինձ»։ Նկէ ման մը առնելով ակաւ կովէն կաթ կթել, և բաւական քանակութեամբ ալ անկէ նուիրեց։ Մինչդեռ Հենրիկոս և Մարիամ, այսպիսի բարեսիրութենէ շարժած կ'արտասուէին ուրախութիւնէն. անոր և միանգամայն Աստուծոյ շնորհակալ ըլլալով, որ իրենց այս ողորմասիրտ կնոջ ձեռքը սովու վտանգէն ազատեց։ Այս բարի Տիկինը, անոնք ախորժով իրենց ընթրիքը ըրած միջոցին, չոր խոտերէ թաւ անկողին մը պատրաստեց։

«Դա այժմ, տղայքս, գգուելով ըսաւ քաղցրութեամբ, քուներնիդ եկած ատենն հանգստացէք ասոնց վրայ, և մի վախնաք ոչ կովէն և ոչ շունէն. երկուքն ալ խիստ մարդասէր են և ձեզ չարիք մը չեն հասցուներ։ Այրթամ, գիշեր բարի, անոյշքուն կը բարեմաղթեմ ձեզ։ Աղուան օրն անհամբերութեամբ կը սպասենք. բարերար Տէրը դարձեալ ձեր վրայ խնամք կը տանի»։ Այս ըսելով թողուց զանոնք։ Հենրիկոս և Մարիամ յետ ընթրեաց քուներնին չյապաղեց աչքերնին գոցելու, բայց Աստուծոյ աչքը վրանին բաց ըլլալով անոր հսկողութեանը տակն էին։

Տուկաւին Արշալուսոյ գալու ատեն աւետաղ Հրեշտակին ձայնը դեռ չկտած, իրենց բարերարին ստնտաձայնէն արթնցան, որ կուգար դարձեալ կովէն կաթ կթելու. նոյն ատեն ախոռին ճեղքէն անուշիկ զեփիւռը մեղմութեամբ կը փչէր, գոգցես ախ-

եղերքին խաղաղութիւնը չվնդովելու համար թռչունք իրենց վերջին նիրհումը կ'ընէին։ Այս բարեփրտութիւնը դեռ չմեկնած կտոր մը հաց նոյնպէս սիաւառակով կաթ թաղուց, և ամենապարանոց դուրս ելելու ատեն պատուիրեց որ իր ամուսնոյն երմիան շնորհակալ ըլլալու իրենց բնակութիւն մը շնորհելոյն, բայց առանց խօսելու ինչ որ իրենց ուսած է։

«Բարի, բարի, պատասխանեց մէկէն ածխագործը՝ երբոր գացին շնորհակալ ըլլալու շնորհագեղ և համեստ դէմքով մը. իսկ այժմ ձեր վիճակը ինչպէս ուրի ըլլայ։ Բան մը չունիմ որ նուիրեմ ձեզ և մի յուսայք որ կարենամ միգեղէններ հոգալու, որովհետեւ. ձմեռը մօտ է։

—Տէր իմ, ըսաւ Արիման, որդէն ազնուական տիկին մը կը ճանչնանք որ մեզ կրնայ հիւրընկալել. թէ որ կարենայինք սահմանագլուխ եղող Օպէրկ գիւղաքաղաքին ճամբան գտնել մինչեւ հոն հասնելու համար արդէօք ինչպէս ընենք։

—Օպէրկ, Օպէրկ, կրկնեց ածխագործը, ա՜հ, այո՛, կը ճանչնամ այդ կողմը, որ ասկէ տասը մղոն հեռու է։

—Միայն անտառին մէջէն ելլելու մէկ հնարքը ցուցնելու մեզ շնորհք ընէք, պատասխանեց Ջենրիկոս, անկէ անդին կրնամք դիւրութեամբ ճամբան գտնել։»

Այն ատեն ածխագործին կինն ըսաւ երկչոտ ձայնով մը. «վաղը Բաղդատ քաղաքին իշխանը. այս տեղուանքը մարդ պիտի յուղարկէ ածուխ գնելու, չե՞նք կրնար ապլորդին աղաչել որ այս երկու տղայքը իր կառքով մինչեւ քաղաք տանի։

—Ա՛յո՛ղը, բայց պէտք պիտի ըլլայ այսօր մեր տանը մէջ պահելու, ի վերայ այսչափ ամենայնի կերակ-

բեր զանոնք, պատասխանեց վայրենամիտ և անգութ մարդը։

—Այդց աղէկ, ողջամտութեան գործ մը կ'ըլլայ ասիկայ, ինքնին ամուսնոյ, և մի գիտե թէ օր մը պիտի չվարձատրուինք ատոր համար մեր հարազատ տղայոց ձեռօք։

—Այո՛, միշտ շատ լաւ, Ճշմարիտ Սամարացիի մը պէս պատասխանեց ածխագործը, բայց գիտես որ ինչք մեծերուլու կերպն այսպէս չէ։

—Այսօր կունան ատոնք իրենց պարէնը շահելու չափ աշխատիլ թէորմեր գեռնախնձորները քաղելու համար օգնեն մեզ, կանուխ կը լմնցուենենք, կրկնեց այս բարի կինը։

—Հատ բարի, թէ որ ուզեն աշխատիլ կունան ուտել, բայց ուրիշ եղանակաւ երբէք հաց չեմ տար։

Գործն այսպէս կարգադրուած. ածխագործն առաւ բրիչն և բոլոր իր քնոտութիւնը՝ անոնք ալ պատրաստուեցան ետեւէն երթալու։ Հոն Հենրիկոս և Սարիամ իրենց ուժին համեմատ ոչնչափ եռանդ գեամբ և ժրութեամբ կ'աշխատէին որ նոյն ինքն ածխագործն սկսաւ գովութիւններ տալ անոնց իր ծոյլ և չարակամ տղայոց աւելի որ օրինակ առնուն։ Կէս օրուան ճաշին տաք կերակուրներ պատրաստուած ըլլալուն մեծ ախորժով Հենրիկոս և Սարիամ ալ վայելեցին անոնց հետ՝ առանց դժգոհութեան բառ մը անգամ լսելու. որն որ հեղեղէն ետքը գեռ այս օրինակ լաւ չէին ճաշած։

«Հատ կը մտածէի որ սոյլոյդը չգար վաղը, բսաւ ածխիւ տիկինը. և խիստ հաճութեամբ դեռ քանի մը օր կը սպասէի զձեզ, վասն զի զաւակներս տկարացած էք. և պէտք է քիչ մը զօրանայք»։

Սարդասէր տիկնոջ այս բարեպաշտ փափագն աքդեամբ կատարուեցաւ. սոյլոյդն ալ ուրիշ տեղ զբաղած ըլլալով մինչեւ ութ օր չերեւեցաւ. և երբոր

եկաւ, Հենրիկոս և Արիամ սատրիկ եռանդով աշխատելուն համար ածխագործին համարումն ըստացած էին, որ ինքնին աւաջարկեց կենալ իր քովը։

Պէտք էր տեսնել Արիամ և իր եղբայրը գործ ծողութեան ատեն, թէ ինչպէս մտադրութեամբ և յաջողակութեամբ կ'աշխատէին։ Երբոր ածխագործը անտառն երթալ իր խարդկը յարդարելու, կը հետեւէին անոր օգնելու համար բոլոր գործողութեան մէջ, պարապ եղած ժամերնին ալ զբաղման առիթներ կը մնուռէին. այնպէս քրտամբ երեսաց կ'ուսէին իրենց հացը. թէպէտ և իրենց տարիքը և զօրութիւնն այնչափ դժուարին աշխատութիւններ տանել չէր ներէր։

Այսպէս հոս կենալով կը յուսային օր մը անտառին մէջ իրենց մայրերնին դտնելու. որուն համար ածխագործին առաջարկութիւնը սիրով ընդունեցին։

Ամեն իրեն հետ այս տղայոց աշխատութիւններ բերաւ, բուրդ մանելով գուլպայ կը հիւսէին նայնպէս ուռկան շինել սորվեցան ձուկ որսալու համար, որն որ ածխագործը քաղաքը կը տանէր վաճառելու։

Արիամ իր հանգստեան ժամերուն մէջ իր եղբօրը բաւրգ բաճկան մը հիւսեց, որուն համար ածխագործին կինը բաւրգ ընորհած էր, սորվեցուցնելու անոր այս տեսակ բաներ շինելը։ Այնպէս իրեն ալ ձեռք մը զգեստ շինելու համար բաւական քանակութեամբ բուրդ եւս տուաւ ձմեռուան համար, վասն զի երկուքին ալ հանգերձներն հինցած էին, և այս խիստ եղանակին անպարմար։

Այսպէս Հենրիկոս և Արիամ, հանգիստ, յիշեալ ընտանեաց տերերուն գոհունակութիւնը վայելած միջոցին՝ որոց անկիրթ տղայոց նախանձը շարժած էին, հետեւաբար օրքան զօր անուանելի սկը-

ան ըլալ։

Երբ գալուն՝ կենդանայոյց բնութիւնը, Մարիամ, որ արդէն իր հասակին տասներրորդ շրջանն հասլսած էր, ըսաւ իր եղբօրը, «իմ սիրելի Հենրիկս, Աստուած չուզեց որ գտնանք մեր սիրելի մայրը. գուցէ մեր հօրը միանալու գտցած է երկնից մէջ, ուր կը վայելէ անիկայ համեստ և ուռաքինի մարդոց սեպհականեալ բոլոր երջանկութիւնները։ Լաւսի անօգուտ է հոս երկար սպասել, մի գուցէ այս վատ տղայոց վնասակար օրինակներն ազդեցով մեզ 'ի վախճանի մենք եւս չար և վատ ըլլանք նոյնպէս, Տէրը պահէ, ասիկայ աշխարհիս բոլոր դժբաղդութիւններէն սոսկալի է։ Երթանք այն ազնիւ Աննա տիկինը գտնելու, կը յուսամ չմերժէր մեզմէ իր խնամքը։

Հենրիկոս հաւանեցաւ. քրոջն ըրած առաջարկութիւնը դոմելով, միանգամայն ապագայն հեռատեսութեամբ մտածելուն վրայ զարմացաւ։

Իրենց պրաշեալ ճամբորդութեան օրը հասնելով՝ թողուցին այս խրատիթը. ինքզինքին Աստուծոյ պաշտպանութեանը յանձնելով։ Մեկնելու միջոցին իրենց տշխոյժ երախտագիտութիւնին յայտնեցին։ Ծխապորձին կինն արտասուօք սոյլորգին խնամոցը յանձնեց, որն որ խոստացաւ առաջնորդել անոնց մինչև անտառէն դուրս, ուսկից անիկ ուղղով երթալ կ'ուզէին Օսերկ գիւղաքաղաքը։

Ազնիւ տիկինը, իր արտասուալից աչքերը անքնթիթ անոնց երթալուն վրայ յառած՝ մինչև երկնաբերձ ծառերն ընդմիջելով, աներեւոյթ ըլլին առաքինութեան մէջ բարգաւաճած այս երկու չքնաղ սրտակերները։

ԳԼՈՒԽ Փ.

Նոր ուղեւորութիւն :

Ով որ Աստուծոյ շնորհաց արժանացած է, անիկայ աշխարհիս մէջ ամենէն երջանիկն է. Նոյնպէս էին այս երկու որբերը, որոնց նպատակը առաքինութիւն, և Աստիւնք էր պաշտպանին :

Այս երկու տղայքն իրեն ապրելն վրայ բարձաղ բարի գիւղացին՝ չուզեց անտառէն ելլելէ յետոյ ճամբուն վրայ զանոնք միայնակ թողուլ, այլ առաջարկեց իր գիւղը տանիլ, խոստանալով իր տանը մէջ բնակութիւն տալ, հոգալով իրենց բոլոր պիտոյքը մինչեւ որ իրենց գիւղէն քաղաքը ցորեան փոխադրելու եկող սայլերուն մէկուն հետ յուղարկէ և դեռ վեց մղոն ճամբայ ունէին :

Ընտանեցան տղայք շնորհակալ ըլլալով. ուստի այս առաքինի մարդը՝ զասն բաւական օր հիւրընկալելէն յետոյ իր խոստումը արդեամբ կատարեց, միանգամայն լեցուն կողով մը պաշար տալով, և ճամբու ծախքին բաւելու չափ ալ ստակ.

Տակաւին տեսած չըլլալով այնպիսի մեծ քաղաք մը, որուն փողոցներուն մէջ մարդկան բազմութիւնը տեսնելով զարմացան. կտնանց վրայ ուշադրութեամբ կը դիտէին՝ որ կարելի է իրենց մայրերը գտնեն. այսպէս սրտերնին կարօտով լեցուած՝ վերջնալոյսի ժամանակ, իրենց բերող մշակը առաջնորդեց իր իջեւանը, ուր անցու ցին գիշերը :

Հետեւեալ օրը բաժանման ժամանակ մնաք բարեւաւ ըսելով երեսուն դրամնոց մը դրին ձեռքին մէջ. Այս բարի մարդը հոգ տարաւ նաեւ քաղքին դուռը ցուցնելու. ուսկից պէտք էին ելլել. միան-

Digitized by Google

գամայն երթալու ճամբանին սորվեցուց։ Չիսոյժ ե-
ղախտագիտութիւն մը առ Աստուած և առ այս նոր
բարերարն կը լեցներ իրենց հոգին, որ կը յայտնէին
քաղցր խօսքերով նոյն ողորմած մարդուն համար։

Իր ինքզինքին բարեբաղդ կը համարէին. պիտի
չտիպտուէին ողորմութիւն խնդրելու. վասն զի
դեռ սպառած չէր կողովին մէջ գտնուած պաշարը,
և ընդունած երեսուն դրամներ իրենց աչքին ահագին
գանձ մը կ'երեւնէր։

Նոյն օրն երկու մղոնի չափ ճամբայ կրցան երթալ,
առանց ձախող դէպք մը պատահելու, և մինչդեռ
տուընջեան շքեղ լուսատուն մերձ էր իր
մուտքը խնդարհելու. մուտն փոքրիկ պանդոկ մը, ուր
փոխարէնը տալու համար ննջելու տեղ խնդրեցին.
հաճութեամբ ընդունուեցան, հոն նոյն գիշերն ընթ-
քեցին իրենց պաշարին մնացորդը։

Պանդոկապետուհին քիչ մը հեռաքաշիր, բայց
ալիւր սրտի տէր, հարցուփորձի մտաւ անոնց հետ
և տասնք միամտաբար պատմեցին բոլոր իրենց սրտա-
ռուչ պատմութիւնը. ուր անոր աչքերէն ապտաստաց
կաթիլներ հոսեցուց։

Իրիկվրդ օրն, երբոր վճարելու գացին. բարի
պանդոկապետուհին չընդունեց, այլ և իրեն հետ
նախաճաշիկ ալ ընելու հրաւիրեց. առաջին անգամն
էր որ հոն շաքարով սուրճ խմեցին, զոր աբոնէլի ըմ-
պելիք մը գտան։

Ամսպէս զօրացած, երեք մղոն տեղ ալ յառաջ
երթալով ապաստանեցան վերջին պանդոկին մէջ.
ուսկից մղոն մը ճամբայ մնացած էր տիկին Ինոյին
տունը հասնելու։ Հետեւեալ օրը նախաճաշիկ ընե-
լէն յետոյ մինչդեռ կը պատրաստուէին մեկնելու,
պանդոկապետը պատուհանը գտնուելով. դարձաւ
գէպ 'ի անոնց, և բաւ. "Ասուք որ Օպերի երթալ

կ'ուզէք, ահաւասիկ խոստովանաւ Ընկա տիկինը, որ այն տեղացի է կրնայ ձեզի առաջնորդել մինչեւ հոն։

Տղայք մեկէն վազեցին պատուհանը, և ճիշդ ա նիկայ էր բարեսիրտ Ընկան, որ խոտեր կը ժողովէր նայն դաշտին մէջ։

Ուրախութենէն այլ յայտնի եղած՝ գիժեցին ձեռք բարձած սենեակէն դուրս. «Ընկա, սիրելի տիկին Ընկա»։ և գացին նետուելու անոր բազկացը մէջ։ «Ա՜հ, դուք էք սիրելի աղայք. ուսկից կուգաք, հարցուց բարի պառաւը։

—Ա՜հ, հեռուէն, շատ հեռուէն, պատասխանեց Ֆենրիկոս։

Իւ ձեր մայրն ուր է, ըսաւ գրկելով զանոնք սեբաս սիրով։

—Ա՜հ, մեր մայրը . . . հառաչեց Ամորիսմ. հեծելով գոչեց նաեւ Ֆենրիկոս, ա՜հ մեր խեղճ մայրը ա՜հ . . . ։

—Ինչպէս, մեռա՞ ուրեմն, պոռաց Ընկա զարհուրած տղայոց յանկարծական գուշակութենէն։

—Ձենք գիտեր թէ՞ չեղաւ անիկայ կրկնեց Ամորիսմ. ա՜հ, ցաւալի դէպք մ՚է այս և պատմութիւն խիստ երկայն. վերջապէս, ա՜չ հայր ունինք և ա՜չ մայր. ա՜չ ալ ներցուկ այս աշխարհիս մէջ ձեզմէ զատ։

—Շնորհակալ եմ Ամուրծոյ, որ ապժանի բարեզձեզ կրկին տեսնելու, պատասխանեց այս բարի պառաւը. ուստի խոտ ժողվելը վաղուան կը թողում, այժմ եկէք ինծի հետ։

—Տղայք ուրախութեամբ և սիրով հետեւեցան անոր խոստանալով ճամբան լրենց ցաւալի դէպքը պատմելու։

—Սիրելի զաւակներս, չյուսահատիք, Ամուրծոյ բարութեան կ'զգեցուցանէ դաշտերուն շուշաններ ը և կը կերակրէ մատաղ թռչուններ ը, նոյնպէս պի

տի չմոռնայ ձեզի, անհոգ եղէք ։

Խօսակցութիւնները ճամբան շուտ սպառելովք ինքզինքնին յանկարծ իրենց բարերարին հիւղին դիմացը գտան ։

Այս բարի տիկինը, երկու ոլքերը հոգեւոր խօսքերով քաջալերելով քանի մը օր հանգստացնելէն յետոյ, սկսաւ խոտերուն տեսակները սորվեցնել՝ որն որ դեղագործները իրմէ ծախու կ'առնուին ։

Հենրիկոս և Մարիամ մեծ ջանքով քիչ ժամանակի մէջ կրցան սորվիլ բոլոր բժշկական խոտերը նանաւ ջորցնելու կերպերը. այնպէս որ Աննա տիկինն սկսաւ կրկին մուտք ունենալ, միանգամայն ծերութեան վերջին օրերուն մէջ իրեն մեծ նեցուկ եղան ։

Ամեռուան միջոցներն ալ՝ ձկնորսներու համար ուռկաններ կը գործէին, որն որ ածխապործին խոշձիթին մէջ այն սրհեան ալ սորված էին, որ իրենց շահու դուռ մ'ալ այս եղաւ ։ Շրջակայքին այնչափ յանձնարարութիւններ կ'ըլլար, որ հազիւ կրնային հասցուցնել գիշեր ու ցերեկ աշխատելով ։

Կիրակի օրերը սուրբ կը պահէին ։ Աղշալոյսը մահկանացուաց լոյս շնորհելու համար իր ոսկեզօծ դռները բացած միջոցին, Աննա տիկինը և տղայք, իրենց ամենագեղեցիկ զգեստներովը զարդարուած՝ մերձակայ քաղաքին եկեղեցին կ'երթային ժամատարութեան և քարոզի ներկայ գտնուելու ։ Ի դարձին մէկզմէկու կը հաղորդէին քարոզին հոգեպարար խօսքերը, և երկնային հրճուանքը լեցուած՝ կ'օրհնէին զՏէր բարձր ձայնով և քաղցր եղանակով ։

«Ով Տէր մեծ գթութեանց մահ . . . ուր է,
Երկնող մայր մեր թշուառ, արդ մի թէ . . .
Օ՛ի դաժան քաղդէն ետ հեռանալ,
Երկեալ քոյ զնոսա խիստ մատչ ։

Digitized by Google

—Վա՜հ, քանի՞ եռ յոյս և զօրութիւն
Որոնել մեր ոտից դողդոջուն,
Իւ սրքան ՀԵՄ առաք յայն տեղւոջ,
Էաղ ել ի զուր յոյս մեր անխոնջ։
—Վա՜հ, վա՜յրդ, վա՜յրդ, անձկալի դու խոանակ,
Մրդեօք ուր ես միթէ քաղցր երդակ.
Պարկեան ինչ տեսանել ահ, դիպէր,
Կամ լսել եւս զերգ առ ընթեր . . . .
—Իս քնքուշ ձայն դաշնակ ազդէր յոյժ,
Տչորեաւ սրտի զմեր դիւրաբոյժ.
Ուր թռեան այն աւուրք երջանիկ,
Յորում փառս ՀՕՆԷՍք առ Նրկինք։
—Ոչ թէ միանգամ ահ դարձեալ,
Շնորհել մի Նրկինք սպասեալ
Սեղմել ջերմ սիրով զայն սիրտ մաքուր.
Սեղմանայ սրտի մեր բոց և հուր։
—Ընդուն բաղդ չարաչուն ողբալ միշտ,
Սահմանեալ է որբոց ածեալ միշտ.
Խառնելով ըզշունչ մեր ընդ ողբոց,
Ի խնդալն տայ մեզ ցաւ դառն ի կոծ։
—Բայց և գոլ ապաշնորհ չէ օրէն
Շնորհացդ զոր ետուր լիօրէն.
Ի խնամս ածեալ զմեզ Ննայի,
Բարութեանդ աղախնոյ սիրելի։
—Թողէտ սեաւ ասաք ՀԱԿԱՏԻ փոխեսցեն,
ԸզմիՀակ տարագրացս և այսրէն.
Խոնարհեալ տամք ըստիաւս քո կամաց,
Զի դու ես միշտ աղբիւր բարութեանց։

Այս երկու առաքինի պատանիք՝ օրուան մեռ ցորդ ժամերուն մէջ ազատ էին։ Պարիսմ, որ արդէն ըստ բաւականի աջողակ էր գրութեան մէջ, կը ջանար կատարելագործել. և Կիւրակէի գիպող ժա

մերէն օգուտ կը քաղէր իր եղբօրը ուրվեցընելու համար, և քիչ ժամանակուան մէջ իրմէ գերազանց և աւելի մաքուր գրութիւն ունեցաւ։ Այնպէս անդամ Հենրիկոսի տիկնին ելբ քաղաքը կ'երթայր, վերադարձին ձեռք մը թուղթ կը բերէր, նոյնպէս ընտիր գրիչներ և գրի օրինակներ, երբեմն ալ ծախու կ'տանուր քրիստոնէական կամ ուրիշ համառօտ գիրքեր, որովհետեւ այս ազգաք շատ փափագ ունէին ուսման, հետեւաբար բաւական յառաջադիմութիւն ըրին այսպէս։ Պանդխտութիւնն իրենց ոչ այնչափ դառն էր՝ որչափ որ սիրելի մայրերնուն սգոութենէն զրկուիլը։

Արդարեւ որ հարազատ զաւակ կրնայ իր ծնողքը մոռնալ, որոնք աշխարհիս վրայ իրեն առաջին բարերարներն են։

ԳԼՈՒԽ Փ.

Բարի Անդայնի հիւանդութիւնը, բարեգործութիւն եւ վարձատրեալ սէր։

Այս ազգայց երկրորդ անգամ Հենայ տիկնոջ տունը գալէն ի վեր՝ երեք տարի անցած էր, որ երկուքն ալ չափահաս, ուժեղ և գեղեցկացած էին։ Հենրիկոս իր հասակին երկուասանեերորդ շրջանը կը մտնէր, այն ինչ կուսեցաւ Աստուած այս ազգայքը նոր փորձի մ' ալ նեցքեւ ձգել. իրենց երկրորդ մայրը, բարի Հենան սրտաբեկութեամբ հիւանդ ինկաւ։ Հենրիկոս պէտք եղած դեղերը կ'երթար քաղաքը գեղագործին վճռաւորութենէն միշտ կը բերէր, և Մարիամ նոյնպէս առ ոչինչ ծառայութիւնն անթեղի կը կատարէր։

Digitized by Google

Ընտա տիկինը իր տիրոյ և բարերարութեան փա-խարէն ընդունեց։ Մրջափ ցաւալի վախճան մը պիտի ունենար՝ թէ որ այս առաքինի ապրոյքը իրեն ոչ դեգիր առած չըլլար. եթէ ոչ իր խրճիթին մէջ առանձին հոգին պիտի փչէր առանց մէկէն օգնութիւն մը գտնելու իր վերջին ժամերուն մէջ։

Ընդարձակ սուեստաբեր վայրկեաններէն յառաջ դաշտերը կ'երթային երբ Ընտա հրաման տար. և իրենց ժողովածներն չորցուցեալ անձամբ դեղագործին կը տանէին։

Այս աղնիւ մարդը՝ շատ քիչ կը պատահէր, Հենրիկոսն ու Մարիամն առանց կերակրելու թողուլ. և իրենց վայելած միջոցներն մաս մ՚ալ իրենց սիրելի հիւանդին տանելու չէին մոռնար, ասվորականէն աւելի կանուխ դառնալով։

Մինչդեռ տղայք այսպէս ինքզինքնին և իրենց բարերարին պարէնն հոգալու համար կ'աշխատէին, Ընտա տիկինն ալ թէպէտ միշտ հիւանդ, բայց պարապ մնալը մոլութիւն կը սեպէր, ուստի անոնց կերակուրները պատրաստելով կ'զբաղէր։

Մրջափ շնորհակալ կ'ըլլար երկնաւոր Հօր, որ իրեն յուզարկած էր այս սիրելի տղայքը։

Դռուս մը, երբոր Հենրիկոս և Մարիամ կը պատրաստուէին դաշտն երթալու, տաղաչեց որ իր մօտը կենան, վասն զի նոյն օրը տարօրինակ ազդում մը կրեր։

«Ո՛ւ ունիք, աղնիւ մայր, հարցուց Մարիամ անձկութեամբ, և ինչքը հին թիկնոթոռին վրայ տանելով, այսօր սովորականէն աւելի հիւանդ էք...»

—Հէ՛, սիրելի զաւակս, կը տեսնէք որ արդէն մեռնելու դուռը հասած եմ. պատասուութիւնը և աղքատութիւնը վերջին ժամերուս գալուստը կ'աւելցնեն, մանաւանդ որ այժմ հասած կ'արտասրայնէ ղեռ 'ի գերեզման։

Digitized by Google

Մի աբուսասուէք, սիրելի տղայ.քս, յաւելլուց այս բարի պառաւը, ուշ կամ կանուխ պիտի թողունք աշխարհս՝ և պիտի երթանք առ Աստուած. ուր հրեշտակաց բնակարանը պատրաստած է անոնց՝ որոնք այս վաղանցուկ կեանց մէջ առաքինութեան համար իրենց կեանքը կը զոհեն։ Մշափ երջանկութիւն է . . . հոն ալ օրհնելու արժանի ըլլալինք. և ասիկայ պէտք ենք յուսալ միշտ. վասն զի հաստատ յոյս ունեցողներն եբանելի են, հոս ալ իր ներկինեբուն ձեռքը չմատներ։ Աստուր է Տէրը, և իրեն երկնային հարսանեաց առագաստին մէջ մտնել ուզողներն ալ սուրբ և միշտ մաքուր ըլլալ կը պահանջէ։ Բոլոր մարդիկ մեղանչական են, բայց մեղաց մէջ յամառեալներն յաւիտեան կը կորսուին։ Աստի սիրելի Ֆենրիկոս, աճապարէ երթալ մեր ժողովրդապետ առաքինի քահանային լուր տալու, որ գայ մեղայս խոստովանութիւնը լսէ դեռ շունչս չ'արձակուած։

Ֆենրիկոս առանց յապաղելու մեկնեցաւ, և իւկոյն առաքինի ժողովրդապետին հետ վերադարձաւ, որ խիստ կը յարգէր Ֆենա աիկինը։ Խոստովանեցաւ հաւատով և սքանչելի խոնարհութեամբ, և յետոյ իր վերջին սուրբ թոշակը ընդունեց, այն նուիրեալ հացը՝ որ տարագիր մարդկութեան անմահութեան բաղձանքն է։

Երբ այսպէս կրօնքի պարտաւորութիւնները կատարեց. դարձաւ այս երկու տղայոց և ըսաւ. Օ՜ սանկներս, մտիկ ըրէք. երբոր աշխարհին՝ իմ վերջին հրաժեշտս տամ, հոս մի կենաք դուք, վասն զի այս տեղի մարդկանց բարքը քրիստոնէական կրօնին պատուիրանացը հակառակ գտած եմ. գացէք այն բարի գեղջուկաձառը գտնելու՝ որ շատ տաբիներէ ի վեր մեր պարէնը շահեցաւ, և ըսէք անոր, ծերունի Ֆենա մայրը բայսերուն տակ իր հոգին աւանդեց,

Digitized by Google

որ երբեմն ձեզի համար կը ժողվէր. ուստի պատուելի ծեց մեզի որ քեզի դիմենք։ Այսչափ խոսք բաւական է, վասն զի անիկայ գթած և առաքինի սիրտ մը ունի որն որ ձեր բաղդը կրնայ արդիւնաւորել։

Անիշգեռ կը խօսէր իր զօրութիւնը նուազելով գնած գլուխը Թիկնաթոռին վրայ խոնարհեցաւ, աչքերը կարծես իր մօտը կեցած տղայքը կը մնոռէին, և դողդոջուն ձեռքերն երկարելով դէպ 'ի անոնց, ըսաւ. Ալ չեմ տեսներ ձեզի, տեսութիւնս մահուան քօղով ծածկուեցաւ, բայց դեռ կ'զգամ, ձեր սիրուն ձեռքերն է . . . որդեակ իմ. սիրելի որդեակք, Աստուծոյ երկիւղը հոգինուդ վրայ զգեցէք, շնորհքն ու իաղաղութիւնը ձեր հետը բնակի միշտ։ Թէ որ օր մը մայրերնիդ վերստին տեսնելու բարեբաղդութիւնը ունենաք՝ իմ սերս և վերջին բարեւս անոր տուրս չմոռանաք, մնայք բարեաւ։

Այս վերջին խօսքերն իւրկենաց առկայծեալ ճրագին լոյսը վերջայոյց տկարացած շրթանցը վրայ. և իր տառապեալ աչաց մացառներնիսոնարհեցան, ինչպէս որ արջառոյն թաթիը շուշանին վրայ կը ծանրանայ. քաղցր և հրեշտակային ժպիտ մը անցաւ իր հոգեւոր երեսին վրայ, անդամ մ' ալ սեղմեց ձեռքերնին, բայց խիստ մեղմաբար։ Այնուհետեւ երկրիս վրայ միայն իր անշունչ ցուրտ մարմինը մնաց, և անմահ հոգին բարձրացած էր դէպ 'ի երկնաւոր կայանը։

Հենրիկոս և Անրիամ սրտերնին ճնշուած՝ ծունկի վրայ իջան իրենց բարեբարին մարմնոյն քովը և համբոյրներով ու արտասուքով Թրջեցին անոր տառած ձեռքերը. և միանդամայն անոր հոգւոյն փրկութեանն համար երկար աղօթեցին վերջը՝ իրենց ալ զօրութիւն խնդրեցին այս նոր կորուստը տանիլ կա-

Digitized by Google

բազմանալու։ Լսեց Աստուած, և հանգստութիւն տուաւ տրտնջունն. և ապա իրարու բազկաց մէջ ներսուելով ըսին, «այս ալեկոծեալ կենաց մէջ ալ թիկունք չունինք, կը սպասուի՝ մէկզմէկու թիկունք ըլլալ, և Աստուածն սիրոյ անշուշտ կ'օգնէ մեզ. ինչպէս Յարգարէն ալ ըսած է. Ահա ինչպէս բարի և ինչպէս վայելուչ է որ եղբայրներն իրարու հետ միաբանութեամբ կը բնակին»։

Ուսածեցին որ երթան Երուսաղէմ գրացնոյն լուր տալու իրենց բարեբարին մահուան ատուերով ծածկուիլը. և Երուսաղէմ ցաւակցութեամբ զանոնք վերադարձուցին յետոյ պատուիրեց Հենրիկոսին որ երթայ քահանային խմաց տայ. և ինքը Յարիամին հետ դարձաւ մեռելոյն իրծիքը. ուր մէկուկէս ժամէն դարձաւ Հենրիկոս, նոյնպէս քահանայն և իր հետը գիւղապետը կին մը, և երկու օրէն ետքն անոր մահացած մարմինն հանգստեան դաշտը տարուեցաւ. Հենրիկոս և Յարիամ ալ ննջեցեալին ետեւէն երթալով անոր թաղման և սխուր արարողութեան ներկայ գտնուեցան, երբոր գերեզմանին մէջ հողերուն թափուելու ձայնը կը լսէին՝ դողում մը միւսեւ սրտերնուն խորը կը թափանցէր։ Այս դժբաղդ տղայք, կրկին որբացած իրենց բարեբարին մահուամբը, գացին հանգուցեալին պատուէրին համեմատ գեղապետին գանելու։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վիլլեամ դեղավաճառը :

Ի՞նչ ունիք տղայքներս, հարցուց դեղավաճառը՝ Հենրիկոսին և Արիամին, երբոր տեսաւ անոնց սխրութեամբ իր խանութը մտնելնին. ինչ դժբաղդութիւն պատահեցաւ ձեզ։

—Ահ, տէր իմ, խիստ մեծ դժբաղդութիւն, պատասխանեց Արիամ հեծեծելով. դառն և աղեւոտաբեր կորուստ մը դարձեալ իր ահռելի և մշտատանջ թշուառութեան անյաւտակ տարածութեան մէջ գահավիժեց զմեզ. մեր մայրագրին կենաց թելը կտրեցուցի. եղ

մեզ... ոգոյ և անմխիթար տրտմութեան խաւսրէն պաշարուած ենք...։

—Թշուառ որբեր, մի յուսահատիք, տիրոջ ողորմութիւնն անհուն է և գթութիւնն անչափ։

—Հնորհակալ ենք, և ձեր աղնիւ սիրտը կը ճանչնանք, ըսաւ Հենրիկոս. ինչպէս որ Աննա մայրն ալ իր մահուանէն յառաջ պատուիրեց մեզ որ գանք առանց երկիւղի և վստահութեամբ մեր դժբաղդ կացութիւնը յայտնելու ձեզ։

—Արդարև երջանիկ կ'ըլլայինք՝ եթէ մարդասէր անձի մը պաշտպանութեան ներքեւ աշխատէինք առանց մէկու մը ձանձրութիւն տալու, յաւելցուց Արիամ։

Պարոն Վիլլեամ, քանի մը վայրկեան իր մտաց մէջ խոկմանն տեղի տալէն յետոյ, ըսաւ աղնուութեամբ. «Ցտուծոյ յուսայողը երբէք չամչնար»։ Այս ալ ուրախ կարելի է կ'օգնեմ ձեզ. Աղնիւ օրիորդ, թէ որ կամենաս իմ տանս մէջ քեզ սիրով բնակութիւն կը շնորհեմ, միայն թէ մատաղ մանկտեացս պահպանութեան հոգը վրադ առնուս. նոյնպէս կիւ-

Digitized by Google

նքա սասարիկ պիտի ուրախանայ, որ շատ ժամանակէ
ի վեր քեզ նման համեստ և գործունեայ մէկուն
կարօտութիւնը կ'ունենար։ Կը յուսամ որ Հենրիկոս ալ
կը հաճի ցերեկները հոս խնամութիւնը միատեղ աշխա-
տիլ ու գիշերները կրնաք միատեղ ձեր եղբայրական
հրճուանքը վայելել։

—Հմ, շատ բարեսիրտ էք, ինչպէս որ կ'ըսէր միշտ
Ընենա մայրը, աղաղակեցին երկուքն ալ մէկ բերան։

Իսկոյն հաստատուեցան նոյն տան մէջ, և առա-
ջին վայրկենէն գործունեայ և աշխատասէր հռչա-
կուեցան։ Արիամ մանկանց պէտք եղած խնամքը
միշտ անթերի կատարելովը Տիկին Լիլեսմին հա-
մարումը շահեցաւ. նոյնպէս Հենրիկոս իր տիրոջը
.քով օր ըստ օրէ յառաջադիմութիւն կ'ընէր։ Օր
մը դեղարանին առաջին պաշտօնեայն՝ ահագին կո-
ղով մը լեցուն բոյսեր ձեռք բերած էր. ուստի Հեն-
րիկոսն որ արդէն քաջ կը ճանչէար այս բոյսերը՝ ի-
րեն օգնական առած մինչդեռ սկսան գործի, այս
պաշտօնեայն՝ պատուիրեց Հենրիկոսին որ լաւ ըմ-
գուշութիւն ընէ մոլախիտը՝ մեղմացուցիչ բոյսե-
րուն հետ մէկտեղ չդնելու։

«Պ. Լրնէսթ, կը ներէք համարձակութեանս,
պատասխանեց Հենրիկոս. այս տեսակէն ինչու ու-
րեմն կ'ուզէք Ընենայ տիկինէն, մինթէ թոյնը հի-
ւանդը չմեռցնէր։

—Հիւանդները կը մեռնին՝ ինչպէս բոլոր մար-
դիկ, թէ որ բաւականէն ուրիշ գործածեն։ Այց
թունաւոր բոյսերը չափաւոր կերպով շատ անգամ
օգուտ կ'արդիւնաւորէն։

—Շնորհակալ եմ, այնպիսի խնդիր մը լուծեցիք
որ միտքս կնճռուածէր թէ՝ բարերար Տէրն ի՞նչու թող
կուտայ թունաւոր բոյսեր ալ դաշտերու մէջ աճելու։

—Արեկամ, Աստուած ինչ որ ստեղծած է՝ ամէ-

Digitized by Google

նրն ալ մէկմէկ օգտի կը ծառայեն, դեռ շատ բաներ ալ կան ը. մեզի անծանօթ են։ Պէտք ենք գիտնալ որ տիեզերքին մէջ անօգուտ կամ աւելորդ բան մը չկայ, մեր պատճառը չհասկնալնիս ուրիշ բան չէ՝ այլ միայն մտքերնուս խիստ սահմանաւոր ըլլալն է։

—Ֆենրիկոս վայրկեան մը լսածներուն վրայ որոճալէն յետոյ կրկնեց. միթէ բացառութիւն չէ՞ն թրթռուրները, պիծակները, ճանճերը և զանազան միջատները, որոնք մարդս անհանգիստ կ'ընեն. նոյնպէս անասունները։

—Այս մեծ վրիպանք մ'է, բարեկամս, բոլոր այս միջատները սնուդ են ուրիշ մեզ օգտակար և հաճոյական կենդանեաց։ Արդէն սոխակին երգերը լսածդ ես։

—Այո՛, շատ անգամ, այս թռչնոյն երգը սքանչելի է և ուրախութիւն կ'ազդէ սրտերու։

—Իարի, այս չքնաղ թռչունը և շատ ուրիշ քաղցրահնչիւն թռչուններ ոչ ապաքէն միջատներով կը սնանին։

—Դրախտապարտ եմ, որ իմ միտքս լուսաւորելու բարերար կանգնեցաք։

—Պարտքս է, բարեկամ, ուստի եթէ քննէք բընութիւնը, տիեզերքս՝ Արարչին անսահման իմաստութիւնը և բարերարութիւնը։ Ամէն օր աւելի մեծ զարմանալիքներ պիտի մերկանան ձեր աչաց առջեւ։ Ուստի բնութեան վերաբերեալ գիտութիւնները ոչ միայն մարդուս միտքը կը լուսաւորեն այլև՝ ի բարեպաշտութիւն և յերախտագիտութիւն առ Աստուած կ'արդիւնաւորեն։

—Հմ, գոչեց Ֆենրիկոս, կը փափաքէի այս տեսակ օգտակար գիտութիւններ սորվիլ, բայց ինչ օգուտ՝ յաւելցուց հառաչելով, ինծի նման աղքատ որբի մը անկարելի է։

Digitized by Google

—Աշխարհիս վրայ անկարելի բան մը չկայ, երբ մէկը եռանդ ու բարի կամք ունենայ, պատասխանեց Գնէսմի. ես արդէն ատոր փորձառու եմ. վասն զի բաղդն աղքատ ծնած էր զիս և անգէտ դիւղացիի մը զաւակ, մինչ զի չէի կրնար կանոնաւորապէս դպրոց երթալ. հանդերձ այսու կը փափաքէի, մանաւանդ տնկաբանութիւն սորվիլ։ Դպրոցի վարժապետն՝ այս բանին միշտ հետաքրքիր ըլլալս տեսնելով, ձրիաբար իր դասին մէջ ընդունեց զիս. ուստի մէկ կողմէն ուր յիշողութիւնս, միւս կողմէ անխոնջ ջանքս յառաջադիմութիւն կը խոստանար. հետեւաբար Յունարէն և Լատիներէն, բնական պատմութիւն, և մանաւանդ տնկաբանութիւնը շնորհիւ Աստուծոյ կրցայ սորվիլ։

—Հասակս երբոր տասն և վեց տարուէն շրջանին մէջ մտաւ, դպրոցի վարպետս փորձով ալ վարժուելու համար զիս այս դեղարանի վաճառատան մէջ մտցուց, ուր որ եռանդն ու խոհեմութիւնն օգնական առած միշտ կանոնաւոր կ'աշխատէի, և բաւական ժամանակ աշակերտելէ յետոյ, հիմայ առաջին օգնականն եղայ Պ. Լիլեոմին, որ ոչ միայն քաջ դեղագործներէն մէկն է, այլ և քաղցրաբարոյ և բարեսէր ուսուցիչ մը. լաւ կը վարուի անոնց հետ՝ որոնք հաւատարմութեամբ իրենց պարտաւորութիւնները կը կատարեն »։

Պ. Գնեսմին այս պատմութիւնը մեծ հաճութիւն պատճառեց Հենրիկոսին, ցուցնելով անոր՝ որ իր օրինակին հետեւելով կրնայ ինքն ալ իր նպատակին հասնիլ։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԺԹ.

Հենրիկոս եւ Մարիամ մէկ մէկէ ստիպուեցան բաժնուելու։ —Հենրիկոսին զարմանալի մէկ դէպքը

Պարոնան սպայծառ և յստակ առաւօտ մը՝ մինչ դեռ Հենրիկոս և Մարիամ իրենց որոշեալ սենեկին սեամքը նստած՝ արիգական քառաձի շքեղ կառքը դիտելով և անոր անիւներէն ելած կայծերը կը զննէին. Պ. Վ. Խլեսմ բաբի լոյս մաղթելով՝ ըսաւ այս երիտասարդ որբերուն։ «Օ՜ աւա՜ղներս, չըլլայ որ վշտանաք. ձեր հնազանդութեան վրայ վստահ՝ Հենրիկոսին ապագային համար խիստ օգտակար առաջարկութիւն մը ունիմ ընելու ձեզ՝ կը յուսամ որ չէք մերժեր»։ Յուսանունց լռութեամբ ունկնդիր ըլլալնուն վրայ, յաւելցուց ըսելով. Աղջայր մը ունիմ ես որ ինձի պէս դեղավաճառ է. և ասկէ տասը մղոն հեռաւորութեամբ քաղաքի մը մէջ կը բնակի, ուստի դեռափթիթ ուժեղ տղայ մը ինծմէ խնդրած է միանգամայն գործունեայ և առաքինի, իր խանութին յանձնարարութիւններն անոր ընելու համար։ Թէ որ Հենրիկոս՝ եղբօրս վաճառատունը երթալ ուզէ հոն իրեն շատ աղէկ պիտի ըլլայ։

Հենրիկոս և Մարիամ սրտաբեկ դիմօք իրարու կը նայէին. բաժնուելու դաղափարը երբէք մտքերնին չէր եկած. բայց իրենց բարերարին անկեղծութեանը վրայ ապահով՝ առանց տարակուսելու և բախտագիտութեամբ առաջարկութիւնն ընդունեցին։ Միատեղ երկու օր եւս իրենց շնորհեց որ անցագ սէրերնին մեղմացնեն։

Լուութեան վարագուրին ներքեւ պէտք ենք անցընել յիշեալ երկու որբոց տխրատեսիլ և սրտաճմլիկ բաժանման կէտին տեսարանը՝ մինչդեռ մէկ

զմեկ չէին թողած. ուստի վիշտ և ուրախութիւն և բոլոր այս տեսակ իրողութեանց պատճառած ցաւերը՝ իրենց ուրթորեայ ուրախութեան արեգակնային դէմքը ծածկեց հառաչանաց ամպերով և յորդ արտասուօք։ Յետ այնորիկ իրարու մտերմական խորհուրդներն պիտի չկրնային հաղորդել բայց միայն երբեմնակի և անբաւական նամակներով։

Պատէպ պիտի գրեմ քեզ ըսաւ Հենրիկոս, ընդ գրկելով քոյրը։

—Այնպէս եա, եղբայր իմ, պատասխանեց Մարիամ, Հենրիկոսի նման բիբերը արտասուօք թրջուած . . . և մէկմէկէ բաժնուեցան 'ի վիշտ մըտերիմ եղբայրական սիրոյն։

Հենրիկոս այս նոր սիրոջը քով՝ անձնուէր աշխատութեամբն ու աշխարհը գործունէութեամբը անոր սէրը և գութը մէկէն գրաւեց։ Ուստի վայելուչ զգեստներով քիչ օրուան մէջ վարձատրուեցաւ։

Իրեն յանձնուած գործերն՝ այնքան դժուարին չըլլալով, ժամանակը կը ներեր ուսման ալ պարապելու, և իր սիրոջը շնորհիւ իրեն յատկացուցած ուսուցչէն սկսաք եղած դասերով իր բաղձանքը լիուլի կը յագեցնէր։ Ուսուցիչն՝ անոր գովելի ընթացքը տեսնելով, ըսաւ իւր բարերարին, «Հենրիկոսին օրմը մարդկութեան սոպարելին մէջ օգտակար անդամ մ' ըլլալն անտարակոյս սելի է ինձ։ Ի վերայ այսր ամենայնի դարձեալ դեղարանին մէջ իրեն պատշաճ բոլոր ծառայութիւններն՝ ալ կատարելու անհ գութիւն չէր ընէր։

Նբբեմն զբօսանաց համար շրջակայ գիւղերը կ'երթար, բայեր ժողվելով փորձերու կ'ենթարկէր. և ա՛յսպէս զգեցած ատեն դեղարանին միւս պաշտօնէից օգնութեամբը կը սրբագրէր։ Այսպէս իր սիրելի քրոջ ալ գրեթէ ամէն շաբաթ նամակ գրելը,

չէր մոնար, փչաւոր ալ զբաղմունք ունենար. և ճամբուս ծախուց համար թղթատարին վճարած գումարը՝ ստէպ տուներուն մէջ հիւանդներուն դեղ տարած միջոցին ընդունած պարգեւները կը բաւէր։ Ամբրամին նամակներն ալ գոհացուցիչ էին, իր տիկնոջը հովանաւորութեան տակ գրեթէ երջանիկ կեանք անցուցեալը միշտ նշանակած գանելով՝ սաստիկ ուրախութիւն կ'զգար, շնորհակալ ըլլալով նախախնամող Աստուծոյ և միայն երջանկութիւնին կատարեալ ըլլալու համար՝ իրենց ազնուհի մայրը կը պակսէր։

Երկու տարի անցած էր, Հենրիկոս քաղաքաց կիրթ եւ շնորհագեղ երիտասարդի մը կերպարանք առած էր։ Երեկոյ մը մինչդեռ տունջեան լուսաւորին զօրութիւնը բոլորովին հատած չէր, հրաման եղաւ իրեն մերձակայ գիւղը հիւանդի մը դեղ տանելու. ճամբայ ելած ատեն օդը աղէկ էր, բայց երբոր հիւանդին տունն հասաւ, յանկարծ երկինքն ամպերով բեռնաւորուած՝ և դուրս ելլելէն յառաջ սկսաւ տեղատարափ մը. ուստի իր տէրը չլսպասեցնելու համար լապտեր մը ուզեց և ճամբայ ելաւ. թէպէտ անձրեւն ու մութը տակալի էր։

Երբոր ընդարձակ անտառին մէկ կողմէն կ'անցնէր, ուր իրենց մայրը կտրնցուցած էին, ուժգին հով մը մարեց իր լապտերին լոյսը, և առանց վարանելու իր ճամբան շարունակեց։ Այս միջոցին փոթորկալիր անձրեւը դեռ հեղեղի պէս վար կ'իջնէր՝ յանկարծ խօսելու ձայներ լսեց, և գաղտնի արհաւիրք մը կեցուց զինքը մոխիկ ընելուս խօսքերը։

"Մի՛ ուրեմն, Մարթէն, ոչի ձայն չեմ առնուր։

—Այո՛, նոյն կարծիքն ես ալ ունեցայ, բայց խաբուած ըլլալս դիտնալով չայտնեցի, ուստի ծերունին Եֆրայիմը շատ ուշացաւ, ապրեցաք երկիւղն ամ

բբռնեց զինքը։ Գիտես որ ան կ'ըսէ միշտ թէ մեզի հետ ըլլած առաւաւուրն օր մը պիտի վերջանայ դէպ 'ի կառավնատեղին ինքզինքը գտնելով։

—Ահ, խորամանկ ծեր մ' է անիկայ, այնպէս կը խօսի որ աւելի զեղջէ. թէեւ ապգէն առանց աշխատութեան բաւական մեծ գումարներ շահեց մեր դրամներէն, ուստի դատաստանը մեզ առանց գթութեան կը դատէ քան թէ ան։

—Այո՛ Պէտոլտ, իրաւունք ունիք. բայց մեր վախն աւելորդ է, վասն զի մեր մեռնակեաց բնակութիւնն այնչափ աղէկ ծածկուած է. որ ոչ մէկը կրնայ գտնել նոյն իսկ կառավարութիւնն անգամ եթէ կասկածի երթայ, իր բոլոր խուզարկութիւններն 'ի դերեւ կը հանէ, բայց միայն մեր ընկերներէն մէկը չմնանէ։

—Գիտես որ այս անփորձ երիտասարդ Կիւլեօմը՝ մեր խոհարարուհիին քաղաքներէն խրատուելով սատիկ կասկածելի է։

—Արդարեւ. այս մասին խիստ սխալեցանք տոյն կինը մեր այրին մէջ բերելով, ուստի պէտք ենք հրաւիրել Կիւլեօմին, նոյնպէս կնոջ վրայ. վասն զի թէ որ ատոնցմէ մէկը վայրկեան մը ելլել թողունք, անշուշտ մէկէն հանդերձեալ աշխարհը կը տեսնենք։

Հենրիկոս խօսողներէն միայն խոտերու պարզ ցանկով մը հեռի ըլլալով բոլորը լսած էր, բայց փախչելն անկարելի էր՝ ոտքի ձայնէն մատնուելով իր մահը պիտի ընդունէր, ուստի նոյն տեղն անշարժ կեցաւ պատեհ առթի մը սպասելով. և դարձեալ խօսակցութիւնը շարունակուեցաւ այսպէս։

«Պէտք է երթամ ստուգել թէ՝ այս սրիկայ ծեր հրեայն տակաւին ինչու չ'եկաւ», այս ըսելով ելաւ։ Հենրիկոս վախնալով որ փայլակին կամ լուսնի լուսէն կը մատնուի, որ ժամանակ ժամանակ ամպերուն

մէջէն կ'ելլէր. խոհեմութիւն սեպեց՝ մեղմաբար գետնի վրայ պառկիլը։

Խումբին մէջէն մէկը դուրս ելլելու առեն երկրորդ մ'ալ անոր հետեւելով ըսաւ առաջնոյն. «Հաւասիկ մեր Ֆրեայն»։

Ստուգիւ անիկայ էր, երեք անգամ հազաց խիստ տկար կերպով, նոյնին պատասխանուեցաւ. յետոյ այս երկու դրամանենգները մացառներուն տակէն ելան՝ առանց Ֆենրիկոսը տեսնելու. և Ֆրեայն սաստիկ կշտամբեցին իր շատ ուշանալուն համար։

—Ղէկ, ինչպէս կ'ուզէք, այս սոսկալի օդին՝ շուն մը անգամ տուն էն դուրս չհամարձակիր ելլել. ինծի պէս ծեր մը ծոցը սառակով ինչպէս կրնայ դալու։

—Ձայն ծերունի, տալու չէք ահապարէր, իսկըսանալու համար միշտ աշխոյժ էք։

—Ոչ թանք, երեթանք, այդչափ ապերախտութիւն պէտք չէ Պարոնայք, կրկնեց Ֆրեայն, գիտէք ինչպէս անձս ձեզի ծառայելու համար վտանգի մէջ կը դնեմ։

—Ոչ թանք, չվիճենք Ֆրայիմ, պատասխանեց անոնցմէ մէկը, վերջին անգամի երկու հարիւր ռուբլի տօրին փոխարէն հարիւր հատ բերիք։

—Հարիւր, ստոյգ ոսկի տալ և փոխարէն ինչին մետաղ ստանալ որոնք մէկ ստակ չեն արժէր, պոռաց հրեայն։ Հաւասիկ յիսուն և շատ ալ է։

—Թշուառական Ֆրեայ, այս կերպով մեզի խաբեր կ'ուզես գոչեց միւս ընկերը՝ բարկութենէն ինքզինքը կորսնցուցած։ Երջապէս վէճը կռիւի փոխուելով աղմուկը շատցաւ և նոյն միջոցին Ֆենրիկոս արտորաց փախչելու։

Թէպէտ անոր փախչելու կէտին ձայն մը լսելով ետեւն ինկան, բայց գաղանի ոտնաձայն կարծելով

փոյթ չդրին։ Ենրիկոս շուտն ալ հատած երբոր քաղաքին դուռն հասաւ ետին նայեցաւ, և մարդ չը տեսնելով հանդարտեցաւ։ Նոյն ատեն լուսին ամպերէն ազատ սկսած էր իր լուսովը մահկանացուոց առաջնորդել։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Զարմանալի գիւտ։

Ենրիկոս փուլթաց իր պաշտպանին պատմելինչ որ իրեն պատահած էր. բայց ասիկայ որ զգօն և խելացի մարդ մ՚էր՝ արգիլեց անոր բան մը մէկուն չըսելու. և ինքն անձամբ քաղաքին ատենակալին երթալով բոլոր եղելութիւնը յայտնեց։

Ասիկայ որ ծանրակշիռ գործ մ՚էր՝ արդէն հասարակութեան մէջ ալ շատ շինծու դրամներ տեսնուած ըլլալով, կառավարութիւնը չնորհակալ եղաւ. և իսկոյն ոստիկանութեան գործակալն իր հետը բաւական զօրք առած այս նենգաւորը Ֆրեային ճամբան պաշարեց։

Ֆրայիմ՚ինքզինքը մէկէն զինուորներուն ձեռքը մատնուած տեսնելով շփոթեցաւ, և իր ընտանեաքն հանդերձ բանտ տարուեցան առանց լսելու մէկ դրացի մը. ուստի տան բոլոր անկիւնները քննուելով մառանի մը մէջ ահագին երկաթի արկղ մը գտնուեցաւ, որ բոլոր այս շինծու դրամներով լեցուն էր, որոնք քննութեան առնուելով շինծու ըլլալնին յայտնուեցաւ։

Ֆրեաւեալ օրն արշալուսոյ աւետարերն հանգիւ իր ընթացքն սկսեր էր՝ և տակաւին մարդիկ կը ննջէին քաղաքին մէջ. զօրաց գունդ մը Ֆրեայն լաւ մը կաշ

կանդած դէպ 'ի այս չարագործաց բնակարանն գա-
ցին. Լ՝ֆրայիմ որ կը ճանչնար այս տեղերը, առաջ-
նորդ եղած էր անոնց։

Մինչդեռ դրամահենգները կ'ըմպէին, կ'երգէին
և կը ծիծաղէին, յանկարծ իրենց սովորական ազդա-
նշանը լսեցին, որ երբեմն երիք անգամ սուլել էր,
ապշեցան։

"Այս ինչ ազդանշան . . . գոչեց Ֆերտինանտ,
մինչդեռ ամենքս ալ հոս ենք։

Նոյն միջոցին Վարդուհին, իր սովորականին հա-
մեմատ տրտուն, զատ աթոռով մէկ կողմ նստած էր,
երբոր ինքն ալ լսեց, սկսաւ աղօթել. "Ով սուրբ
կոյս, կ'լսէր մեղմ ձայնովը, հաճեցէք որ ազատա-
բարներ ըլլային։

Եւ նոյնպէս դաշնակաւորը։

"Ո՜հ, Երկինք . . . գթութեան հեղինակ,
Տեղն տուր ոգւոց իմ միայնակ.
Աշխեցին հառաչանք զիմ ըզսիրտ,
Տայէ աչ քո այսրէն ինձ հանգիստ։
—Ո՜ւմ, Երկինք . . . քո զաղբիւր բարութեան,
Օրվացն զոսպ սրտիս իմ դաժան.
Կաթեսցէ յիս ցօղ քո երկնային,
Եւ կեցիս գոհութեամբ վերստին։
—Թէ և ծով իմ մեղաց ալէկոծ
Վէրս եբաց 'ի սրտիս դառն 'ի խոց,
Դաժանեալ յիմ ջերմոց սարսաժամ,
Ո՜հ, չէ ինձ ներելի զի եւս կեսամ։
—Դայց յիշեալ զանպատուամ քոյին գութ,
Արդ անկեալ հայցեմ ոչ բարեգութ.
Հաճեսցս տալ հրաման ծագելոյ
Նշուլից հէք աստեղցս 'ի նորոյ։
—Դարձեալ կամք իմ լինեալ ոչ հայցեմ,

Ա՛յլ միայն Տէր իմ, կասէ՛ք քո վրեմ,
Տաղով լոկ ներշալ ինչ ջնորհաց,
Որով ժոյժ ունել ես մարթացայց։

—Ա՛յո դաւ է ինձ յոյժ անմարգել
Ա՛ր ընթեր հէք որբոցս չը լինել,
Ա՛երձ 'ի մուտքն կենաց թշուառ մօր,
Ո՛ր արդէն ուժաթափ կայ անզօր։

—Բա՛ւ լեցի, քեզ Ս՛երկինք . . . թողուլ զմեզ
Ա՛նջատեալ 'ի միմեանց աղէկէզ,
Յուսաբեկ իջանել 'ի դժոխս,
Ա՛ինչ 'ի գութ քոյին եմք քաջայոյս։

—Օ՛ի գուշակ խրթան ինչ զգամ ես.
Ի կեդրոն սրտի իմ յայտնապէս.
Թէ մերձ է Տէր սրբբել զաչաց ցօղ,
Յետ ռակաւ ինչ յուզմանց է յաջող։

Ա՛արդուհին բնութեան անվարձ երաժշտաց հետ իր խանթակաթ երգին ալ վերջ տալով՝ յանկարծ կարծես թէ նախազգացութենէ մը մղուած իր սրտէն տխուր գիշերն ջնջուելով ու ցերեկուան պաղպաջուն և պայծառ լոյսը նոյն տեղը գահ դրաւ, անմխիթարութիւնն հեռացաւ, և իր առաջին զուարթ կերպարանքն տուած՝ արիութիւնը նորէն իր ոսկրներուն մէջ մտաւ՝ նոյնպէս քաղցրահայեաց աչքերը երկինք յառած սիրտը կը բաբախէր և կը տենչար՝ իր երջանկութեան տարկայները ժամ մ' առաջ տեսնելու, եթէ կարելի է վայրկենի մը մէջ կամ թէ անմիջապէս . . . ։

Յետ առաջին զարմացման, բոլոր դրամանենգներն ըսին թէ՝ ուրիշ մէկը չէ բաց 'ի Ֆրեայէն, որ իրենց հետ գժտութիւն չունենալու համար՝ յիսուն լուիճն ալ եկած է վճարել, որ պնդած էր չտալու։ Ա՛արթէն և Պերտոլտ երդմնցած էին անոր որ այ-

Digitized by Google

նաւհետեւ փող մը անգամ չթողուն շահելու։

«Լ՛հ, անտարակոյս կ՚ըսէին, Ֆրայիմէն զատ ուրիշ մը չկրնար ըլլալ. վասն զի անկէ և մեզմէ զատ մէկը չճանչնար մեր այրը և մեր աղդանշանը. շուտ մը բանանք, չըլլայ որ դիտաւորութիւնը փոխելով, սուակով մէկ տեղ դառնայ երթայ»։

Դուրսէն կրկնուեցաւ աղդանշանը՝ և պատասխանելու չյապաղեցան, իսկոյն Պերտոլտ ստորեր կրեայ նեղանց քին մուտքը բանալու դնաց։ Ինքնաորները մացառներուն մէջ պահուած ըլլալով, Պերտոլտ միայն Ֆրայիմը տեսաւ։

«Պերտոլտ, եկուր, ըսաւ Ֆրանսայն. խօսք մը ունիմ քեզ՝ առանձին ըսել կ՚ուզէի, որ ներս մտնել չեմ համարձակիր, ինչոր որ քու քնկերակիցդ անտարակոյս ինծի դէմ զայրացած են»։

Պերտոլտ առանց երկիւղի յառաջացաւ և քանի մի զինուորի հրաման եղած էր որ զոյն կը գիտէին, մէկէն յափշտակելով թերանը գայլով մը (աղբեզ քէլէփէի) գոցեցին, առանց ձայն մը կրնալու հանելը մնացեալներն ալ ոտքինները դէպ ի յառաջ շտապեցին, և առաջին յարձակումին բոլորն ալ հնազանդեցան. ուստի ամէնքն ալ բռնելով կապեցին։

Պաշտօնակատը ջորս կողմի աչքէ անցուցանելով բաւական պահապան զօրք թողուց, և ինքը կապեալներն առնելով քաղաք դարձաւ։ Արդուհին ալ կապուած բերուեցաւ։

Ասն զի բնականապէս անոնց չարեաց գործակից կը համարուէր։ Բայց իր արտին մէջ ոչ երկիւղ և ոչ անհանգստութիւն կ՚զգար. վասն զի խիղճն որ և իցէ յանցանքի մը համար զինքը չէր կշտամբեր. վստահէր առ Յուսուած, նոյնպէս դատաստանական արդարութեան վրայ։ Կիսլեօմ որ արդէն Արդուհւոյն բարեպաշտական խրատներով զգաստացած էր աւելի նա-

խամեծար կը սեպէր ներկայ կրելիք պատիժը. քան թէ այն յանցաւորաց գործարանին մէջ մնալը, և ժողովուց առջեւ ինքզինքն առ Աստուած յանձնած՝ և աչուընեռովն առաքինի տիկինն շնորհակալ կ'ելլար որ իր անմահ հոգին երկնային դատապարտութենէն ազատած էր։

Գրամանենգներուն դատաստանը ոչ երկայն և ոչ խառնաշփոթ եղաւ, վասն զի Կիսլեօմ զղջումն յայտնեց այսպէս, որուն վրայ դատաւորներն յայտնապէս 'ի գութ շարժեցան։

"Արիտասարդութեան անխորհրդածութիւնը և անհանձար ընթացքս, ըսաւ, հայրական տունէն սարսափիր ըրին զիս, և մի լութենէ 'ի մոլութիւն ձգած, իրենց ընկերութեան մէջ չարագործ մ' ալ ես պիտի ըլլայի, բայց Աստուած գթացաւ ինծի. և երբոր Գերտինանտ և Պերտոլտ այս տիկինը բերին, զոր խիստ քառնաութեամբ յափշտակած էին, գոնապ Բայց անվրդով Արդուհին ցոյնելով, որ մէջերնին նստած էր, որուն բարեպաշտական խօսքերը զգաստացուցին զիս, Աստուծոյ երկիւղը և սէրը սրտիս մէջ արծարծելով։

—Արդարեւ ողորմելի Կիսլեօմ, աղաղակեց Պերտոլտ, այս կինը քեզի ապուշ ըրաւ, արդարութիւն է որ դուն ազատիս, ըսաւ ու բարձր ձայնով սկսան խնդալ։

Գահերէցը անոնց սաստիկ լռութիւն պատուիրելէն յետոյ, Արդուհւոյն յափշտակութեան վրայ սկսաւ հարցափորձել։

"Կը փութամ համառօտաբար պատմել ձեզ և ճշմարտութիւնն յայտնել, պատասխանեց Պերտոլտ, վասն զի միտք չունիմ տիկին մը դատապարտել։

"Խղճալի տիկին, Աստուծոյ շնորհքը՝ ազատութիւնդ քեզի մէ կրնամ դարձուցանել, ըսաւ դատաւոր

ը. արդեօք ոչչափ վշտանալու առիթներ ունեցած էք . . . և.

«Տէր իմ պատասխանեց Վարդուհին, համեստութեամբ, ստոյգ է որ վշտացայ՝ բայց երբ Աստուծոյ ներկայութիւնը մարդ իր աչաց առջեւ և սրտին մէջ ունենայ, և անմեղ ըլլալը կատարելապէս զգայ, առանց տրտնջանաց ամէն բանի կրնայ համբերել։ Իւ ապա յաւելցուց Վիլեմին նայելով։ Այս որ ջին մէջ միմիայն ուրախութիւնն՝ ասոր սրտին մէջ Աստուծոյ սէրը սրծածուելուն չնչին գործիք մը ըլլալս էր, շնորհակալ եմ Աստուծոյ որ գերութեան խաստութիւնը մեղմացուց՝ դժբաղդ Վիլեմին հոգին բարեպաշտական վարմունքներ ստանալը քանի կը տեսնէի սիրտս գոհ կ'ըլլար»։

Աստեղականներն անոր խօսուածքին քաղցրութենէն, երեսի յատակութենէն և մանաւանդ ազնիւ հոգւոյն ամբծութենէն յափշտակուած՝ կը փափաքէին իր տնունը ճանչնալ. նոյնպէս ասկէ յառաջ գլխէն անցած դէպքերը։ Վարդուհին՝ որ առաջարկութիւններին հաճութեամբ ընդունելով համառօտաբար բոլորը պատմեց։

«Ի՞նչպէս, ըսաւ դատաւորը. Լաֆօրէզ կը կոչուիք . . . ստուգիւ այս երիտասարդ տղու մը անունն է. որ ամենէն յառաջ դրամանենգներուն վրայ կառավարութեան ասիկայ լուր տուաւ։ Հաւասիկ եղելութեան արձանագիրը, և ստորագրութիւնը. Ֆենրիկոս որդի Լաֆօրէզի. ինքը պաշտօնական մը տղայ եմ, ըսաւ, և իր մայրը վարդուհի անունով։

—Փառք քեզ Աստուած . . . , ահ, այս իմ զաւակս է . . . » գոչեց Վարդուհին նուաղելու մօտ։ Ամէնն աթոռի մը վրայ նստեցնելու փութացին. և բոլոր հանդիսականք սաստիկ շարժեցան այս խղճա-

Digitized by Google

հար տեսարանին վրայ, նոյն իսկ դրամանենգներն անգամ։

«Ուրեմն իրաւունք ունէր երբ անդադար կը կրկնէր թէ՝ Ստուած զինքը երեսէ պիտի չթողուն, ան ատեն ըսաւ Մարթէն իր չարեաց գործակիցներուն, որոնք նշանացի այր պատասխանեցին։

Նոյն վայրկենին գահերէցն ապաստաւոր մը կանչեց և անոր ականջին բան մը խօսելէն ետք ապաստաւորը շուտով դուրս ելաւ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Աստուծոյ յուսացող ծառայներն այս կենաց մէջ ալ փառաւոր կը պսակուին։

Վարդուհին այս ուրախառիթ լուրին պատճառած յուզմունքէն կամաց կամաց սթափուելով՝ հրաման խնդրեց՝ իր զաւակն երթալ ընդ գրկելու. բայց գահերցեցեն ազաչեց դեռ քիչ մ'ալ համբերել և պարտաւորեցաւ հնազանդիլ։

Այս առաքինի տիկինը՝ իր տղան գտնելուն սաստիկ ուրախացած միջոցին, աղջկանը մասին ողջ ըլլալուն խօսք մը չլսելով սիրտն աղեկէզ անձկութեամբ լեցուած՝ իր այս ուրախութիւնը կընդմիջէր։

Պառորդ մը հազիւ անցած էր՝ սպասաւորը բարեսեսիլ երիտասարդի մը հետ ընկերացած ետ դարձաւ։ Գահերէցն ազնուութեամբ մը ըսաւ, «Հենրիկոս Լաֆորէզեան, մեծ եկէք»։

Երկու հանդիսակաց պատկերներ մէկզմէկ տեսան, մէկը՝ ծաղկեալ դարնան, մէկալը՝ թարշամած աշնան ցոյցն ունէր. սակայն երկուքն ալ բնութեան աքանչելիքն էին։ Հենրիկոս շփոթած և նախազգա-

Digitized by Google

ցուԹեամբ տոգորուած՝ չէր գիտեր իր աչուընեռուն շողացողը երանգ կամ ստուերէ, վասն որոյ հազիւ կը համարձակէր իր նայուածքը ուղղելու այս վայելչադէմ օտարական կնոջ վրայ. Թէպէտ անոր կերպարանքը իրեն ծանօթ կերեւէր, իսկ Թուխ մազերը անոր տարիքին վրայ քօղ և ոտուէր ձգելովը այս անյայտ նշաններէն չէր կրնար ճանչնալ, որ իրենց փափաքած մայրն է։ Նոյնպէս Պարդուհին հաւատալու կ'երկմտէր որ իրապէս իր Ֆենրիկոս զաւակն ըլլայ, և ակնպիշ լաւ մը դիտելէն յետոյ ճանչնալ սկսաւ, և դողդոջուն ձայնով մը. «Ա՜հ, դուք էք... իմ սիրելի զաւակս. և քու մայրդ խիստ երջանիկ է վերջապէս գտնելուն». և կարկառեց ձեռուընները որ բազկացը մէջ առնու։ Ֆենրիկոս ձայնէն բոլորովին ապահովուած՝ մէկէն դուչեց ոտուընեռուն խոնարհելով, սիրելի Այր իմ, ահա Հրկինք, քու սքանչելիքներդ անքննելի են։ Հրկուքն ալ Թողուտուին որ իրենց աչուընեռէն ուրախութեան մարգարիտները ուզածին չափ դուրս ցայտին. և այնպէս Այր ուտղայ պլլուած՝ ու ինքզինքն անմահութեան եզերը կը կարծէին։

Այս սրտառուչ տեսարանին վրայ, ոչ հանդիսականք, ոչ դատաւորներն, և ոչ նոյն իսկ ամբաստանեալներէն, մէկն անգամ կարող եղան իրենց արտասուքնին։ Երջապէս Այրթէն, լուԹիւնը ընդհատելով ըսաւ, «Որչափ երջանիկ կ'ըլլայինք՝ մեր կենաց շրջանն ալ այս կնոջ պէս հոլովէինք, նոյնպէս իր կատարեալ բարեպաշտութեան մէկ նշոյլը Թէոր մեր վրայ գտնուէր, գոնէ այս Թշուառութեան մէջ վերջին տանջանաց և դատապարտութեան սպառնալիքները ակէ կրել չէինք սարտաւորուեր. ընդհակառակն 'ի ժամանակին վիճակնուս գոհ ջրլալով մեր կենաց երջանկութիւնն անարժան հնարքներով հայթայթել ուզեցինք։

Digitized by Google

Գահերէցն այս խօսքերը լսելով ամբաստանելոց, անուշաւ բայց սրտառուչ և հայրական խրատ մը տուաւ, իրենց հոգւոյն զղջման զգացողութիւնը բանալու, և յաջողեցաւ իսկ։ Այսպէս ահա առաքինութեան գերագոյն կերպարանքը կարծր սրտերն անգամ կը կակղեցնէ և իրենց դարձն յուղղութիւն կը պատրաստէ։

Ուրիշ տեսարան մ՚ալ, ըստ նմին օրինակի սրբոտաշարժ հանդիսականաց, ներկայացաւ։ Կիլեօմ որ արդէն զգաստացած էր ամբաստանելոց կարգէն դուրս ելելով Վարդուհւոյն առջեւ ծունկի վրայ եկաւ, և աղաչելով մը ըսաւ որ իւր օրհնութիւնը շնորհէ։

"Կը յուսամ պիտի չմերժէք՝ իմ անկեղծ զղջումը, ւ բարեպաշտ և ակնածելի տիկին, գոչեց հեծեծելով։ Խնդրէ, քեզ երկրորդ մայրս անուանել կը համարձակիմ, որն որ թշուառ մը հոգւոյ ապականութենէն ազատեցիք, որ հիմայ վերջին կէտիս մէջ ձեր օրհնութիւնով պարարտացած՝ հանդարտ սրտով այն պատիժն ընդունելու պատրաստուիմ, որ արդարութիւնն ինծի համար ալ պիտի սահմանէ. և իրօք պատժուելու արժանի եմ, որովհետեւ ինծի յանցաւոր ընող դժբաղդութեան մասնակից եղած եմ»։

Վարդուհին գոհովալեր մոր պէս այն աղեկէզ ձայնէն խանդաղատուած՝ ձեռուընտրն այս երիտասարդ մարդուն գլխուն վրայ դնելով մեղմ ձայնիւ համառօտ բայց եռանդալից աղօթք մը ըրաւ։ Ուստի Կիլեօմ խաղաղ խղճով աչքերն երկինք ուղղած կրկնեց բարձրաձայն գոչումով. "Հա, Աստուած իմ . . . շնորհակալ եմ քեզի որ այս մրրկածուփ կենացս շաւղին մէջ գորովագութ և բարեպաշտ սրտի տէր հրեշտակ մը մեզի խրկեցիր»։ և խօսքը վերջացուցած չի տեղը դարձաւ։

Digitized by Google

«Տիկին, ըսաւ գահերէցը, դատաւորը ձեր ազատութիւնը վճռեց, ու հիմայ ուր որ կ'ուզէք կրնաք երթալ. բայց խօսք մը ունիմ ձեզի ըսելու, դեռ քաղքէն չմեկնած՝ կ'աղաչեմ քովս հանդիպիք. ուրեմն կը խոստանա՞ք։

—Այո՛, շատ սիրով, պատասխանեց Վարդուհին, և յետոյ շնորհակալութեան և մնաք բարեւի համար գլուխը խոնարհելով և Հենրիկոսին ձեռքը բռնած՝ թողուց ատեանը։ Ամբան դողդոջուն ձայնով իրեն առաջին խօսքն եղաւ այս հարցումը, «Հենրիկոս քրոջդ վայ ինչ լուրեր ունիք»։

—Այո՛, ինձմէ աւելի երջանիկ է, պատասխանեց Հենրիկոս. բարեսիրտ տերանց քով երջանիկ կեանք մը կը վարէ։

—Հա՞ կը բնակի . . . շուտ մը երթանք անիկայ ալ տեսնելու, և գրկելով սեղմեմ կուրծքիս . . . շատ և շատ տարիներ կայ որ կորսնցուցած եմ»։

Այն միջոցին, Հենրիկոս իր քրոջը ինչ որ կը պատշաճէր պատմելէն յետոյ, իւր պաշտպանին տունն առաջնորդեց։ Այս ազնուական մարդը խիստ շնորհալի կերպով հիւրընկալեց։ Վարդուհին փոխադարձաբար թէ իր տղուն հայրական խնամք տանելուն և թէ զինքը ազնուաբար ընդունելուն շնորհակալ եղաւ։

Այր ու տղայ այնչափ առարկայներ ունէին իրարու պատմելու՝ որ անոյշ քնոյ հրաւէրին չէին կրնար զիջանիլ, մինչ զի գիշերային իշխանութեան կէս զօրութիւնն սպառած հաղիւ անկողին մտան։ Սակայն առաւօտեան գալուստը աւետող թռչնոց մռմունջներն երկուքն ալ արթնցուց՝ բերկրութիւն ճաշակորդութիւնն ընելու։

Հենրիկոս, իր բարերարէն հրաման առած՝ ուրախութեամբ ուղեւորութեան պատրաստութիւն

Digitized by Google

ներն աւարտելով, նախ Պ. Գահերէցին տունը երթալու չմոռցան։

«Ա՛զնիւ տիկին, հաւատարիմ էք ձեր խոստմանը, ըսաւ անոր այս ուղնուազարմ մարդը, հրամայեցէք. ուրախ եմ որ միատեղ նախաճաշիկ ընելու բարեբաղդ գտնուեցայ»։ Այսպէս կարգը սուրճին եկած միջոցին, յաւելցուց ըսելով։

«Գիտէք որ մահը՝ առանց աչառելու իր հարուածը հաւասար կը բաժնէ, այս ցաւալի հարուածէն բաժին մ՚ալ կողակցիս տալով իր գարուն հասակին մէջ առանց խնայելու գերեզման գլորեց, ուստի որք թողած մանկտեսացը խնամածու մը կը պակսի իբրեւ գորովալիր մայր տան մէջ զանոնք խնամելու. որ եթէ այս պաշտօնը վրադ առնուլ զիջանիք, ստուգիւ ինձի մեծ ծառայութիւն ըրած կ՚ըլլաք։

—Շատ շնորհակալութեամբ կրնայի ընդունել, պատասխանեց Վարդուհին, թէպէտ կրթելու քիչ մը աջողակութիւն ունենայի, վասն զի պարզ գիւղացի մ՚եմ ես, և հետեւաբար անարժան այդ պատուաւոր պաշտօնին։

—Սիրելի տիկին, այս բանիս վրայ հոգ մի ընէք. կրկնեց գահերէցն, արտաքին կրթութիւններու համար իրենց պէտք եղած վարժապետներ և վարժապետուհիներ կրնամ վարձել, բայց ձեզի պէս հազուագիւտ հանգամանքներով մէկն անկարելի է գտնել, որ կարող ըլլայ անոնց միտքը աստուծոյ սիրոյն և երկիւղին մէջ մշակելու. վասն զի սրտով քանթէ մտքով եղած կրթութիւնը՝ միւս ուսմունքներէն աւելի կը գերազանցէ իմքովս։ Գոնք որ հաւատոյ և առաքինութեան շաւղին մէջ վերահաստատել կարող եղաք գրամանենգ մը՝ այն Կիլեօմը, որուն հոգին արդէն եղծեալ էր. շատ լրաւամբք հեղ և գիւրանալց աղայք ալ կը կարենայք կրթելու։

Digitized by Google

Վարդուհին. տեսնելով որ պատճառելու տեղ չթողուց՝ և անոր կամաց բարի առաջարկութիւնը շնորհակալութեամբ ստիպուեցաւ ընդունիլ, խընդրեց որ իրեն թոյլ տուութիւն ընէ՝ իր սիրելի Արիամն երթալ տեսնելու, եւ թէ կարելի է ժամանակ մը՝ որ նախ իր մայրական անյագ սէրը գոհ ընելով այնպէս վերադառնայ։

"Հ, դուստր մ՝ալ ունիք, և ուր է՞», հարցուց գահերէցը։

Ինն ատեն Վարդուհին, իր կենաց մէջ տեղի ունեցած դէպքերուն երեւելի մասերը պատմեց՝ որոց խիստ հաճութեամբ ունկնդիր եղաւ։

Երբոր խօսքը վերջացուց, գահերէցը ըսաւ ան ատեն, "Ընտարակոյս աղջիկդ ալ ձեզի նման բարեպաշտ և խոհեմ մէկը պիտի ըլլայ, ուստի մեծ յոժարութեամբ տանս մէջ բնակիլը կ՚ընդունիմ։ Բայց սակայն ներկայ ուղեւորութիւննիդ ոտքով չեմ ուզեր ընէք. թէ որ իմ դիտաւորութեանս զիջանիք վարը կաւքս միայն հղամանի կ՚ըսպասէ՝ շուտ մը դէպ՝ի ձեր սիրասուն աղջկան քով տանելու»։

Վարդուհին ըռութեամբ՝ Աստուծոյ անքաւ ողորմութեանը շնորհակալ ըլլալէն յետոյ, ակնագործութեամբ գահերէցին ալ իրենց երախտագիտական յարգանքը նուիրելով կառքը մտան։

Մինչդեռ երկնից ակը՝ իր կէս շրջանը կատարած էր, չորս գեղեցիկ ձիերէ լծուած փառաւոր կառք մը դեղավառաւ Պ. Վ իլլեօմին դրան առջեւ կեցաւ. իսկոյն Հենրիոս վար ցատկելով իր մայրը քաղաքակեալ կառքին մէջ թողուց, որպէս զի չափազանց ուրախութիւնով չըլլայ որ իր քոյրը վնասի։

Ինն միջոցին Արիամ, Պ. Վ իլլեօմին տղայոց հետ պատուհանը կը գտնուէր, երբ տեսաւ որ Հենրիկոս անանկ կառքէ մը վար կ՚իջնէ որուն պերճ և

մաքուր հագուած մարդ մը եռանդեամբ կը ծառայէր, Աղօրն այս տեսակ փառաւոր գալստեան վրայ սաստիկ զարմացած կը կարծէր թէ երազ կը տեսնէ. Հենրիկոս անոր ժամանակ չթողելով մէկէն սենեակը մտաւ. «Մարիամ, սիրելի քոյրս», ըսելով և անսովոր շարժումով վիզը պլլուեցաւ. և այնպէս քանի մը վայրկեան մնաց՝ առանց ուրիշ բառ մը խօսիլ կարողանալու։

Այս ինչ հանելուկ է, Հենրիկոս, հարցուց քոյրը, որ ես չկրցայ լուծել մինթէ բաղդը մէկէն ի մէկ այդքան մեծցուց քեզի քառաձի շքեղ կառք մը և ոսկեհիւս ժապաւէններով սպասաւոր մը ունենալու չափ։

Ահ, կարճ խօսելու համար, սիթափելով պատասխանեց Հենրիկոս. Ստուած որուն անունը օրհնեալ ըլլայ, կը համարձակիմ մինչեւ անգամ աշխարհիս երջանկութեան վիճակողներէն աւելի գերազանց երջանիկ եմ ըսելու։ Կը տեսնես, այս կառքը... մեր ամենապատուական գանձը իր մէջը կը բովանդակէ. ահա՛ իրօք քեզ հանելուկ մը՝ որն որ լուծելու համար քաջու թեան կը կարօտի։

—Ա՛խ... կրկնեց Մարիամ այլագունած, ա՛խ է... Հենրիկոս, սիրելի եղբայր իմ, սրդեօք կարելի՞ է, բայց ինչ կ՚ըսեմ, Երկնից համար անկարելի բան մը չկայ։

—Ա՛յս, ճիշտ էր, իրեն հաստատ յոյս ունեցողներուն փափաքը՝ թէ որ սուրբ է, ուշ կամ կանուխ կը կարդէ։ Հաւատիկ նոյն ինքը», յաւելցուց Հենրիկոս կառքին կիսաբաց դուռը ցուցնելով ուր մայրը անհամբեր սրտով իրենց գալուստը կը սպասէր։ Մարիամ ինքզինքէն ելած մէկէն վար ցատկելով գնաց իր սիրելի մօրը կուրծքին վրայ ինկաւ. և բաւական վայրկեաններ պէտք եղաւ սիթափելու,

նոյն վիճակն ունեցաւ մայրն ալ, այնպէս փարած որ մէկ մէկու կուրծքը՝ երկար ատեն ուրախութեան ինքնաբուր արտասուօք պարտաւորեցան թրջել։

Այսպէս պահ մը անցնելէն ետեւ՝ Արիամ աչուքները բանալով առաջին տեսածը մայրը եղաւ. «սիրելի մայր, ազնիւ մայր աղաղակեց, ահ, քանի քանի ոնցեալին մէջ գլտորեցան, իսկ դուք ոչ անգութ ձեռքով մեզմէ վարագուրեցաք, միթէ հաւատամ, թէ աչուքներուս առջեւ շողացողը դուք էք։ Այր . . . ։

Ընդիւ Վարդուհին իր ստէպ համբոյրներով կը պատասխանէր, և ինչ ընելիքը չէր գիտեր. հաղիւ հազ կարողացաւ՝ լռութեանքօղը մէկդի առած պատասխանել, «ես եմ, քու մայրդ, անպուգական իմ Արիամ»։ Այս լսելով երկուքն ալ կուրծքին վրայ սեղմեց՝ և աչքերը վեր վերցուցեալով, գոչեց, «Հրկինք, Աստուած իմ. . . շնորհակալեմ. . . բիւր անգամ շնորհակալ, որ քեզմէ զատ ինձ երջանիկ ընող զաւակներս՝ անգամ մ՚ալ երկրիս վրայ տեսանելու սուրբ մխիթարութիւնը պարգեւեցիր»։

Եւ իրարմէ բաժնուելու համար ժամեր ու վայրկեաններ պէտք եղան։

ԳԱՌԽ ԾԵ.

Քանզի տեր Աստուած արեւ ու վահան է. Տէրը շնորհք ու փառք պիտի տայ, եւ բարութիւն մը պիտի չպակսեցնէ ուղղութեամբ քայլողներուն։ ՍԱՂՄՈՍ ՁԴ.

Միւս օրը մինչդեռ առաւօտեան արշալուսոյ մօտակայ գալուստը կ՚աւետէր մեղմ զեփիւռ մը, և նիրհող բնութեան թմբիրութիւնը կ՚սկսէր փարա-

Digitized by Google

տել, Մարիամ իր մօրը և եղբօրը հետ ընկերացած իրենց բարերարներուն հրաժարական ողջոյնը տուաւ և արտասուքն իր աշխոյժ երախտագիտութիւնը՝ որ ինչպէս գլխաւոր առաքինութեանց մէկն է իւր սրտին նման պարտերու։ Նոր մեկնելուն վրայ ամբողջ ընտանիքը սաստիկ կը մարմնջէր, վասն զի իր սքանչելի յատկութիւնները զինքը ամէնուն առջեւ սիրելի ըրած էին. բայց խորհելով որ անիկայ ուելի մեծ երջանկութիւն պիտի վայելէ իր բարեպաշտ և սիրուն մօրը քով, և ասով կը միխիթարուէին։ Երջապէս մեկնեցաւ՝ իրեն հետ Ալիսեմին բոլոր ընտանեաց յարգն ու օրհնութիւնները տանելով։

Ալարդուհին, գահերէցին տանը մէջ իբրև խնամածու անոր սրդուոց՝ մօր մը պատշաճ պարտաւորութիւնները կը կատարէր, և շատ բարիքներ արդիւնաւորեց. Մարիամ ալ իր բոլոր կարողութեամբը կ'օգներ անոր։ Տղայքը քիչ ժամանակի մէջ Ալարդուհին իբրև իրենց հարազատ մայրը և Մարիամն իբրև հարազատ քոյր սկսան սիրել։

Գահերէցն իր սրամտութեամբը դիտելով՝ որ Մարիամ Ներսի դին ուսման աշխոյժ փափաք մը ունի, հրաման տուաւ որ դասընկեր ըլլայ իր զաւակացը, որոնց յաջողակ վարժապետներ պաշտօն ունէին կրթելու։

Հենրիկոս իր նախկին տիրոջը քով բնակեցաւ։ Ոչ իբրեւ տղայ մը այլ իբրև աշակերտ դեղագործի և քանի մը տարիէ ետքը Պ. Ալիսեմին վաճառատան մէջ դեղագործի օգնական եղաւ։

Բայց ուելի երջանիկ տպաղայ մը՝ մեր երկուորրոց Ընտուած պատրաստած էր։ Լուստի Մարիամ քառամեայ տարբերին հետ նշանաւոր գեղ եւ վայելչութիւն մը առած. և հետեւաբար սքանչելի բնաւորութեամբը և ընտիր կրթութեամբը իր մե-

Digitized by Google

ծանձն բարերարին ուշադրութիւնը կը գրաւէր, նոյնպէս վարժապետները անոր ուսման մէջ ըրած յառաջադիմութիւնը ուրախութեամբ կը պատմէին այնպէս որ գահերէցը անկասկած՝ անոր ամուսնութեան ձեռք կարկառեց։

Այս արժանաւոր անձը հաստատ համոզուած էր՝ որ երբ օրիորդ մը տոհմի ազնուականութիւն ունի և անոր հետ թէոր համեստութիւն և կատարեալ կրթութիւն չունի, ընդունայն է և չկրնար իր զաւակներուն ճշմարիտ մայր ըլլալ։

Պարիսմ իր բարերարին առաջարկութիւնը ընդունեց ոչ միայն հարստութեանը համար՝ այլ անոր կատարեալ Աստուածպաշտութեանը վրայ գմայլած, ուստի հարսանեաց հանդէսին տեղի ունեցած օրը՝ շատ երեւելի մարդիկներ հրաւիրուած ըլլալով ամէնքն անոր ուրախակից ըլլալու համար փութացեր էին։ Մինչդեռ իր հաւատարիմ բարեկամներուն կողմէն հարսանեաց ճառեր կը խօսուէր, որոնց գահերէցը շնորհակալ ըլլալով, յաւելցուց։

"Բաղդ ըսուածն ըստ իս Աստուծոյ անունն է. որ ինչպէս սուրբ գիրքն ալ կըսէ». "Տէրը կ'աղքատացուներ և Տէրը կը մեծցուներ, ամբարտաւաններն ալ կը խոնարհեցնէ»։

Ուստի անոնք՝ որոնք տղքատ ծնած են բայց առաքինի և Աստուծոյ սիրտուիրանացը շաւղին մէջէն երթալու միշտ հետամուտ, միթէ պէտք չենք քաջալերել, նոյնը ուրիշներու օրինակ ընելու համար։ Այս տեսակ առաքինի աղքատները ամէն կողմէ քաջալերելու և վարձատրելու համար խորհելը անգամ առաքինութիւն է կըսէ Սաղմոսը. "Երանի անոր որ աղքատին հոգ կը տանի. Նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զանիկայ. և այլն»։ Երբ սիրելի Պարոնայք, գոնէ Աստուծոյ աչը հարստութեան բարձ-

բացուցած երիտասարդները իրենց պարտք սեպէին ամուսնութեան ընկեր որոշելու համար՝ առաքինի և համեստ աղքատուհի մը գտնել. քան թէ ազահութեամբ մեծերու դուռներ զարնելով անոր հարստութեանը ամուսնանալ. և այս օրիորդին հետ արդարոց տէր ըլլալու համար սուրբ սիրով ապրիլ էր, այլ մեստաղ մեստաղի վրայ դիզելու մէկ պատրուակ մը, և հետեւաբար նոյն ամուսնութիւնը սուրբ չը կրնար ըլլալ։ Սրբեցին այս ցաւալի անխոհեմութեան վհին մէջ օրիորդներն ալ ինքզինքին կը գահավիժեն՝ փոխանակ տղու մը սրտի կրթութիւնը փնտռելու միայն մտքի և առ երեւոյթ շարժուձեւերէն խաբուածմէկէն՝ ի մէկ կը սիրահարին՝ ի վիշտ ապագային. բաւական է որ իրենց ընտրած հարուստ ըլլայ։

Աղաքինի Գահերէցը՝ աղքատ Մարիամին իրեն կողակից ընտրելովը արդեամբ ալ երջանկութեան համը կզգար, և Աստուծոյ շնորհքը՝ երկար տարիներ անտրտում կեանք վարելու համար, այս ընտանեաց ընկերացաւ։

Կիլլեսմին անկեղծ փոփոխումը զինքը Աստուածային և մարդկութեան թողութեան արժանացուց, վասն զի գահերէցը, իր երիտասարդ հասակին և զղջմանը նկատմամբ մնհուան չդատապարտեց. այլ երկու տարի պարզ բանտարգելութիւնով արդարութիւնը գոհ ըրաւ։ Մինչդեռ իրեն չարեաց գործակիցները կարծրացած յանցանաց մէջ կորսուեցան, նոյնպէս ծերունի Սֆրայիմը դատն և ամօթալից պատուհասով փչեց իր հոգին։

Սրբոր կիլլեսմ իր աղատութիւնը ստացաւ, գահերէցը Պարդուհէոյն խրատովը իր ծառայութեանը մէջ ընդունեց քարտուղարի պաշտօնով. վասն զի աքանչելի գիր մը ունէր։ Պէտք է աղէկ վարուիլ կըսէր գահերէցը, արդարութեան մատնուած յան-

Digitized by Google

ցաւորի մը հետ, երբ որ իր պատիժը կրելով և անկեղծ զղջումն ալ անոր հետեւի. թէ որ չօգնենք իր նոր ստացած առաքինութեան, խոչնդոտ կ'ըլլայ դատարկութիւնը և հացի կարօտութիւնը, որն որ շատ մոլութիւններ ասկէ ծնունդ առած են։

Այս մարդասէր և արդար զգացմունքները՝ առանց վարձատրութեան չմնացին, վասն զի Պիլեոմ ոչ միայն առաքինի և պատուաւոր կեանք մը անցուց, այլ և խիստ հաւատարիմ օգնական եղաւ իր բազմաղքաղ ուրոջը. այնպէս որ այս պատկառելի գահեղէցը՝ հուսկ յետոյ իր բոլոր հոգերը անոր վրայ թողլով թէ մարմնաւոր հանգստութիւն վայելելու և թէ հոգեւոր պարտքերը լիուլի գոհ ընելու կարող եղաւ։

Քանի մը խօսք եւս:

Մրդ, սիրելի ընթերցողք, պատմութեան զարդ եղող բոլոր անձինք թէպէտ այս փոփոխական կեանց մէջ շատ փորձութիւններու մաղէն անցած՝ բայց Աստուծոյ վրայ ունեցած իրենց հաստատ յոյսերնին վերջապէս երջանկութեան պսակ բոլորեց գլուխնին։ Իւ այս հաստատ յոյսերնին անփոփոխ մնաց նաեւ հանգստութեան մէջ ալ. վասն զի նպատակնին հանդերձեալին փառաց մասնակցիլ էր։

Ուստի, ծաղկահատակ եղբարք իմ. զուարճանալու համար լոկ կարդալով չ'անցնինք, այլ ուրիշին կրած նեղութիւնէն օգուտ մը քաղելու ջանք ընենք։ Նախանամութիւնը՝ թէ որ մեզի ալ այս օրինակ տաղտուկ և դժուարին փորձերու ներքեւ երբ ձըգելու հաճի, առանց յուսահատելու նոյն հաստատ յուսով Աստուծոյ ողորմութեան տպաւինող ՀԵՆ

րիկոսին և Մարիամին պատմութիւնը յիշելով քա-
ջալերուինք. որոնք չափազանց էքաւորութեան, ցա-
ւոց և տանջանաց մէջ համբերութիւնը իրենց ա-
ռաջնորդ առած յուսով կապրէին, Աստուած յու-
սոյ այս կենաց մէջ ալ երեսէ չձգեց, երջանկութ-
անցուներելու համար այլ շատ օրեր ալ պարգեւեց։

Լաւ կը յարմարի, հեղինակի մը այն խօսքը, թէ՝
"դժբաղդութիւնը այս աշխարհիս մ՚է ով որ այս
դպոցը գացած չէ, բան մ՚ալ չէ սորված։ Բայց
աւա՜ղ, կուրութեամբ շլացած մարդու մը միտքը
ու հոգւոյն աչքը՝ ոչ օրինաւորն և ոչ ալ իրաց բուն
ճշմարիտ կերպարանքը դիւրաւ կրնայ աներեւել. մանա-
ւանդ թէ որչափ չարութեան անդունդը իջնայ՝ այն-
չափ աւելի իրեն մթին ու խաւարին կ՚երեւայ, և
իր ժամանակաւոր երջանկութիւնն ու աղատու-
թիւնը գտած երեւակայելու ատեն՝ մէկէն՚ի մէկ մըշ-
տընջենաւորն ալ կորսնցնելու յուսահատութեան
մէջ կ՚ինկնայ։

Այս վաղանցուկ կենաց կրկէսին մէջ հաստա-
տուն բան մը չկայ, և ամեն բան հաղար փոփոխու-
թեան ներքեւ կ՚ինկնայ։ Անիսհեմ բաղդաւորը այս
անհաստատութիւնէն կը պարտաւորի երկիւղ կրել,
իսկ թշուառը հոն յուսոյ առիթ մը կը գտնէ, օր
մը իր երջանկութեան աստղը ծագելուն։ Թէ որ
խոհեմութեան հարցնենք՝ կը պատասխանէ որ Աս-
տուած Մարգարէին բերնով տված պատգամին հե-
տեւինք. "Տիրոջը յանձնէ քու հոգերդ, ու անի-
կայ կը՝ կերակրէ քեզի, և արդարներուն սասանու-
թիւն չտար։

Մինչայն մէկ վիճակ մը կայ խիստ վատաբաղդ,
որուն համար ամէն ինչ էքութեան անդունդը խոր-
բասուզուած է, թէ ներկայն և թէ ապառնին. ա-
նոնց համար բոլոր երջանկութեան և մաքուր ուրա-

Digitized by Google

խուԹեան աղբիւրակները յաւիտեան ցամքած են. անոնք ամբարիշտներն են, որոնց կարծրացած սիրտերը կը մերժեն զղջման բոլոր ազդեցուԹիւնը՝ որ ապաշխարուԹեան գարունն է։

Բանի որ ինքզինքիս արժանաւոր կ'զգանք լաւագոյն վիճակի մը՝ բոլոր վստահուԹեամբ աչուընիս կրնանք բարձրացունել դէպ 'ի մեր երկնաւոր Հայրը, որուն վիճիռները երբեմն անհասանելի են, բայց միշտ յանսահման իմաստուն, և ամենակարողուԹիւնը և անեղը ողորմուԹիւնը կարող են ակնթարթի մը մէջ զմեզ՝ մարդկային թշուառուԹեան անդունդէն երջանկուԹեան կապարը տանելու . . . ։

Digitized by Google

ՑԱՆԿ

		Թիւ.
ԳԼՈՒԽ Ա.	Հենրիկոս եւ Մարիամ կը գտնեն իրենց հայրը.	5
» Բ.	Դժբաղդ տղայք.	15
» Գ.	Զու. իրենց հայրենի գիւղէն.	22
» Դ.	Պատահարք ուղեւորութեան.	32
» Ե.	Անտառին մէջ անցուցած գիշեր մը.	39
» Զ.	Ի՞նչ բան պատահեցաւ վարդուհւոյն իր տղայքը թող տալէն յետոյ.	48
» Է.	Տղայք գուր տեղը կը փնտռեն իրենց մայրը.	57
» Ը.	Ոճիրագործին դատանիքը.	62
» Թ.	Նոր ուղեւորութիւն.	71
» Ժ.	Բարի Աննային հիւանդութիւնը բարեգործութիւնը եւ վարձատրեալ սէր.	76
» ԺԱ.	Վիյեոմ դեղավաճառը,	81
» ԺԲ.	Հենրիկոս եւ Մարիամ մէկմէկէ ստիպուեցան բաժնուելու.	85
» ԺԳ.	Զարմանալի գիւտ.	90
» ԺԴ.	Առաքինութեան վարձատրութիւնը.	96
» ԺԵ.	Ուղղութեամբ գացողին Աստուծոյ փառքը կը հատնի:	103

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

This book should be returned to the Library on or before the last date stamped below.

A fine is incurred by retaining it beyond the specified time.

Please return promptly.

Digitized by Google

Digitized by Google